Նախապատրաստված եղեք միշտ

Երկուշաբթի, 1 օգոստոսի, 2011թ, ժ 23:00

Իմ սիրելի աղջիկ, հիմա դու վերջապես միացած ես Ինձ: Հիմա կհասկանաս մարդկանց օգնելու հրատապությունը՝ բացելու նրանց աչքերը, որպեսզի նրանք կարողանան դարձի գալ Իմ Հոր Թագավորություն մտնելու համար:

Այնքան շատ **մարդիկ են այսօր ծաղրում Ինձ:** Երբ Իմ անունը նշվում է հավատացողների կողմից հարգանքով, **նրանց նույնպես ծաղրում են, ծանակում և ծիծաղում նրանց վրա:** Հետո կան այնպիսիք, ովքեր զայրանում են, երբ նրանց մոտ խոսում են Իմ մասին: Կան նաև այնպիսիք, ովքեր **ոչ միայն ժխտում են Ինձ, այլև ատում են Ինձ:** Նախկինում երբեք այդքան շատ մարդիկ իրենց մեջքը չեն շրջել հավատի հանդեպ, ինչպես այժմ:

Այնքան շատ հոգիներ են ընտրում վանել ցանկացած միտք Իմ կամ Իմ Հավիտենական Հոր գոյության մասին: Նրանք մտածում են, որ նշանակություն չունի, իրենք հավատաում են թե ոչ, և որ դա իրենց կյանքին չի վերաբերում:

Շատերը, ովքեր գաղջ են իրենց հավատի մեջ, անլուրջ կերպով վանում են Իմ ուսուցումները, որոնց նրանք սոսկ շուրթերով են ծառայում: Նրանք հավատացած են, որ հետագայում բավականին ժամանակ կունենան կյանքում, որ ժամանակ հատկացնեն իրենց հավատի համար: Սա հատկապես ճշմարիտ է ավելի երիտասարդ սերնդի համար, ովքեր կարծում են, թե իրենց **հավատի համար դեռևս չպետք է անհանգստանալ:** Նրանք հավատացած են, թե իրենց առջևում շատ տարիներ ունեն Ինձ՝ իրենց սիրող Փրկչին և Իմ Հավիտենական Հորը պատվելու համար: Ահա թե ինչու ավելի տարիքով մարդիկ հակված են վերավառել իրենց հավատը կյանքի ավելի ուշ փուլում, երբ սկսում են մտածել սրանից հետոի մասին:

Մարդիկ չեն կարողանում հասկանալ, թե կարող են մահանալ ցանկացած պահի, ցանկացած ժամանակ, ցանկացած տարիքում՝ ծննդյան պահից սկսած մինչև տարեց հասակը: Դա նշանակություն չունի: Մարդ պետք է նախապատրաստված լինի միշտ:

Ես աղերսում եմ բոլոր հավատացողներին, որ աղոթեն զանազանության համար՝ սովորեցնելու երիտասարդներին ամենուր այն հրատապ անհրաժեշտության մասին, որ պետք է բացեն իրենց աչքերը այն սիրո հանդեպ, որը Ես և Իմ Հավիտենական Հայրն ունենք նրանցից յուրաքանչյուրի հանդեպ: Օգնեք բացելու նրանց աչքերը Դրախտի խոստումների հանդեպ: Հիմա Իմ հանդեպ ձեր պարտականությունը դա է, որպեսզի Ես չկորցնեմ Իմ երիտասարդ զավակներին հանուն այն ստերի, որոնք Սատանան է այսօր տարածում աշխարհով մեկ:

Օգնեք Ինձ փրկել բոլոր նրանց, ովքեր հավատացած են, թե բավականին շատ ժամանակ ունեն ուշադրություն դարձնելու համար իրենց հոգիներին՝ երկրի վրա Նոր Դրախտի նախապատրաստման համար, որը մոտենում է, և որը կդառնա իրականություն մեկ անգամ աչք թարթելու ընթացքում այն ժամանակ, երբ ձեզանից շատերն ամենաքիչն են սպասում դա:

Ձեր սիրող Ուսուցիչ և Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Հարցեր Հիսուսին

Երկուշաբթի, 1 օգոստոսի, 2011թ, ժ 23:30

<<Նախապատրաստված եղեք միշտ>> պատգամը ստանալուց հետո տեսանողուհին տեսավ Հիսուսի պատկերը, ուր Նա տխուր էր երևում: Այդ ժամանակ նա Հիսուսին մի քանի հարց տվեց, որոնց Հիսուսը պատասխանեց:

Հարց Հիսուսին. <<Դու տխու՞ր ես>>:

Պատասխան. <<Այո, և հոգնած: Մարդկանց մեղքերն Իմ սիրտը պատռում են երկու մասի>>:

Հարց Հիսուսին. <<Ի՞նչը կօգնի>>:

Պատասխան. <<Աղոթքը, շատ աղոթքը>>: Իմ հետևորդների նվիրվածությունը՝ **Աստվածային Գթասրտության աղոթքը և Սուրբ Վարդարանն** ամեն օր աղոթելու միջոցով կփրկի Իմ զավակներին: Նրանք, Իմ հետևորդները, պետք է տոկուն լինեն, նույնիսկ եթե դա դժվար է>>:

Հարց Հիսուսին. <<Ի՞նչն է ՔԵզ ամենից շատ տխրեցնում>>:

Պատասխաններ.

<<Նրանք, ովքեր ոչ միայն ատում են Ինձ, այլև նախընտրում են երկրպագել Սատանային պիղծ ծեսերի մեջ, ուր չեն կարող տեսնել, որ խաբված են:

<<Իմ սրբազան սպասավորները, ովքեր կորցրել են Իմ հանդեպ իրենց սերը:

<<Նրանք, ովքեր հալածում են ուրիշներին:

<<Այն մարդասպանները, ովքեր չեն հարգում Իմ զավակների կյանքը:

<<Աբորտը՝ ցեղասպանության ամենավատ ձևը: Ես արցունքներ եմ հեղում յուրաքանչյուր պահի Իմ փոքրիկ հոգիների համար, ովքեր չեն կարող շնչել իրենց առաջին շունչը:

<<Պատերազմը, և այն անկաշկանդությունը, որով այն սանձազերծվում է սովորաբար նրանց կողմից, ովքեր, եթե նրանց դնեին մարտադաշտի կենտրոնում, վախից կփախչեին: Այդ մարդկանցից շատեր, ովքեր պատերազմ են հայտարարում, այդպես

են վարվում միայն իշխանություն ձեռք բերելու համար: Նրանք մեծապես վիրավորում են Ինձ:

Հարց Հիսուսին. <<Ի՞նչն է Քեզ երջանիկ դարձնում>>:

Պատասխան. <<Իմ հետևորդների և նրանց հավատը, ովքեր հաստատապես վճռել են օգնել Ինձ փրկելու հոգիների: Ես սիրում են նրանց այնպիսի քնքշությամբ և կարեկցությամբ: Նրանք մեծապես կպարգևատրվեն Իմ Հոր Թագավորության մեջ:

Եզրակացություն

Հայր Աստված. Ամենահրատապ պատգամներից մեկը՝ մարդկությանը

2 օգոստոսի, 2011թ, ժ 20:15

Ես գալիս եմ Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով: Ես Հայր Աստվածն եմ և ցանկանում եմ հաղորդակցվել ողջ աշխարհի հետ: Իմ մտադրությունն է **նվազեցնել Երկնային Պատժի խստությունը**՝ մարդկությանը հնարավորություն տալու, որ բացեն իրենց սրտերը Իմ գոյության ճշմարտության հանդեպ: Նրանք, Իմ թանկագին զավակները, պետք է իմանան, որ Ես նախ Գթասրտության Աստված եմ, հետո միայն Արդարադատության:

Իմ գթասրտությունը հասել է արտակարգ չափերի: Ես, աղոթքի հզորության պատճառով, Գթասրտությամբ ետ կպահեմ Իմ ձեռքը որպեսզի մեղմացվի այն ատելությունը, որն առկա է շատ հոգիների մեջ աշխարհով մեկ:

Զգուշացեք, զավակներս, երբ Ես նախազգուշացնում եմ ձեզ, որ մեղքի տարածումը դադարեցնել չկարողանալը կհանգեցնի **երկնային պատժի, որը կոչնչացնի մարդկության մեծ մասին:** Այդպիսի պատիժ չի տեսնվել **Նոյի ժամանակների ջրհեղեղից ի վեր, որը ոչնչացրեց երկիրը:**

Ես այլևս թույլ չեմ տա ձեզ, Իմ անշնորհակալ զավակներ, որ ոչնչացնեք նրանց, ովքեր հավատարմություն են ցույց տվել Իմ հանդեպ: Ոչ էլ Ես ետ կկանգնեմ և **թույլ կտամ, որ Մեկ Համաշխարհային Կարգը թունավորի Իմ արարչությանը: Իմ զավակներին: Իմ երկիրը:**

Ուշադրություն դարձրեք հիմա սրան՝ **մարդկությանը տրվող վերջին նախազգուշացումներից** մեկին: Ետ շրջվեք հիմա մեղքի ճանապարհից և կփրկվեք: Ետ շրջվեք Սատանայի կեղծիքի հանդեպ ձեր ունեցած կույր նվիրվածությունից և նրա գայթակղիչ հմայնքերից, որոնք գրավում են ձեզ սեփական անձի և նյութական հրաշքների հանդեպ սիրո միջոցով: Եթե շարունակեք սրբապղծել ձեր հանդեպ ունցած սիրուց ստեղծված այս հրաշալի աշխարհն այնպես, ինչպես հիմա եք անում, ապա այն չի լինի, որ շարունակեք նրան հետագա վնաս պատճառել:

Ես սիրո Աստվածն եմ՝ դանդաղ բարկանալու մեջ, բայց Իմ համբերությունը հատնում է: Նրանք, ովքեր շարունակում են խեղել և ոչնչացնել Իմ զավակներին պատերազմի և **աշխարհի ֆինանսների վերահսկողության** միջոցով, իմացեք, որ ձեր օրերը հաշված են: Ձեր փրկության հնարավորությունը հիմա վերջինը կլինի: Եթե ինչպես հարկն է չարձագանքեք Գթասրտության այն մեծ ընծայի ընթացքում, որը **Նախազգուշացումն է**, ապա դուք և ձեր ստորադասները կոչնչանաք:

Իմ փառքը հայտնի կդառնա յուրաքանչյուր մարդու, կնոջ և երեխայի: Նրանք, ովքեր կընտրեն Իմ Թագավորություն տանող ուղին, հարատև կյանք կունենան: Նրանք, ովքեր չեն ընտրի, կզգան այնպիսի մի խավար, որի նմանը ոչ կարող են պատկերացնել, ոչ էլ ցանկանալ:

Սատանայի հետևորդներ, որ գիտակցաբար պաշտում եք նրա չարությունը, լսեք հիմա Իմ խոստումը: Ձեզ, Իմ կորած զավակներ, Նախազգուշացման ընթացքում մեկ անգամ ևս կառաջարկվի սիրո ձեռքը և խաղաղությունը: Բռնեք այն, քանի որ այն կլինի ձեր կյանքի գիծը ետ՝ դեպի Իմ սիրո զոգը: **Անտեսեք Իմ աղերսները, և դուք կտառապեք հավիտենությունը՝** երբեք չվերադառնալու Իմ փայփայած ընտանիքի փարախը:

Սա հիմա, աղջիկս **ամենակարևոր նախազգուշացումներից մեկն է,** փրկելու համար քո եղբայրներին և քույրերին հավիտենական դատապարտության տառապալից կրակներից:

Թագավոր Ամենաբարձրյալ

Աստված Հվիտենական Հայր

Պատգամ Կույս Մարիամից. Ես միայն մի քանի անգամ ևս կերևամ աշխարհում

Չորեքշաբթի, 3 օգոստոսի, 2011թ, ժ 09:45

Աղջիկս, կարիք չկա վախենալու այս աշխատանքում, քանի որ կանխասացվել է, որ **դարձը տեղի կունենա:** Տխուր է, բայց ոչ բոլոր մարդիկ կարող են փրկվել կամ կփրկվեն: Նրանք, ովքեր այսօր աշխարհում հալածում են Իմ Թանկագին Որդուն, **ավելի վատն են, քան նրանք ովքեր մահվան մատնեցին Նրան Խաչելության ընթացքում:** Քանի որ Իմ Որդին մեռավ, որպեսզի մարդկությանը փրկի մեղքից, ամբողջ աշխարհի համար դաս եղավ, որ իմանան Իմ Որդու հանդեպ պաշտամունքի կարիքը: Շատերը, ովքեր գիտեն ճշմարտությունը, ընտրում են անտեսել սա:

Ես այնքան շատ անգամներ եմ ուղարկվել՝ խրախուսելու համար աղոթքն աշխարհով մեկ, սակայն ժամանակի ընթացքում զավակներին տրված Իմ նախազգուշացումները մոռացվել են: Այսօր, երբ Ես տարբեր երկրներում հայտնի եմ դարձնում Ինձ տեսանողների, նրանց ոչ միայն արհամարհում են, այլև ծաղրի են ենթարկում: Իմ

ներկայությունը և **այն նշանները, որոնք Ես ցույց եմ տալիս երկնքում,** և մյուս նշանները, մերժվում են: **Նույնիսկ քահանաներն ու եպիսկոպոսներն են անտեսում Իմ նախազգուշացումները:** Նրանք նույնպես **մեջք են շրջել աստվածային միջամտությունների հանդեպ հավատից:** Որքան կույր են նրանք, որ մերժում են Իմ՝ իրենց Սիրելի Մոր կողմից առաջարկվող օգնությունը:

Իմ Որդին այնքան շատ է տառապում, սիրտ է կոտրվում մեղքի չարիքի պատճառով Նրան այսօր տառապանքի մեջ տեսնելիս: Իմ զավակները գաղափար չունեն, թե ինչպես է Նա տանջվում այն տառապանքից, որին ստիպված է ականատես լինել աշխարհում, երբ **Նա տեսնում է մարդկանց դաժանությունը:**

Զավակս, հիշեցրու Իմ զավակներին, որ **Ես միայն մի քանի անգամ ևս կերևամ աշխարհում,** քանի որ եկել է ժամանակը **վերջնական մարտի համար, երբ Ես կջախջախեմ Օձի Գլուխը:**

Իմ զավակները պետք է իմանան, թե որքան սիրված և փայփայված են իրենք Իմ Սիրելի Որդու կողմից: Ես կոչ եմ անում նրանց բացել իրենց սրտերը և Նրան ցույց տալ այն սերն ու կարեկցանքը, որին Նա արժանի է: Նա՝ ձեր Փրկիչը, ով կամովին ընդունեց մահը ամենադաժան ձևով, որպեսզի փրկի ձեզ, հիմա ցանկանում է փրկել այս սերնդին Սատանայի որոգայթներից:

Նա՝ Խաբեբան, ժպտում է, զավակս, քանի որ գիտի, որ հաջողացրել է գողանալ թանկագին հոգիներ: Աղոթեք, աղոթեք, աղոթեք հիմա, որ Իմ Որուն լսեն **Նախազգուշացման ընթացքում,** և որ ազատագրման այդ ընծան ընդունվի խոնարհ և բաց բազուկներով:

Հիշեք, որպես ձեր Մայրը, **Ես միշտ մեղմացում կաղերսեմ Իմ զավակների համար:** Իմ արցունքները հոսում են նրանց համար, ովքեր չեն ցանկանում լսել ճշմարտությունը, որովհետև միայն մշտական աղոթքի միջոցով կարող են այդ դժբախտ հոգիներն ազատագրվել:

Ձեր սիրող Մայր

Վշտերի Թագուհի Տիրամայր

Իմ ծննդյան օրը չափազանց յուրահատուկ տոն է

Հինգշաբթի, 4 օգոստոսի, 2011թ, ժ 20:30

Վաղը, զավակս, մի յուրահատուկ տոն է Ինձ համար՝ ձեր սիրող Մոր համար, քանի որ Իմ ծննդյան օրն է:

Իմ սիրտը ծանրացած է վշտից այն վիրավորանքի պատճառով, որն Իմ Սիրելի Որդին տառապում է մարդկանց մեղքերի համար: Ես ժպտում եմ, երբ տեսնում եմ, թե

ինչպես են Ինձ նվիրված ավակներն անում իրենց կարողացածը, որ հոգիներ փրկեն, սակայն Իմ արցունքները շարունակում են հոսել, որովհետև Ես չեմ կարողանում դիմանալ, տեսնելով տառապանքը ձեր աշխարհում:

Զավակս, չշրջես մեջքդ նույնիսկ մեկ պահ Իմ Որդի Հիսուս Քրիստոսի և Ամենաբարձրյալ Աստծո կողմից տրվող պատգամները տարածելուց, քանի որ ժամանակը համարյա սպառվել է: Նվիրաբերիր այս աշխատանքին որքան կարող ես շատ ժամանակ: Շարունակիր առաջ գնալ, զավակս: Ես միշտ կծածկեմ քեզ Իմ սուրբ թիկնոցով:

Ձեր սիրող Մայր

Երկնքի Թագուհի

Սպասման ժամանակ – ասա մյուսներին թե ինչ պետք է սպասել

Հինգշաբթի, 4 օգոստոսի, 2011թ, ժ 21:40

Իմ սիրելի աղջիկ, **աշխարհն օր օրի ավելի է իջնում կործանման մեջ:** Իմ զավակների մեջ հույսի, անհանգստության, զայրույթի և հուսահատության խառնուրդ է **պատերազմի և փողի պակասի պատճառով,** իրենց ընտանիքների համար ինչպես հարկն է սնունդ և հագուստ ապահովելու համար: Բայց ուշ դարձրեք սրան. Շուտով դուք կարիք չեք ունենա հոգալ ձեզ համար, քանի որ Նախազգուշացումից հետո աշխարհում լույսի և հույսի ավելի դրական զգացողություն կլինի: Ամեն ինչ կորած չէ, աղջիկս:

Աղոթիր նրանց համար, ովքեր Նախազգուշացման ընթացքում դարձի կգան, որպեսզի դրանից հետո մնան ճշմարտության ճանապարհի վրա: Աղոթիր, որ Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ սերն ավելի ուժեղ դառնա նրանց մեջ, ովքեր արդեն գիտեն ճշմարտությունը:

Քանի դեռ Իմ զավակները կգրկեն Նախազգուշացման ընծան, նրանք վախենալու ոչինչ չեն ունենա:

Նրանք, ովքեր չեն մնա այդ ճանապարհի վրա և նորից կդառնան իրենց մեղավոր ուղիներին, նրանք վախենալու ավելի շատ բան ունեն: Իմ Հայրը թույլ չի տա նրանց, որ թունավորեն ուրիշներին իրենց քմահաճ և չար ուղիներով: **Նրանք կկանգնեցվեն:** Տխուր է, սակայն շատերը կշրջվեն ճշմարտությունից և կփորձեն շարունակել ուժ և վերահսկողություն գործադրել Իմ մնացած զավակների վրա:

Աղոթեք, որ Երկնային Պատիժը նվազեցվի: Ձեր աղոթքները կօգնեն շրջելու այդպիսի իրավիճակները և խուսափելու դրանցից: **Հիմա սպասման ժամանակն է:** Աղոթքի

ժամանակը, և ամեն ինչ անելու, որպեսզի որքան հնարավոր է շատ մարդիկ իմանան, թե ինչ է սպասվում:

Այս օգոստոս ամիսը՝ **<Հոգիների փրկության ամիսը>>,** այնքան կարևոր է, զավակներս: Խնդրում եմ տոկուն եղեք ձեր պաշտամունքի մեջ այս ամիս, քանի որ հոգիները, որոնք կփրկեք, շատ կլինեն: **Երկինքն ուրախանում է** Իմ բոլոր հետևորդների կողմից արված **սրտի և հոգու այն սիրո և առատաձեռնության համար,** որը մի թանկագին ընծա է՝ տրված Ինձ, որպեսզի մարդիկ փրկվենՆախազգուշացման ընթացքում:

Գնա հիմա, աղջիկս, և տարածիր Իմ Խոսքը: Գնա հիմա խաղաղությամբ և սիրով:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Տառապանքի դերը

Կիրակի, 7 օգոստոսի, 2011թ, ժ 14:45

Ես Ալֆան եմ և Օմեգան. Ես Հայր Աստվածն եմ՝ Մարդու և Տիեզերքի Արարիչը

Իմ թանկագին աղջիկ, հիմա Ես վերջապես ընդունում եմ Ինձ տրված քո ընծան՝օգնել փրկելու հոգիներ: Քո ընծան ընդունվում է սիրով և ուրախությամբ: Դա հեշտ ճանապարհ չի լինի, բայց դու պաշտպանված կլինես, եթե ամեն օր խնդրես Ինձ պաշտպանության համար:

Քո տառապանքը կլինի մտավոր ձևով և հոգու խավար: Մինչ այն կշատանա, շարունակիր հիշել այն արարածների մասին, որոնք կփրկվեն քո տառապանքների պատճառով:

Գնա պաշտամունքի որքան կարող ես հաճախ, որպեսզի ստանաս այս աշխատանքի համար պահանջվող զորությունը: Իմ Սիրելի Որդու կողմից տրվող պատգամները կշարունակվեն: Դրանք պետք է տեղադրվեն ինչպես նախկինում, քանի որ աշխարհին ուղղված Նրա պատգամները կավելանան, այլ ոչ թե կպակասեն: Քեզ շատ սրբեր են օգնում, ովքեր միջնորդում են քեզ համար:

Շարունակիր աղոթել Սուրբ Երրորդությանը այն շնորհների համար, որոնք անհրաժեշտ են ուժեղ մնալու համար: Երբեք լքված չզգաս, քանի որ դա կթվա որպես քո տառապանքի մի մասը: Իջեցրու գլուխդ: Լուռ մնա և ուրախ երևա արտաքին աշխարհին: Անտեսիր նրանց, ովքեր կվիրավորեն քեզ: Դրա փոխարեն հիշիր, որ քո հոգու միջով փայլող Աստվածային լույսն է, որ դուրս կհանի մյուսների մեջ եղած խավարը: Միայն և միայն այդ ժամանակ դու կհասկանաս այն տառապանքը, որն այրելով անցնում է Իմ Որդու Սրտի միջով, երբ Նա տեսնում է մեղքը աշխարհում: Քո

տառապանքը կլինի միայն մի հատվածը այն ամենի, ինչ Նա տառապում է օրվա յուրաքանչյուր րոպե:

Ընդունիր հիմա այն ընծան, որը տրվել է նաև քեզ, երբ կանչվեցիր լինելու զոհաբերվող հոգի:

Հիշիր, որ դու, աղջիկս, միշտ Իմ Սրտի մեջ ես: Ես հսկում և պաշտպանում եմ քեզ: Ժպտա հիմա: Մի վախեցիր, քանի որ աշխատանքը մեծ պարգևներ կտա քեզ և քո ընտանիքին ու սիրելիներին Իմ Փառահեղ Թագավորության մեջ:

Ձեր Սիրող Հայր

Աստված՝ Արարիչ ամեն բանի

Զավակներս, մի հուսահատվեք մարդկությանը սպասվող հուսահատության մասին հեքիաթներից

Երկուշաբթի, 8 օգոստոսի, 2011թ, ժ 19:45

Իմ սիրելի աղջիկ, արդեն մի քանի օր է, ինչ Ես չեմ հաղորդակցվել քեզ հետ: Դա նրա համար էր, որպեսզի քեզ հնարավորություն տրվեր լսել Իմ Սիրելի Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո խորհուրդը, որպեսզի օգնի քեզ հասկանալու տառապանքի դերը հոգիների փրկության գործում:

Օրերը հիմա ավելի են կարճանում, մինչ Նախազգուշացման ժամանակը մոտենում է: Ամեն ինչ պատրաստ է Իմ սիրո բոցերի համար, որոնք կպարուրեն ողջ աշխարհն ամբողջությամբ: Հիմա հրեշտակները, երկնքի երգչախմբերը/բազմությունները սպասում են Փառքի այն օրվան, երբ Ես կվերադառնամ՝ մարդկանց տալու համար վերջին հնարավորությունը, որ ընդունեն Իմ և Իմ Հավիտենական Հոր գոյության հնարավորությունը:

Զավակներս, մի հուսահատվեք մարդկությանը սպասվող հուսահատության ասեկոսեներից ու պատմություններից: Դրա փոխարեն նայեք Ինձ հիմա և Ինձ վստահեք ձեր վախը: Մարդկությանը կտրվի այսպիսի մի հրաշալի ընծա: Մարդը ոչ միայն կհանդիպի Ինձ դեմ առ դեմ, այն կուրախանա՝ իմանալով և տեսնելով ճշմարտությունը՝ ներկայացված հենց իր աչքերի առջև:

Սա մի մեծ օր կլինի պատմության մեջ, երբ հույսը և սերը ցույց կտրվի ձեզ բոլորիդ: Նույնիսկ կարծրացած մեղավորները ծնկի կգան և կլացեն ապաշխարության արցունքներով: Սա լավ լուր է, զավակներս, քանի որ բոլորը կարող են փրկվել, եթե մի կողմ դնեն իրենց հպարտությունն ու եսասիրությունը: Բոլորը, իրենց ազատ կամքով, կմիավորվեն, թույլ տալու համար որ Ես մտնեմ իրենց սրտերի մեջ, որպեսզի կարողանան առաջնորդություն ստանալ գնալու դեպի լույսը:

Մահացու մեղքի մեջ գտնվող շատ մեղավորների համար այդ լույսը կայրի նրանց աչքերն ու հոգին: Դա ցավոտ կլինի: Եթե միայն նրանք կարողանան դիմանալ այն վախին, երբ տեսնեն թե ինչպես են իրենք վիրավորում Ինձ, նրանք կդառնան ուժեղ և դարձի կգան:

Ուստի, Իմ բանակի զավակներ, Ես ասում եմ ձեզ հիմա: Ժպտացեք, քանի որ այդ իրադարձությունը կլինի ձեր կյանքի ամենաարտակարգ դեպքը, և Իմ ու Իմ Հավիտենական Հոր հանդեպ ձեր սերը կողողի ձեր հոգին: Այնքան շատ սեր կներթափանցի ձեր մտքի, մարմնի և հոգու մեջ, որ դուք ընդմիշտ կնորացվեք ոգով: Աղոթեք հիմա ձեզ բոլորիդ համար, քանի որ ժամանակը կարճ է: Աշխարհը հիմա նախապատրաստվում է նախազգուշացման համար, որպեսզի բոլորը պատրաստ լինեն Իմ մեծ ընծայի համար:

Շարունակեք նվիրվածությամբ, զավակներս, Հոգիների փրկության այս ամսվա ընթացքում, քանի որ օգոստոսի վերջին միլիոնավոր հոգիներ կփրկվե նձեր ջանքերի շնորհիվ:

Հիշեք, զավակներս, Ես ներկա եմ ձեր յուրաքանչյուր օր. Դիտելով, ուղղություն տալով: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Մնացեք հավատարիմ, տառապած հոգիներ, փրկելու Իմ ցանկությանը:

Հիսուս Քրիստոս

Իրարանցում աշխարհում՝ Իմ հանդեպ սիրո պակասի պատճառով

Երեքշաբթի, 9 օգոստոսի, 2011թ, ժ 20:30

Իմ սիրելի աղջիկ, եկել է ժամանակը աշխարհում իրարանցման համար, ուր մարդ կբարձրանա մարդու դեմ, եղբայրը՝ եղբոր դեմ, և հարևանը՝ հարևանի դեմ, ինչպես կանխասացվել է: Իրադարձությունները հիմա դուրս կժայթքեն մեկը մյուսի ետևից: Շատ երկրներ կզգան դա: Շատ զայրույթ կա աշխարհում, հիասթափություն և վախ՝ Իմ զավակների միջև: Ասա նրանց, որ այդ իրադարձությունները հրահրվում են Սատանայի կողմից, և անհանգստությունն ավելի կշատանա ու կուժգնանա Նախազգուշացումից առաջ:

Սա, աղջիկս, կանխասացվել է որպես այն նշաններից մեկը, որը մարդկությունը կզգա 2011թ-ի՝ Մաքրագործման տարվա ընթացքում: Իմ զավակներն ականատես կլինեն, ցնցված, այն չարիքին, որը գոյություն ունի աշխարհում նրանց հոգիների մեջ, ովքեր մեկը մյուսի հանդեպ լցված են զուտ ատելությամբ և զայրույթով: Հաղթողներ չեն լինի այս պատերազմում, աղջիկս, որը կշարունակի տարածվել: Մարդու ձեռքով են այդ վայրագությունները կատարվում: Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ սիրո պակասի պատճառով է, որ նրանք դառնում են Սատանայի կամավոր կամակատարները:

Աղոթեք, զավակներս, բոլոր նրանց համար, ովքեր կտառապեն աշխարհի անհանգստության պատճառով: Քանի որ շատ քիչ երկրներ զերծ կմնան կատաղության և ավերածության այս ժայթքումից: Ատելության այդ պատերազմը տեսանելի կլինի շատ երկրների և ազգերի միջև: Շատեր կզգան խառնաշփոթություն, սարսափ և վիշտ:

Խնդրում եմ վստահեք Իմ Հորը՝ Աստծուն՝ Հավիտենական Հորը, քանի որ Նրա ձեռքը կօգնի կանգնեցնել այդ աղետները, զավակներս: Ուժեղ մնացեք, զգոն և հավատարիմ Ինձ՝ ձեր Սիրող Փրկչին: Ամեն ինչ կբարելավվի ձեր աշխարհում, երբ հասկանաք սիրո կարևորությունը ձեր կյանքում և ներդաշնակության ու հոգատարության կարևորությունը ձեր հարևանի հանդեպ: Աղոթքը կօգնի նվազեցնել չար անհանգստության ազդեցությունը:

Հիշեք, պատերազմը, բռնությունն ու սպանությունն Աստծուց չեն գալիս: Դրանք ստեղծված են Սատանայի կողմից: Նրա զայրույթը հիմա հասել է աննախադեպ աստիճանի, և նրա կատաղությունը թափվում է Իմ զավակների վրա նրանց միջոցով, ովքեր հոգով թույլ են և սեր չունեն իրենց սրտերի մեջ:

Լսեք Ինձ հիմա: Սիրեք մեկդ մյուսին ինչպես Ես եմ ձեզ սիրում: Մերժեք Սատանային, նրա զինակիցներին ու խամաճիկներին հիմա: Աղոթեք սուրբ Միքայել հրեշտակապետին, որ պաշտպանի ձեր համայնքը: Աղոթեք Ինձ՝ առաջնորդության համար: Աղոթեք՝ հրավիրելով Սուրբ Հոգուն, որ իջնի ձեր երկրների վրա:

Ձեր գթառատ Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ես չեմ խրախուսում վախենալ Նախազգուշացումից

Չորեքշաբթի, 10 օգոստոսի, 2011թ, ժ 23:00

Իմ սիրելի աղջիկ, դեպի Նախազգուշացում տանող գլոբալ իրադարձությունների արագությունը, ինչպես Ես կանխասացել էի, շարունակում է աճել: Աղոթքը, զավակներս, էական է հիմա, երբ Իմ հետևորդները՝ լցված Սուրբ Հոգու շնորհներով ամենուր աշխարհում **կռում են Իմ բանակը:** Այս բանակը, չնայած բավականին փոքր է այն առումով, որ Իմ հետևորդներից յուրաքանչյուրը դեռևս պետք է հասկանա, որ իրենցից յուրաքանչյուրը կարևոր դեր է կատարում նույնիսկ հիմա, կբարձրանա և կառաջնորդի Իմ զավակներին մինչև ամենավերջը:

Իմ բոլոր զավակները պետք է լսեն Ինձ հիմա: Այս ժամանակներում մարդու կողմից մարդու դեմ կատարվող յուրաքանչյուր վայրագության համար **դուք պետք է աղոթեք չարագործի համար** յուրաքանչյուր դեպքում: Հիմա կոչ է արվում աղոթել մեղավորների համար: Աղոթքի միջոցով դուք կարող եք կանչել Սուրբ Հոգուն, որ լույս բերի այդ խեղճ հոգիների մեջ: Նրանցից շատերն այնքան կույր են Իմ Հոր սիրո

հանդեպ, որ թափառում են աննպատակ կերպով՝ ընկնելով մի ճգնաժամից մյուսի մեջ այնպես, որ վնասում են բոլոր նրանց, ում հետ շփվում են: Եթե ձեզանից ավելի շատերը խնդրեն Իմ Գթասրտությունը այդ մեղավորների հանդեպ, ապա Չարի արարքների ազդեցությունը զգալիորեն կթուլանա: **Սա է գաղտնիքը, զավակներս, թե ինչպես պետք է թուլացնել Սատանայի ատելությունը, որը դուրս է ժայթքում ինչպես կրակը վիշապի բերանից՝ փորձելով ողողել աշխարհը իր ատելությամբ լի թույնի մեջ:**

Նա՝ Խաբեբան, և նրա չարքերը, ամենուրեք են: Քանի որ Իմ զավակների հավատքը բավականին թույլ է համաշխարհային մասշտաբով, Սատանայի չար արարքները բռնել են մարդկությանը մի այնպիսի չարության մեջ, որից դժվար է դուրս գալ: Եթե Իմ զավակներն ամենուր հավատային Աստծո՝ Ամենակարող Հոր գոյությանը, դա տեղի չէր ունենա: Այդ դեպքում Սատանայի ազդեցությունը նույնիսկ ավելի թույլ կլիներ, եթե Իմ զավակներն աղոթեին օգնության համար և խնդրեին Իմ Հոր Գթասրտությունը:

Աղոթքը ձեր զրահն է հիմա, զավակներս այժմվանից մինչև **Նախազգուշացման ժամանակն ընկած հատվածում:** Օգտագործեք աղոթքը՝ փրկելու համար խավարի մեջ գտնվող հոգիներին: Նախազգուշացումից հետո ձեր աղոթքների կարիքը կլինի, որ օգնեք Իմ զավակներին վերագտնելու իրենց պաշտամունքը Իմ Հավիտենական Հոր հանդեպ և գովաբանելու Նրա Փառքը:

Համբերությունը, ամենօրյա լուռ աղոթքը, աղոթախմբերի կազմումը, Աստվածային Գթասրտության աղոթքի ամենօրյա ասելը, ծոմապահությունը և Իմ Սիրելի Մոր համար ասված Սուրբ Վարդարանը, այս բոլորը համատեղված՝ ծառայում են որպես հոգիների փրկության կատարյալ բանաձև:

Ես չեմ խրախուսում վախենալ Նախազգուշացումից: Աղոթեք հիմա ձեր սեփական հոգու և ուրիշների հոգիների համար ազատագրման գործողության միջոցով, և նախքան Ինձ հետ՝ ձեր սիրող Փրկչի հետ դեմ առ դեմ հանդիպելը:

Ես ժպտում են ուրախությամբ և երջանկությամբ, երբ մտածում եմ այն պահի մասին, երբ Իմ Գթասրտության այդ մեծ Ընծան կբացահայտվի Իմ զավակներին: **Դա վերադարձ է տուն, որի նմանը գոյություն չունի (որն աննկարագրելի է):** Քանի որ դա կլինի, երբ ձեր սրտերը լցվեն Իմ աստվածային սիրով: Ձեր հոգիները վերջապես կլուսավորվեն երկրի վրա Նոր Դրախտի նախապատրաստման համար: Այդ ժամանակ Ես կբերեմ այն հանգստությունը, որը մինչ այդ պակասում էր ձեր կյանքում, երբ դուք կմիանաք Ինձ:

Հիշեք, զավակներս, այն պատճառը, թե Ես ինչու եմ հիմա հաղորդակցվում աշխարհի հետ: Իմ ցանկությունն է վստահեցնել, որ Իմ բոլոր զավակները փրկվեն Սատանայի ճանկերից: Նաև Իմ խորը անհուն սերն է ձեր յուրաքանչյուրիդ և ամեն մեկիդ հանդեպ, որ Ես պետք է երկարեմ Իմ ձեռքը, որպեսզի դուք կարողանաք միանալ Ինձ՝ նախապատրաստվելու համար, որ նորից տուն գաք, իրավամբ ձեզ պատկանող տունը:

Վախը Ինձնից չի գալիս: Ես սիրում եմ ձեզ, զավակներս: Ես բերում եմ ձեզ այս փառահեղ ընծան՝ Իմ սիրուց ելնելով: Ուրախացեք, ժպտացեք և ողջունեք Ինձ, երբ նշանը երևա երկնքում: Բարձրացրեք ձեր ձեռքերը և գովաբանեք Հայր Աստծուն, որ տալիս է Ինձ այս վերջին հնարավորությունը ձեզ փրկելու համար:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Գթասրտության Թագավոր

Աղոթեք նրանց համար, ովքեր չեն կարող տեսնել նյութական օգուտից այն կողմ

Հինգշաբթի, 11 օգոստոսի, 2011թ.

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է տոկուն լինես այս տառապանքի մեջ, քանի որ այդպես վարվելով, հոգիներ ես փրկում: Քո տառապանքը հիմա բացահայտում է այն չարչարանքները, որոնք Ես կրեցի մարդու մեղքի ձեռքից:

Հիմա մարդու ագահությունն այն աստիճան է ավելացել, որ ձեր հասարակության մեջ այլև բարոյական նորմերը չեն գործում: Ագահության հանդեպ մարդու մեղքը նշանակում է, որ նրա հոգը չէ, թե ով է տառապում իր ձեռքով մինչ իր նկրտումները բավարարվում են: Թույլ տվեք Ինձ ասել ձեզ, որ նրանք, ովքեր տանջում են ուրիշներին ագահության և ընչաքաղցության միջոցով, չեն վրիպում Իմ ուշադրությունից: Ես դիտում եմ: Ես տեսնում եմ: Ես նվաստանում եմ, երբ ականատես եմ այն չար ուղուն, որով մարդը ընտրում է ներքև իջնել, որպեսզի հարստություն ձեռք բերի ուրիշների հաշվին:

Նրանք, աղջիկս, կմերկացվեն նյութական բարեկեցությունից, եթե չխնդրեն Իմ ներողամտությունը: Նրանց փողը անպետք կլինի: Քանի որ նա, ով գայթակղվում է հոգիներ չարչարելով, որպեսզի գողանա այն, ինչ իրավամբ պատկանում է իր եղբայրներին ու քույրերին, նրանց ոչինչ չի թողնվի մոխիրներից բացի: Աղոթեք նրանց համար, ովքեր չեն կարողանում տեսնել նյութական շահից այն կողմ, որովհետև եթե նրանք մեջք չշրջեն այդ չար արարքների հանդեպ, նրանք մի կողմ կնետվեն, և չեն կարողանա մտնել Իմ Հոր Թագավորություն:

Չարիք գործեք ուրիշների հանդեպ այս աշխարհում, և դուք կնետվեք Սատանայի որջը: Այն, ինչ թվում է ձեր ճշմարիտ իրավունքը ուրիշների հաշվին կուտակած հարստության հանդեպ, ձեզ տառապանք կբերի հավիտենության համար:

Ցած դրեք ձեր ագահության և ընչաքաղցության զենքերը հիմա: Ազատագրում փնտրեք, քանի որ եթե այդպես վարվեք, խաղաղությունը կվերադառնա ձեր հասարակություն:

Ձեր Փրկիչ

Արդարադատության Թագավոր

Հիսուս Քրիստոս

Հիմա Իմ հետևորդներին տրվել է միջնորդության ընծան

Ուրբաթ, 12 օգոստոսի, 2011, ժ 23:45

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդների սերը շարունակում է Ինձ պահել: Ես ուրախության արցունքներ եմ հեղում, երբ ականատես եմ լինում Իմ այն հետևորդների սիրուն, ովքեր շրջապատում են քեզ և գրկում աղոթքներով:

Նրանք, աղջիկս, Սուրբ Հոգու ընծայի միջոցով կանչվել են հռչակելու համար Իմ Ամենասուրբ Խոսքը աշխարհին, այս կարևոր պատգամների միջոցով:

Եթե միայն այդ հոգիները, ովքեր հետևում են Ինձ և ովքեր գիտեն, որ Ես հաղորդակցվում եմ տարբեր տեսանողների միջոցով, բացեն իրենց աչքերն ու լսեն, թե Ես ինչ ունեմ ասելու: Այդ դեպքում նրանց աղոթքներն օգտակար կլինեն այն խեղճ հոգիների համար, ովքեր նախապատրաստված չեն Նախազգուշացմանը:

Իմ սերը փայլում է աշխարհով մեկ Իմ հավատարիմ զավակների միջոցով: Իմ սիրո լույսը, որը փայլում է նրանց միջոցով, **հենց հիմա աշխարհում բավականին շատ դարձ է առաջ բերում:** Այս ամիս, չնայած Իմ զավակները տեղյակ չեն, **միլիոնավոր հոգիներ են հիմա փրկվում** Իմ սիրելի հետևորդների նվիրվածության պատճառով: Նրանք, Իմ թանկագին զավակները, հետևեցին այս օգոստոսի՝ հոգիների փրկության ամսվա ընթացքում աղոթելու և պաշտամունքի Իմ հրամանին: **Ասա Իմ զավակներին, որ նրանց աղոթքներն ու ծոմապահությունը շատ մեծ ուրախություն է ստեղծել Իմ Հոր քնքուշ սրտում:** Հիմա առատորեն շնորհներ են հոսում այդ սիրելի սուրբ հոգիների վրա, որպեսզի նրանց տրվի զորության ընծան՝ այս օրվանից սկսած՝ կորած հոգիների համար բարեխոսելու համար:

Որքան եմ Ես փափագում գրկել նրանցից յուրաքանչյուրին Իմ բազուկների մեջ՝ Իմ Սուրբ Սրտին մոտիկ, որպեսզի կարողանամ նրանց ցույց տալ, թե որքան շատ եմ իրենց սիրում: Այնքան խիզախ, այնքան հավատարիմ և, չնայած երբեմն-երբեմն մեղքի նկատմամբ շեղումներին, այնքան լավ: Նրանց սիրտը և հոգին հիմա միախառնված են Իմ կարեկցանքին, և Սուրբ Հոգին կառաջնորդի Իմ թանկագին բանակը, մինչ նրանք առաջ են գնում դեպի հաղթանակը, օգնելով Ինձ ձեռք բերել ավելի շատ հոգիներ:

Ձեր սիրող հավատարիմ Փրկիչ

Մարդկության Թագավոր

Աստված ստեղծեց աշխարհը – ոչ մի այլ մոլորակ չի կարող բնակեցվել մարդու կողմից

Շաբաթ, 13 օգոստոսի, 2011թ, ժ 17:00

Դարձը, աղջիկս, հիմա պետք է Իմ զավակների համար առաջնահերթ լինի, մինչ նրանք ասում են ուրիշնորին աշխարհին տրվող Իմ պատգամների մասին: Մեկ հոգի մի օրում, սա Ինձ բերում է մեծ ուրախություն, զավակներս, երբ մյուսները սկսում են բացել իրենց աչքերը ճշմարտության հանդեպ:

Իմ սիրելի աղջիկ, երբ մարդն ամեն օր այդքան զբաղված է, նրա կյանքում քիչ ժամանակ է մնում աղոթքի համար: Աղոթքը, զավակներս, կարող է լինել մի պահ, մի ժամ, մի խոսք կամ որևէ տեսակի հաղորդակցություն Ինձ հետ: Նշանակություն չունի, թե մարդ որտեղ է Իմ մասին մտածում: Դա կարող է լինել տանը, այգում, ավտոմեքենայի մեջ, աշխատանքի ժամանակ, ինչպես նաև Իմ եկեղեցում: Կարևոր չէ, թե որտեղ եք դուք խոսում Ինձ հետ, չնայած կարող եք Ինձ ավելի շատ բավականություն պատճառել, երբ Ինձ հետ զրուցում եք Իմ տան մեջ:

Շատ մարդիկ սխալմամբ հավատում են, թե Ես չեմ կարող լսել իրենց մտքերը, զգալ իրենց ցավը, վիշտը կամ ուրախությունը: Մի՞թե նրանք չեն հասկանում, որ իրենց ստեղծել է Իմ Հայրը՝ ԱՄԵՆ բանի Ամենակարող Արարիչը: Նա, ով գիտե ամեն ինչ, ձեզ բոլորիդ կոչ է անում **կանգ առնել օրվա ընթացքում գոնե մեկ պահ:** Խնդրեք Իմ զորությունը ձեզ ուժեղացնելու համար: **Մի պահը այն է, ինչ Ես խնդրում եմ,** այդ մեկ թանկարժեք պահը, երբ դուք կանչում եք Ինձ՝ հնարավորություն տալով Ինձ Սուրբ Հոգու զորությամբ ներս մտնել ձեր հոգու մեջ: **Նույնիսկ մի շշնջոցը,** երբ դուք կանչում եք Ինձ օգնության, կլսվի: Եթե դուք չեք կանչում Ինձ, Ես չեմ կարող պատասխանել, քանի որ Ես երբեք չեմ միջամտի ձեր ազատ կամքին:

Ես նման եմ մի հոր, որը ներքև է նայում մի խումբ խաղացող երեխաների: Բոլորը զբաղված, վազում են, զրուցում մեկը մյուսի հետ, ոմանք ծիծաղում են, կամ կռվում իրար հետ: Երեխաների մեծ մասը պատասխանում են մեծին, երբ նրանց կանչում են: Բայց ոմանք համառ են, իրենց մեջքն են շրջում և մերժում պատասխանել, երբ խնդրում են: Ոմանք քնքուշ են, ոմանք՝ այնքան էլ չէ: Այնուամենայնիվ, այդ նուրբ տարիքում քչերը ատելություն ցույց կտան: Սակայն երբ Ես այսօր նայում եմ աշխարհում Իմ այդ զավակներին, **Ես տեսնում եմ ատելություն, և նույնիսկ ավելի վատ՝ ամբողջական անտարբերություն Իմ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ,** իրենց սիրող Փրկչի հանդեպ: **Շատերի համար նույնիսկ Իմ անունն է ատելի:**

Այս ժամանակներում, ուր դուք ապրում եք, զավակներս, կա Իմ զավակների մի սանձարձակ խումբ, չափազանց քիչ կարգ ու կանոնով, ովքեր հավատացած են, թե աշխարհն իրենցն է կառավարելու համար, վերահսկելու, շահագործելու, կամ նույնիսկ վնասելու ինչպես իրենք հարմար կգտնեն: Քիչ հարգանք է ցույց տրվում Հոր՝ ամեբ բանի Արարչի հանդեպ: Այնքան ամբարտավան է մարդն այսօր, որ

հավատացած է, թե ինքն ավելի բարձր հիերարխիայից (ստորակարգություն) է դուրս եկել, քան Իմ Հավիտենական Հոր հիերարխիան է: Ուստի նա շարունակում է ավելին փնտրել իր ծագման մասին, չնայած ճշմարտությունը տրված է ամբողջ ժամանակ տեսնելու համար: Այնքան շատ ժամանակ է վատնվում անտեղի որոնումների վրա: Անպետք երազանքներ, որոնք բոլորը ստեղծվել են այն գիտնականների մտքերի կողմից, որոնց հպարտությունն իրենց սեփական մտավոր կարողությունների հանդեպ, մի ընծա տրված Հայր Աստծո կողմից, նշանակում է, որ նրանք հավատացած են, թե կգտնեն նոր փաստեր իրենց ծագման մասին:

Ինչու՞ այդ զավակները չեն հասկանում, որ երկիրը ստեղծվել է մարդու համար: Ոչ մի այլ մոլորակ չի կարող բնակեցվել մարդու կողմից, քանի որ դա Իմ Հոր ծրագրի մասը չէ: Որքան հիմար կարող է մարդը լինել, երբ ցանկանում է լրացնել իր հոգու ներսում ոգու դատարկությունը: Ամբողջ սնունդն ու լրացումը կարող է լիել նրանը, եթե նա նստի և ընդունի ճշմարտությունը. Աստծո՝ Հավիտենական Հոր՝ տիեզերքի արարչի գոյության ճշմարտությունը:

Ձեր սիրող Փրկիչ, Ուսուցիչ և Արդար Դատավոր

Հիսուս Քրիստոս

Վայելեք այն փառահեղ կյանքը, որն սպասվում է ձեզ 1,000 տարի

Կիրակի, 14 օգոստոսի, 2011թ, ժ 14:25

Իմ սիրելի աղջիկ, դու շարունակում ես պաշտպանել Իմ խոսքն այն ժամանակ, երբ փաստորեն, դրա կարիքը չկա:

Իմ խոսքը կծակի հավատացողների սրտերն ինչպես սուր, երբ նրանք տեսնեն Իմ պատգամները, որոնք տրված են քեզ աշխարհի համար: Նրանք կիմանան ճշմարտությունը, երբ կարդան Իմ խոսքը, քանի որ Իմ աստվածային լույսը այնպես կազդի նրանց վրա, որ դժվար կլինի այն անտեսել: Շատերն են քննում և շարունակում քննել, ճիշտ ինչպես արեցին **Նոյի ժամանակ:** Նրանց նախազգուշացանում էին, սակայն նրանք չէին ցանկանում լսել: Նրանք փակում էին Իմ Հոր ձայնը, երբ Նա Նոյի և մյուս մարգարեների միջոցով պատգամներ էր ուղարկում: **Միայն նրանք փրկվեցին, ովքեր լսեցին և ենթարկվեցին:**

Լսեք Իմ պատգամները հիմա: Բաց արեք ձեր սրտերը և թույլ տվեք, որ Իմ խոսքը խոսի ձեր հոգիների հետ, զավակներս: Ուշադրություն մի դարձրեք աշխարհիկ շեղումներին: Պարզապես կենտրոնացեք Իմ ձայնի վրա: Այդպես վարվելով, դուք կփրկեք ձեր հոգիները:

Նրանք, ովքեր չեն ցանկանա լսել իրենց մեջքը շրջելու պատճառով, ժամանակի ընթացքում կգան քաղցած բերաններով՝ կլանելու համար Իմ Ամենասուրբ Խոսքը,

Նախազգուշացման տեղի ունենալուց հետո: Քանի որ այդ ժամանակ դուք պատրաստ կլինեք հետևելու Իմ առաջնորդությանը, այնպես որ Ես կկարողանամ ինչպես հարկն է ուղղորդել ձեզ դեպի Երկրի վրա Նոր Դրախտը, որտեղ դուք, ձեր ընտանիքն ու ձեր սիրելիները կվայելեք այն Փառապանծ Կյանքը, որն սպասում է ձեզ 1,000 տարի: Ոչ մի հիվանդություն, ոչ մի սննդի պակաս, ոչ մի անհանգստություն, այլ միայն սեր իր ամենամաքուր ձևով: Մի փառապանծ ամբողջություն, որն իրավամբ ձեզ պատկանող ժառանգությունն է:

Խնդրում եմ հիմա սրտանց աղոթեք զանազանության համար, որ ընդունեք Իմ Սուրբ Խոսքը, երբ այն ներկայացվի ձեզ, զավակներս: Համարեք այն ձեր կյանքի ընթացքում ձեզ տրված ամենմեծ ընծաներից մեկը: Գրկեք այն մարմնով, մտքով և հոգով: Քանի որ միայն այդ ժամանակ կգտնեք ճշմարիտ խաղաղություն:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիսիտոս

Օգնեք Ինձ փրկել բոլոր երիտասարդներին՝ ձեր հասարակության ամենախոցելիներին

Երկուշաբթի, 15 օգոստոսի, 2011թ

Իմ սիրելի աղջիկ, մինչ Իմ Հավիտենական Հայրը՝ Ամենաբարձրյալ Աստված, նախապատրաստում է աշխարհը առջևում սպասվող փոփոխությունների համար, Նա վշտի մեջ է այն մարդկանց համար, ովքեր դեռևս կույր են Իր գոյության ճշմարտության հանդեպ:

Երբ **Իմ Հայրը հիմա սկսում է հնչեցնել փոփոխությունները Երկիր Իմ Վերադարձի համար,** Նա այնքան շատ մեղք է տեսնում աշխարհում, որ վշտից լալիս է այն հոգիների անխուսափելիության համար, ովքեր հավիտյան կորած կլինեն Իր համար: Աղոթքը, փրկելու համար նրանց, ովքեր այսօր դեռևս կենդանի են աշխարհում և ովքեր կամովին շրջվել են Նրանից բացահայտ անհնազանդությամբ, չնայած գիտեն և ընդունում են Նրա գոյությունը, կարող է օգնել փրկելու նրանց հոգիները: Շարունակեք աղոթել և անձնական զոհաբերություններ անել այդ հոգիների համար, աղջիկս, քանի որ առանց աղոթքի պետք է վախենաք նրանց ապագայի համար:

Ես հենվում եմ Իմ հետևորդների վրա, որ աղոթեն կորած հոգիների համար: Ժամանակը, համոզելու համար հավատի մեջ կույրերին, որ բացեն իրեն աչքերը Հայր Աստծո գոյության ճշմարտության հանդեպ, արդեն քիչ է մնացել:

Իրար միացրեք ձեր ձեռքերը, Իմ լույսի զավակներ, որպեսզի Իմ հանդեպ ձեր սիրո և նվիրվածության շրջանը բավականին ուժեղ լինի՝ տանելու համար այն հոգիներին, ովքեր չեն հավատում կամ ընդունում Իմ կամ Իմ Սիրելի Հոր գոյությունը: Մի կտրեք հավատի այդ շղթան, երբ կարող եք հասնել փրկելու ձեր եղբայրներին և քույրերին,

ովքեր այլևս չեն հետևում Հավիտենական Կյանքի ճշմարտության ուղուն: Ընդհակառակը, քանի որ նրանք թուլացել են աշխարհիկ հմայքների գայթակղությունից, նրանց հաստատուն առաջնորդություն է հարկավոր օգնելու համար:

Մի կռվեք նրանց հետ, ովքեր չեն հավատում Աստծուն: Փայփայեք նրանց քնքշորեն: Ասացեք նրանց Իմ խաչելության մասին, և թե ինչպես Իմ Հավիտենական Հայրը կատարեց գերագույն զոհաբերությունը, որ փրկի Իր զավակներին, տալով նրանց փրկության շնորհի ընծան մեղքի թողության միջոցով:

Իմ Հայրը կոչ է անում հիմա բոլոր նրանց, ովքեր առաջին անգամ են կարդում այս պատգամները: Դուք պետք է կարդաք յուրաքանչյուր պատգամ ուշադրությամբ: Հետո աղոթեք Սուրբ Հոգուն շնորհի համար, որ կարողանաք **տեսնել, որ այս պատգամներն աստվածային ծագում ունեն:** Բացեք ձեր սիրտը, որ ստանաք Իմ խոսքը: Զգացեք Ինձ ձեր հոգու մեջ՝ խնդրելով Ինձնից հետևյալը.

<<Հիսուս, եթե այդ իսկապես Դու ես, խնդրում եմ, ողողիր հոգիս Քո սիրո նշանով, որ ես կարողանամ ճանաչել Քեզ որ այդ Դու ես: Թույլ մի տուր ինձ խաբվել ստերից: Դրա փոխարեն ցույց տուր Ինձ Քո գթասրտությունը՝ բացելով Իմ աչքերը ճշմարտության հանդեպ և երկրի վրա Քո նոր Դրախտի ճանապարհի հանդեպ>>:

Հիշեք, զավակներս, Իմ խորը քնքուշ սիրո պատճառով է, որ Ես գալիս եմ դեպի աշխարհ՝ հաղորդակցվելով ձեզ հետ այս ձևով: **Դա ձեզ շոկի մեջ գցելու համար չէ: Ձեզ վրա ազդելու համար չէ, հակառակություն կամ վիճաբանություն առաջացնելու համար չէ:** Դա **բոլոր հոգիներին փրկել օգնելու համար է, հատկապես երիտասարդ սերնդին,** ովքեր հետաքրքրություն չունեն կրոնի հանդեպ, այնքան որ զբաղված են նրանք իրենց կյանքով, ուր Աստված քիչ տեղ է զբաղեցնում: Նրանց հետ հասկանալի լեզվով խոսելու միջոցով է, որ Ես ցանկանում եմ նրանց զգոն դարձնել այն դեպքերի մասին, որոնք պատրաստ են ծավալվելու: Նրանք ձեր հասարակության ամենախոցելիներից են, զավակներս: Կենսական է, որ Ես որքան հնարավոր է շուտ հասնեմ նրանց:

Հավաքվեք հիմա, զավակներս, Ինձ հետ փրկելու համար բոլոր երիտասարդներին աշխարհում այսօր: Օգնեք Ինձ գրկել նրանց դեպի Իմ Թագավորություն, որպեսզի այդ թանկագին հոգիներից ոչ մեկը չկորչի Ինձ համար:

Ձեզ սիրող Փրկիչ համայն մարդկության

Հիսուս Քրիստոս

Ինչպես խնդրել Ինձ, որ լուծեմ ձեր անհանգստությունները

Չորեքշաբթի, 17 օգոստոսի, 2011թ, ժ 23:00

Իմ սիրելի աղջիկ, քեզ վրա հեղվող շնորհները հիմա տրվում են, որպեսզի քեզ ավելի ուժեղ դարձնեն այս աշխատանքում՝ քեզ լրացուցիչ վստահություն տալու միջոցով:

Վստահությունն Իմ հանդեպ, զավակներս, չափազանց կարևոր է: Այո, Իմ սուրբ Սրտին շատ մեծ ուրախություն է բերում, երբ դուք ճշմարտապես վստահում եք Ինձ և թողնում եք ձեր բոլոր անհանգստությունները՝ դրանք հանձնելով Ինձ, այնպես որ Ես կարող եմ հոգալ դրանք, և միայն այդ ժամանակ դուք կկարողանաք ունենալ ճշմարիտ խաղաղության զգացողություն:

Իմ զավակներից այնքան շատերն են աղոթում հատուկ նպատակների համար: Ես լսում եմ յուրաքանչյուրին: Բայց դուք, երբ ինչ-որ կարևոր բանի համար աղոթում եք Ինձ, պետք է **թողնեք ձեր ամբողջ վախը: Վախն Ինձնից չէ: Այն տրվում է ձեզ Սատանայի կողմից որպես միջոց՝ ձեզ տանջելու համար:** Մի՞թե չեք հասկանում սա: Երբ վախենում եք ինչ-որ բանից, որը զգում եք, որ ազդեցություն ունի ձեր կյանքի վրա, այդ դեպքում որքան շատ դուք վախենաք, այնքան այդ խնդիրը կթարախակալի (կվատանա):

Միայն այն ժամանակ, երբ կանգ կառնեք և կասեք Ինձ.

<<Հիսուս, ես վստահությամբ Քեզ եմ հանձնում իմ բոլոր մտահոգություններն այս հարցում, այնպես որ հիմա դա քո խնդիրն է, որ լուծես ըստ Քո Ամենասուրբ Կամքի>>,

Այդ դեպքում է, որ ձեր միտքը կլինի խաղաղության մեջ: Վստահություն ասելով Ես սա ի նկատի ունեմ, զավակներս:

Վստահությունն Իմ հանդեպ նշանակում է, որ դուք ցույց եք տալիս մեծ հավատ (վստահություն): Վստահեք Ինձ, **Ես մեռա ձեր մեղքերի համար – ձեզանից յուրքանչյուրի, ով կենդանի է հիմա նույնիսկ այս դարաշրջանում: Ինչու՞ չպետք է դուք վստահեք Ինձ:**

Ես սիրում եմ ձեզ ինչպես ոչ մի արարած այս աշխարհում: **Ոչ մեկը չի կարող սիրել և չի սիրի ձեզ այնպես, ինչես Ես եմ սիրում: Հիշեք սա միշտ:**

Գնացեք հիմա սիրով և խաղաղությամբ: Ես ձեր կողքին եմ առավոտյան, ցերեկը և գիշերը՝ պարզապես սպասելով ձեր կանչին:

Ձեր սիրող Ընկեր և Փրկիչ

Գթասրտության Թագավոր

Հիսուս Քրիստոս

Մեծ Դժբախտությունը արդեն մեղմանում է աղոթքի միջոցով

Հինգշաբթի, 18 օգոստոսի, 2011թ, ժ 20:45

Աղջիկս, Իմ այն հետևորդները, ովքեր լավ գիտեն Սուրբ Գրքերը, հակվում են տալ իրենց սեփական մարդկային բացատրությունները, որից այնքան հեշտությամբ մոռացվում է Իմ քարոզած դասը՝ մեկդ մյուսին սիրելու մասին: **Սիրեք միմյանց:** Պատվեք ձեր հորն ու մորը: Պատվեք ձեր Արարչին՝ Հայր Աստծուն, և ապրեք ինչպես Ես եմ ձեզ պատվիրել՝ **Իմ Հոր հանդեպ սիրով և վախով:**

Այնքան շատ գիտուն մարդիկ, տարված Իմ ուսուցումների վերլուծությամբ, մոռանում են մեկ բան. Այն, որ Ես նորից գալու եմ դատելու համար: Երբեք ոչ մի պահ նրանք չեն մտածում, որ այդ ժամանակը կարող է լինել նաև իրենց սեփական կյանքի ընթացքում, այլ ոչ թե հեռավոր ապագայում: Ուրեմն ինչու՞ են նրանք փնտրում և շարունակում փնտրել այլ իմաստներ Սուրբ Գրքերում, երբ ճշմարտությունն այդքան պարզ է: **Ինչու՞ նրանք չեն հիշում, որ Ես միայն սեր եմ խնդրում: Սեր Իմ՝ ձեր Փրկչի հանդեպ: Սեր՝ Հայր Աստծո և միմյանց հանդեպ:**

Այն մտածող փորձագետները, ովքեր հայտարարում են թե կարողանում են վերլուծել Իմ ուսուցումները և այնքան հեռու են գնում, որ փորձում են կանխագուշակել թե Ես երբ նորից կգամ, Ես նրանց ասում եմ հետևյալը. Եթե փորձում եք ենթադրել, թե կարողացել եք զանազանել Իմ վերադարձի տարեթիվը, ապա տխուր է, բայց դուք սխալվում եք: **Ոչ մեկին չի ասվի այդ ամսաթիվը, ոչ նույնիսկ Երկնքի հրեշտակներին, ոչ էլ Իմ Սիրելի Մորը: Բայց սա Ես կարող եմ հայտնել: Դժբախտությունը (Փորձությունը) արդեն որոշ ժամանակ է, ինչ սկսվել է: Մեծ Դժբախտությունը կսկսվի 2012թ-ի վերջին:** Այս սարսափելի ժամանակահատվածը սկսում է մեղմանալ Իմ սիրելի հետևորդների աղոթքների միջոցով: Այն նաև կնվազեցվի այն դարձի միջոցով, որը տեղի կունենա Մեծ Նախազգուշացումից հետո: Այս իրադարձությունը բարի լուր է, զավակներս: Այն օգնելու համար է, որ արմատախիլ արվի Չարի հանդեպ մարդու ստրկությունը:

Կրոնական փորձագետները գոռոզամտություն են ցուցաբերում, որն Ինձ համար նողկալի է

Տխուր է, բայց շատերը կարհամարհեն Իմ աղաչանքնեչը՝ նախապատրաստվելու համար, այնքան որ նրանք տարված են մարդկային մտածողության վրա հիմնված այսպես կոչված ինտելեկտեալ կրոնական վեճերով: Փորձելով գերազանցել միմյանց ապացուցելու համար, որ իրենցից ամեն մեկն ավելի գիտուն է, քան մյուսը: Այդ փորձագետները ցուցադրում են գոռազամտություն, որն Ինջձ համար նողկալի է: **Նրանք փարիսեցիներից ավելի լավը չեն:** Նրանց տգիտությունը փակում է ճշմարտության ճանապարհը, երբ այն ներկայացվում է հենց իրենց աչքերի առջև:

Իմ սրբազան սպասավորներն արհամարհում են Իմ խոսքը

Իմ խոսքն ընկել է խուլ ականաջների վրա: Իմ խոսքն անտեսվում է Իմ սրբազան սպասավորների կողմից, մինչ Ես փորձում եմ հաղորդակցվել նրանց հետ պատմության այս պահին: Սակայն Նախազգուշացումից հետո նրանք արդարացում չեն ունենա, եթե չնստեն ու չլսեն Իմ հրահանգները: Քանի որ այդ ժամանակ նրանք

ձեռքերը վեր պարզած կաղերսեն Ինձ, որ առաջնորդեմ իրենց Մեծ Երկնային Պատժի միջով: Քանի որ երբ այս մարգարեությունը քողազերծվի նրանց համար, ովքեր կասկածում են Իմ խոսքին, այս պատգամատարի միջոցով, Ես ձեզ կոչ եմ անում այդ ժամանակ վերցնել Իմ սուրբ գավաթը, խմել դրանից և կռվել հոգիներ փրկելու համար:

Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, ներառյալ այդ ինքնակոչ հոգևոր փորձագետներին, որ խոնարհությամբ նստեք և հարց տաք. Ինչու՞ պետք է Ես խրախուսեմ սովորական հավատացողներին սկսել քնարկում երկիր Իմ վերադարձի մասին: Հիմա ամենակարևորն այն է, որ Ես գալիս եմ: Նախապարտաստված եղեք միշտ: **Երբեք մի դատեք ուրիշներին Իմ անվամբ:** Ամեն գնով փնտրեք խոնարհության ընծան, քանի որ այն կլինի ձեր անցաթուղթը դեպի Երկինք:

Փեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ի՞նչն է, որ խրախուսում է երիտասարդներին այդքան ամաչել Ինձ համար

Ուրբաթ, 19 օգոստոսի, 2011թ, ժ 23:00

Իմ սիրելի աղջիկ, երիտսարդների հանդեպ Իմ սերը, հատկապես դեռահասների և մինչև չափահասների, չափազանց խորն է: Նրանց ծնողների նման, Ես զգում եմ սեր, երջանկություն, անհանգստություն և ներբեմն զայրույթ, մինչ հետևում եմ նրանց աճին: Ոհ, որքան է Իմ սիրտը կոտրվում, **երբ Ես լսում եմ, թե ինչպես են նրանք ասում, թե չեն հավատում Աստծուն՝ Հավիտենական Հորը:** Նրանք, զավակներս, ստիպված են ժխտել Նրան այն պայմանականության համար, որպեսզի իրենք համապատասխան երևան իրենց ընկերների կողքին, չտարբերվեն նրանցից:

Փաստն այն է, որ **երիտասարդի համար այլևս հեշտ չէ արտահայտել իրենց սեփական սերն Իմ հանդեպ,** նույնիսկ եթե նրանք ընդունում են Իմ գոյությունը: Այս բանի ընդունումը կարող է ընկճել նրանց, երբ Իմ՝ Հիսուս Քրիստոսի կամ Իմ Հավիտենական Հոր հանդեպ հավատը արհամարհվում է հանուն այսպես կոչված <<Ավելի բարձր էության>>: **Ի՞նչն է, որ նրանց այդքան խրախուսում է ամոթ զգալ Ինձ համար: Ինչու՞ են նրանք մտածում, թե իրենք պետք է հարմարվեն մի այնպիսի աշխարհի, որը զուրկ է հոգուց կամ ոգու հանդեպ մտահոգությունից:**

Երաժշտությունն ու արվեստը հսկայական ազդեցություն ունեն այդ թանկագին փոքրիկ հոգիների վրա, որոնց **չեն ասել Դրախտի կամ Դժոխքի մասին ճշմարտությունը:** Նրանք, ինչպես Իմ մյուս բոլոր զավակները, ովքեր համառորեն խուսափում են Իմ, Իմ ուսուցումների կամ Իմ Հավիտենական Հոր գոյության մասին ցանկացած ակնարկից, նույնքան մեծ հավանականությամբ կարող են կորչել ամայության մեջ:

Ծնողներ, Ես կոչ եմ անում ձեզ ասել ձեր զավակներին այս երկրի վրա նրանց գոյության մասին ճշմարտությունը: Թե որտեղից են նրանք գալիս, և այն ճակատագիրը, որը սպասվում է նրանց այս կյանքից հետո: Ձեր պարտականությունն է օգնել նրանց, որ բացեն իրենց աչքերը Իմ սիրո հանդեպ: Բերեք նրանց Ինձ մոտ քնքշորեն, բայց օգտագործեք հնարավոր ամեն միջոց նրանց հոգիները փրկելու համար: Արեք սա նրանց հանդեպ ունեցած սիրուց ելնելով:Գուցե դուք տարիներ շարունակ խուսափել եք ձեր պարտականություններից, սակայն հիմա ժամանակն է ուղղել բաց թողածը: Աղոթելով Աստվածային Գթասրտության աղոթքը նրանց հոգիների համար, դուք կարող եք փրկել նրանց: Ավելի լավ կլինի, եթե նրանք իրենք քայլեն դեպի Ինձ՝ իրենց ձեռքերն Ինձ պարզած այս կյանքում:

Երիտասարդներին Ես կասեմ հետևյալը. Եթե հավատում եք Ինձ, մի վախեցեք հրապարակայնորեն ընդունել դա: Մի մերժեք Ինձ, քանի որ Ես ձեր կյանքի գիծն եմ, առանց ում կյանք չկա: Երբ ուրիշները տեսնեն, թե որքան ուժեղ է ձեր հավատը, նրանք ավելի շատ կհակվեն իրենց սիրտը բացելու Իմ առջև: **Սա բավականին մեծ քաջություն է պահանջում ձեր կողմից, բայց Ինձնից ստացած ձեր շնորհները կգերազանցեն ձեր վախը:** Երբ դուք ասեք, որ Ես իսկապես գոյություն ունեմ, երբ նրանց ցույց տաք հարգանք և սեր և գրավեք նրանց դեպի ձեզ, նրանք կհարգեն ձեզ Իմ մասին խոսելու համար: Տարօրինակ կթվա, որ խոսեք Իմ մասին, որից անմիջապես հոտո՝ աշխարհիկ հարցերի մասին, սակայն ձեր հավատն ավելի կուժեղանա, երբ անեք դա: Դուք ոչ միայն ձեր սրտում կզգաք հսկայական սեր Իմ հանդեպ, այլև այն կփրկի ձեր ընկերների հոգիները:

Օգտագործեք ինտերնետը Իմ պատգամը տարածելու համար: Խոսեք դրանց մասին: Նշանակություն չունի, թե ով կծաղրի ձեզ: Որովհետև երբ դուք անեք դա, շատ ու շատ երիտասարդներ աշխարհով մեկ կունենան հավիտենական կյանք, դրա հետևանքով ստեղծված դարձի պատճառով:

Առաջ գնացեք հիմա, Իմ թանկագին երիտասարդ բանակ: Հիմա ժամանակն է, որ դուք խիզախություն քաղեք, տարածելու համար Իմ պատգամները, որոնք տրվում են այս սերնդին աշխարհում, հիշեցնելու համար նրանց, թե Ես ով եմ, ինչու Ես փրկեցի ձեզ բոլորիդ դժոխքի խորքերից, և ինչու եմ Ես հիմա հասնում, որ մեկ անգամ ևս փրկեմ ձեզ:

Հիմա ժամանակն է, որ Ես հասնեմ ձեզ, բռնելու համար ձեր ձեռքն Իմ ձեռքի մեջ:

Ես սիրում եմ ձեզ:

Ձեր սիրող Փրկիչ և Ընկեր

Հիսուս Քրիստոս

Փողը և չափից շատ փողը ավերում են հոգին

Կիրակի, 21 օգոստոսի, 2011թ, ժ23:00

Իմ սիրելի աղջիկ, Ես այցելում եմ քեզ այս երեկո, մինչ աշխարհը սկսում է շարունակվող դաժանությամբ դուրս ժայթքել՝ **ազգ ազգի ետևից ռմբակոծում են մեկը մյուսին** իշխանություն և փառք փնտրելով: Աղոթիր այն բոլոր հոգիների համար, ովքեր կոչնչանան այդ բռնության մեջ, որպեսզի նրանք կարողանան շնորհ գտնել Իմ Հոր Թագավորությունում:

Աղջիկս, հիմա աշխարհը կանցնի կանխասացված փոփոխությունների միջով՝ որոնք կմաքրեն նրան, որպեսզի մարդը արժանի դառնա Իմ խոստումին: Ես թույլ կտամ, որ նրանք շարունակեն **զրկվել նյութական բարիքներից** այն ագահ մարկանց կողմից, ովքեր պատասխանատու են նրանց հանկարծակի վարձակալության համար: Մինչ այս փորձություններն ուժգնանում են, այդ զավակներն ազատ կլինեն **այն երկաթե շղթաների կապանքներից, որոնք կապում են նրանց Սատանայի դատարկ խոստումներին,** նրա՝ ով գայթակղեցնում է հարուստներին՝ խոստանալով նրանց նույնիսկ **ավելի շատ**, այժմ կշարունակի բացահայտորեն ցուցադրել **գռեհիկ ցուցամոլության լկտիությունը** ողջ աշխարհին: Նա կանի դա, այնպես որ Իմ զավակները ոչ միայն կնախանձեն հարուստներին և հռչակավորներին, այլև կանեն իրենց կարողացած ամեն ինչ, որ կրկնօրինակեն նրանց: Իմ զավակներին այս բնի մեջ մտցնելով, ուր զգալի հարստության թակարդները կարևոր նպատակ կթվան հասնելու համար, նա (Սատանան) կհաջողացնի հեռացնել նրանց ճշմարտությունից:

Երբ մերկ ու ոտաբոբիկ լինեք, Ես նորից կհագցնեմ ձեզ զավակներս, միայն թե այս անգամ այն կլինի **սպառազինության մի թիկնոց՝ նախատեսված պաշտպանելու ձեզ չար մարդկանց չարությունից:** Երբ սպառազինված լինեք, դուք պատրաստ կլինեք նորից մտնել աշխարհ՝ կյանքի հանդեպ ունեցած այլ՝ տարբեր հայացքով: Մի կյանքի, երբ ձեր հարևանի հանդեպ սերը կլինի ձեզ համար թիվ մեկ նպատակը: Երբ դուք միմյանց նկատմամբ սեր եք ցույց տալիս, դուք ապացուցում եք Իմ հանդեպ ունեցած ձեր ճշմարիտ սերը:

Հարստության ու գանձների այդ ֆասադը, որն աշխարհում Իմ զավակներից շատ քչերին է հասանելի, միայն այդ է: Քանի որ դրա ետևում նյութ չկա: Դուք կխոցվեք, եթե նմանատիպ հարստություն փնտրեք, երբ խաբեբան համոզի ձեզ, թե դուք կհասնեք մեծ հարստությունների և հռչակի: Ճշմարտությունն այն է, որ մինչ զբաղված կլինեք դատարկ և անիմաստ ցանկություններ հետապնդելով, կանտեսեք Իմ հանդեպ ձեր ունեցած պարտականությունը:

Երբեք թույլ մի տվեք, որ հարստության և հռչակի ցուցադրումը գայթակղեցնի ձեզ, զավակներս, քանի որ իմացեք, որ **փողը և չափից շատ փողը ավերում են հոգին:** Նրանք, ովքեր չափից շատ փող ունեն, որը հավանական է չկարողանան ծախսել այս կյանքում, պետք է տան դա այն դժբախտ մարդկանց, ովքեր ուտելու քիչ բան ունեն: Արեք սա, և դուք կկարողանաք փրկել ձեր հոգին: Եթե ընկնում եք ծայրահեղությունների ետևից, երբ արդեն այնքան ուեք, որ կբավարարի կերակրել և հագցնել մի ամբողջ ազգի, ուրեմն սովամահ կլինեք: Կյանքի սնունդը խոնարհաբար ընդունումն է այն բանի, որ միմյանց հանդեպ սերը այն է, ինչը Ես սովորեցրել եմ ձեզ: Ձեր հարևանին սիրել նշանակում է հոգ տանել նրանց, ովքեր ոչինչ չունեն:

Արթնացեք և ընդունեք ճշմարտությունը, քանի դեռ չափազանց ուշ չէ ձեզ համար: Հսկայական նյութական հարստություն ունեցողների համար ավելի դժվար է Իմ Հոր բարեհաճությունը գտնել, եթե նրանք չկիսեն ուրիշների հետ (իրենց ունեցածը): Հիշեք սա: Նրանք, ովքեր քիչ ունեն և նախանձում են նրանց, ովքեր թվում է թե ունեն ամեն նյութական հարմարավետություն, նրանք նույնպես պետք է զգույշ լինեն: Միայն մեկ կալվածք կա, որին դուք պետք է փորձեք հասնել, և դա այն կալվածքն է, որը սպասում է ձեզ Երկրի վրա նոր Դրախտի մեջ: **Միայն սրտով, մտքով և հոգով խոնարհներին կտրվի բանալին:**

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Չարը ներկայացվում է որպես բարի, մինչդեռ բարին ներկայացվում է որպես չար

Երկուշաբթի, 22 օգոստոսի, 2011թ, ժ 20:10

Երբ մարդ քննում է իր հավատքը, նա պետք է մտածի: Եթե նա կասկածի մեջ է, ապա պետք է խնդրի Ինձ, որ բացեմ Իր աչքերը: Եթե նրա համար դժվար է աղոթելը, ապա նա պետք է խնդրի Ինձ, որ բացեմ նրա բերանը: Բայց եթե նա չի ցանկանում լսել ճշմարտությունը, նա ուրիշների աղոթքի կարիքն ունի:

Զավակներս, Ես խորապես մտահոգված են այն բանից, թե ինչպես է չարը ներկայացվում որպես բարի, մինչդեռ բարին ներկայացվում է որպես չար: **Ամեն ինչ ձեր աշխարհում հակառակ ուղղությամբ է:** Ձեզնից նրանք, ովքեր Իմ հանդեպ խորը նվիրվածություն չունեն, նրանք ավելի խելացի չեն լինի:

Հիմա աշխարհում կառավարությունների, եկեղեցու և պետությունների յուրաքանչյուր մակարդակում գործողություններ են կատարվում ձեր անվամբ, իսկ դուք մոռացկոտ եք դրանց հանդեպ:

Վատ օրենքներ են ընդունվում և ներկայացվում մարդկությանը որպես նրանց լավագույն շահերի համար: Սա ներառում է **նոր ռեժիմները, բժշկությունը, արտասահմանյան օգնությունը, վակցինացիան և նոր կրոնական ու այլ ուսմունքների** քարոզումը: Երբեք չի եղել այսպիսի խառնաշփոթություն Իմ զավակների միջև:

Արտաքուստ ամեն ինչ այնպես է թվում, ասես թե վերահսկվում է և կարգ ու կանոնի մեջ է, և այնպես է ինչպես կա: Բայց միակ իսկական կարգը, որ գոյություն ունի՝ նրանց ձեռքով է, ովքեր վերահսկում են համաշխարհային իրադարձությունները՝ թաքնված իրենց չար ուղիների հարմարավետության մեջ փակ դռների ետևում:

Մի խաբվեք, զավակներս: Դուք պետք է շրջվեք դեպի Ինձ օգնության համար, որպեսզի **գաղտնի գլոբալ ուժերի** կողմից պլանավորված չար իրադարձությունները հնարավոր լինի թուլացնել: Դեպի իրական ազատություն տանող ձեր միակ ուղին այն է, երբ դուք կվերավառեք Իմ հանդեպ ձեր ունեցած հավատը: Սա տեղի կունենա շուտով, Իմ թանկագին զավակներ, երբ Ես ներկայանամ աշխարհին Նախազգուշացման ընթացքում, որն ավելի ու ավելի է մոտենում:

Ես ձեզ կոչ եմ անում աղոթել **նրանց համար, ովքեր տեսողություն ունեն, բայց կույր են** Իմ Ամենասուրբ Խոսքի հանդեպ: Աղոթեք նրանց համար ովքեր համառորեն շուռումուռ են տալիս Իմ ուսուցումները և Իմ սրբազան սպասավորների համար, ովքեր վախկոտությունից ելնելով տեղի են տալիս կառավարությունների կողմից իրենց ներկայացված պահանջներին:

Հիմա միայն մեկ կառավարող կա, ով պատասխանատու է ապագայի համար, և դա Իմ Հավիտենական Հայրն է՝ ամեն բանի Արարիչ ու Ստեղծող Աստվածը: Ամենից առաջ հավատարիմ եղեք Նրան և դուք հաստատուն պատվար կգտնեք ճշմարտության ճանապարհով առաջ գնալիս:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ոչ մի մեղք այնքան ծանր չէ, որ հնարավոր չլինի ներել

Երեքշաբթի, 23 օգոստոսի, 2011թ, ժ 23:45

Աղջիկս, հիմա դու սկսում ես հասկանալ տառապանքի ճշմարտությունը: Երբ Ես խնդրում եմ ընտրյալ հոգիներին տառապել, նրանք տառապում են այնպես, ինչպես Ես տառապեցի Իմ խաչելության ժամանակ Իմ տանջանքների ընթացքում: Ճիշտ այնպես, ինչպես Իմ մահը փրկեց մարդուն մեղքից, ձեր տառապանքը կարող է փրկել մարդկանց հավիտենական դատապարտությունից: Կամովին կերպով առաջարկելով ձեր տառապանքը, դուք զոհաբերություն եք կատարում, որպեսզի մարդկության հոգիներին ցույց տրվի Աստծո գթասրտությունը:

Եթե Ես ավելի շատ հոգիների խնդրեի դա անել, նրանք կվախենան և կհրաժարվեն: Սակայն **շատ հոգիներ են տառապում, ովքեր չգիտեն, որ իրենք ընտրյալ հոգիներ են:** Իմ զավակներից շատերը հարցնում են, թե ինչու են որոշ մարդիկ տառապում, իսկ որոշները՝ ոչ: Իմ պատասխանը սա է, որ **Ես ընտրում եմ այն տեսակի սրտերը, ովքեր խոնարհություն են ցույց տալիս այս կյանքում,** նրանց, ովքեր ուրիշների կարիքները դնում են իրենց սեփական կարիքներից առաջ: Քնքուշ սրտի հոգին իր վրա է վերցնում տառապանքի դերն Ինձ համար: Սա մի ընծա է Իմ կողմից: Դա կարող է ընծա չթվալ, բայց երբ ձեզ տրվում է այս ընծան, դուք փրկում եք հազարավոր հոգինիերի ամեն օր Իմ անունից:

Ես հիմա ցանկանում եմ խնդրել Իմ հետևորդներին, որ ամեն օր մի զոհողություն անեն՝ տառապանքին մոտիկ, որպեսզի օգնեն Ինձ փրկելու մահացու մեղքի մեջ գտնվող հոգիներին Նախազգուշացման ընթացքում նրանց մահվան պահին: Խնդրում եմ, խնդրեք Ինձնից այդ ընծան: Սրտով խոնարհներին Ես նաև խնդրում եմ, որ նրանք կատարեն մեկ անձնական զոհողություն Իմ Փառքի համար: Նրանք, ովքեր զգում են, որ չեն կարող դա անել, ապա Ես կօրհնեմ ձեզ Իմ յուրահատուկ շնորհներով, որովհետև Ես գիտեմ, որ ձեր գոյություն ունեցող սերն Իմ հանդեպ և ձեր աղոթքներն արդեն իսկ փրկում են ձեր եղբայրների և քույրերի կյանքերը:

Զավակներս, իմացեք հետևյալը: Իմ հետևորդների բանակը օր օրի աճում է այս պատգամների պատճառով: **Շուտով այն կդառնա միլիոնավորների բանակ:** Ես կոչ եմ անում միայն նրանց, ովքեր բավականին խիզախ են վերցնելու Իմ ձեռնոցը: Քաջության արմատը սերն է: Քաջության մասին մեկի բացատրությունը կտարբերվի մյուսի բացատրությունից: Ես պարզապես ձեզ խնդրում եմ, որ աշխարհին ասեք Իմ սիրո մասին: Հիշեցրեք նրանց Սուրբ Գրքերում պարունակվող ճշմարտության մասին: Ասացեք նրանց, որ Ես վերադառնում եմ՝ առաջարկելու համար իրենց Իմ Գթասրտության մեծ ընծան շուտով: Քանի որ, **եթե Ես գալու լինեի այսքան շուտ ձեր աշխարհ՝ դատելու համար, ապա Երկինքը կամայանար,** այնքան որ լայնածավալ է մեղքն այսօր:

Տարածեք Իմ բարի լուրը: Հիշեցրեք նրանց, որ երբ նրանք սեր են զգում, իսկական, մաքուր սեր որևէ մեկի հանդեպ, նույնիսկ եթե դա լինի մի անցողիկ հայացք կամ մի բարի արարք, որին ականատես եք, ապա Ես ներկա եմ այդ ժամանակ:

Ասացեք նրանց, որ առանց Իմ սիրո իրենք կխորշոմեն և կդառնան ոչինչ:

Ասացեք նրանց, որ երբ Ես տեսնում եմ իրենց, նրանք մերկ են, առանց աշխարհիկ ունեցվածքի Իմ աչքի առաջ: Ես տեսնում եմ միայն նրանց հոգու մեջ եղած լավը կամ վատը:

Այն խեղճ վախեցած հոգիներին, ովքեր ամաչում են իրենց կենսակերպի համար, ասացեք նրանց, **որ Ես ներող եմ, ամենագթառատ** և կողջունեմ իրենց Իմ բացված և սիրող բազուկների մեջ: Նրանք միայն պետք է քայլեն դեպի Ինձ և խնդրեն, որ Ես օգնեմ իրենց: **Ես երբեք չեմ շրջվի մեղավորների աղերսանքներից, որքան էլ մութ լինեն նրանց մեղքերը:** Ես ներում եմ բոլոր նրանց, ովքեր ճշմարիտ խղճի խայթ են զգում նախկինում իրենց կատարած ցանկացած վիրավորանքի համար:

Նրանց սրտերն ավելի թեթև կդառնան, և Իմ սերը ետ կբերի լույսը իրենց կյանքի մեջ: Ես նորից կգամ Փառքով, զավակներս, ոչ թե ձեզ վախեցնելու համար, այլ ձեզ Իմ ընծաները բերելու համար, այն նույն ընծաները, որոնք դուք մերժել եք Սատանայի գործերի միջոցով:

Եկեք, խոնարհեք ձեր գլուխները: Մի կողմ հրեք ձեր ամոթը, և խնդրեք Ինձ որ ներեմ ձեզ հիմա: Ինչ ոչինչ չի զարմացնում զավակներս: Ոչ մի մեղք այնքան մեծ չէ, որ Ես չկարողանամ ներել, եթե ճշմարիտ ապաշխարում եք: Մի ուշացրեք: Թողություն (ազատագրում) փնտրեք հիմա, քանի դեռ չափազանց ուշ չէ:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Մարդկության Փրկիչ

Այս մարգարեի միջոցով կանխասացված մարգարեությունները՝ այժմ կատարվելիս

Չորեքշաբթի, 24 օգոստոսի, 2011թ, ժ 16:38

Իմ սիրելի աղջիկ, աշխարհի բոլոր ազգերը կձգտեն կարդալ քեզ տրված Իմ պատգամները: Քանի որ երբ նրանք ականատես լինեն Նախազգուշացմանը, այդ ժամանակ նրանք կփնտրեն Իմ առաջնորդությունը, որ իրենց ուժ տամ:

Հիմա դու հոգնած ես, աղջիկս, մինչ տառապանքն ավելանում է, բայց դու ժամանակավոր թեթևացում կստանաս մի քանի օրից: Այս ամենը պահանջվում է քեզնից, որովհետև Ես այդ տառապանքի կարիքն ունեմ, որ օգնի Ինձ ազատելու սարսափելի մեղքի մեջ գտնվող մարդկանց: Փորձիր և տես այն օգուտները, որ այն բերում է, քանի որ մի օր դու կուրախանաս Ինձ հետ, երբ տեսնես այս աշխատանքի պտուղները:

Առաջ գնացեք, զավակներս, զորությամբ, քանի որ ինչպես այս մարգարեի միջոցով կանխասացված մարգարեություններն են ծավալվում, նույնպես կլինի այս վեր կայքի վավերականությունը:

Աղոթեք հիմա, զավակներս, որ դուք՝ Իմ բանակը, աճի թվով և միավորվի որպես մեկ, կռվելու համար այն հոգևոր մարտում, որն առջևում է:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Հիմա մի շարք երկրներ կզգան կլիմայական քաոս: Իմ Հայրը բարկացած է

Հինգշաբթի, 25 օգոստոսի, 2011թ, ժ 20:00

Իմ սիրելին, կոչ արա Իմ բոլոր աղոթքի մարտիկներին, որ աղոթեն մյուսների համար: Դրանց թվում են չհավատացողները և բռնության ու ատելության թակարդի մեջ ընկածները: Նրանք հուսահատորեն թափառում են՝ փորձելով գտնել սեր և խաղաղություն իրենց կյանքում, և չեն կարողանում գտնել: Դուք պետք է շատ աղոթեք այդպիսիների համար, որովհետև առանց ձեր աղոթքների նրանք կընկղմվեն

դժոխքի կրակների մեջ: Թույլ մի տվեք որ դա տեղի ունենա: Եթե հնարավոր լինի նրանց գեթ մի փոքր խրախուսել, որ քայլեն դեպի Ինձ և նախապատրաստված լինեն լսելու Իմ խոսքերը, նրանց կտրվի շնորհերը, որպեսզի Ես կարողանամ վերցնել նրանց Իմ բազուկների մեջ:

Աղջիկս, աշխարհը պետք է հիմա նստի և ուշ դնի Ինձ: Շատ շուտով նրանք ականատես կլինեն մի շարք երկրաշարժերի և ջրհեղեղների: Մի շարք երկրներում քաոս կտիրի կլիմայական աղետների միջոցով: Սրանք այն պատիժներն են, որոնք Իմ Հայրը նետում է ցած մարդկության վրա: Մեղքը կպատժվի, աղջիկս, և այն երկրները, որոնք **մեղավոր են արորտ քարոզելու մեջ, չեն խուսափի Իմ Հոր ձեռքից,** որովհետև այն կիջնի: Աղոթքի միջոցով խույս են տրվել պատժի այսպիսի գործերից, սակայն մարդը շարունակում է մեղք գործել և վիրավորել Իմ Հորը պիղծ ու գարշելի արարքներով, որոնք մարդը կատարում է մարդու դեմ, ներառյալ արգանդի մեջ գտնվող անմեղ երեխաների:

Ես կոչ եմ անում ձեզ աղոթել Իմ զավակների համար **այն երկրներում, որոնք չեն խուսափի այս պատժից:** Իմ Հայրը բարկացած է: Նա այլևս ետ չի նստի և նայի, թե ինչպես է մարդը ոչնչացնում մարդկությունը: Երկիրը կպայթի, եթե մարդուն չստիպեն կանգ առնել: Նա, Իմ սիրելի Հայրը, ետ կպահի այդ պատժի մեծ մասը մինչը Նախազգուշացումը: Դրանից հետո, չնայած դրանից հետո եղած դարձին, մարդիկ կշարունակեն ետ դառնալ դեպի մեղքը: Սպասվող պատիժները նրա համար են, որ մարդկանց ցույց տան, թե որքան կոպիտ կարող է Իմ Հայրը լինել: Նա սիրում է Իր բոլոր զավակներին, բայց Նա ստեղծել է այս աշխարհը, և մարդուն պարզապես թույլ չի տրվի ոչնչացնել այն:

Աղոթեք հիմա, զավակներս, ձեր բոլոր եղբայրների ու քույրերի համար:

Հիսուս Քրիստոս

Մարդկության Թագավոր

Պատգամ հոգևորականներին – թույլ մի տվեք որ աշխարհիկ հասարակությունը ճնշի ձեզ վրա

Շաբաթ, 27 օգոստոսի, 2011թ

Աղջիկս, եթե միայն ավելի շատ քահանաներ ու եկեղեցու անդամներ բացեին իրենց մտքերն ու **ընդունեին, որ Ես խոսում եմ հիմա աշխարհի հետ** այս պատգամների միջոցով, Իմ սիրտն ավելի թեթև կլիներ:

Իմ նվիրյալ հետևորդներն են, որ պահում են կանթեղը վառված, մինչ առաջ են գնում տարածելու համար Իմ նախազգուշացումներն աշխարհին, որ խրախուսեն Իմ զավակներին ազատագրել իրենք իրենց Իմ աչքերում: Ոհ, որքան է Ինձ տխրեցում տեսնել, թե ինչքան փակ են այն սրբազան սպասավորների մտքերը, ովքեր ձևացնում

են, թե հաղորդում են Իմ խոսքը, Իմ ուսուցումներն աշխարհին: Նրանք կոտրում են Իմ սիրտը, այնքան կարծր են դարձել նրանց սրտերը:

Իմ ուսուցումները ընդունում են այն փաստը, որ աստվածային հայտնությունները տեղի են ունենում և տեղի են ունեցել ժամանակի սկզբից ի վեր: Մի՞թե նրանք կարծում են, թե Իմ Մայրն ու Ես չենք հաղորդակցվի Իմ զավակների հետ դարերի ընթացքում: Նրանք երջանիկ են, որ ուշադրություն են դարձնում մահացած սրբերի խոսքերին, որոնց պատգամները վաղուց են տրվել աշխարհին: Բայց այդպես չեն այսօրվա համար: Այս անգամ տարբերությունն այն է, որ նրանց ժամանակ չի տրվի որ կարողանան մարսել այս պատգամները այդ իրադարձությունից հետո: Որովհետև այլև ժամանակ չի լինի, ինչպես գիտեք:

Ես կոչ եմ անում ձեզ՝ Իմ սրբազան սպասավորներին և Իմ Սուրբ Երեցին, որ կարդաք մարդկությանը հիմա տրվող Իմ խոսքերը: Դուք երբեք Իմ միջամտության կարիը չեք ունեցել աշխարհիկ իրադարձությունների մեջ, որքան հիմա: Հիշեք, որ Ես վեր բարձրացա մեռածներից և խոստացա, որ նորից ետ կգամ: Որքանո՞վ եք դուք հիմա նախապատրաստված: Որքա՞ն հաճախ եք հիշեցնում Իմ զավակներին անհրաժեշտությունը, որ իրենք իրենց ազատագրեն Իմ աչքում: Որքա՞ն հաճախ եք կամենում լսել Իմ զավակների մեղքերը, երբ այդքան զբաղված եք: Ժամանակ չի հատկացվում խոստովանություններ լսելուն: Դուք Ինձ ցածրացրել եք, Իմ սրբազան սպասավորներ, և դրա համար դուք Ինձ մեծապես վիրավորում եք: Սուրբ խորհուրդների հանդեպ Իմ զավակների իրավունքը մերժելն աններելի է: Արթնացեք հիմա և հետևեք Իմ ցուցումներին: Կատարեք Իմ զավակների հանդեպ ձեր պարտականությունը, ինչպես որ խոստացել եք Ինձ ձեր Սրբազան Երդման ժամանակ: Խնդրում եմ, մի շրջեք ձեր մեջքն Իմ ուսուցումների հանդեպ:

Հավատքը, և հատկապես Իմ սրբազան սպասավորների հավատքը, զգալիորեն թուլանում է: Դա տեղի է ունենում Սատանայի անեծքի միջոցով, ով սկսել է քայլել ձեր մեջ որոշ ժամանակից ի վեր, ստեղծելով ավերածություն Իմ Եկեղեցու ներսում և դրսից: Հիշեք սա Իմ սրբազան սպասավորներ, որ Սատանան գործում է: Դուք երբեք չպետք է տեղի տաք նրա տանջանքներին, որպեսզի չհեռանաք Իմ հանդեպ ձեր ունեցած պարտավորությունից:

Լսեք Ինձ հիմա: Ուշ դարձրեք Իմ նախազգուշացումներին և նախապատրաստեք Իմ հոտը, որ նրանք կարողանան ազատագրում փնտրել իրենց մեղքերից հիմա: Ուրեմն շարժվեք, որ Իմ եկեղեցին շարունակի մարտնչել Իմ ոսուցումների ճշմարտության համար և **թույլ չտա աշխարհիկ հասարակության ճնշումն իր վրա՝ վախից կծկվելով անկյուն մտնելու:** Քանի որ եթե դուք այդ անեք, դուք տեղի կտաք Չարի գայթակղություններին, որի ստերն արդեն ոչնչացրել են Իմ եկեղեցու մեծ մասը:

Դուք Իմ փրկապարանն եք Իմ սրբազան սպասավորներ, և Ես հիմա ձեր կարիքն ունեմ, որ օգնեք Ինձ փրկել Իմ թանկագին զավակներին մինչ նրանք կանգնած են այն տառապանքների առջև, որոնք շրջում են նրանց մտքերն Իմ ոսւուցումներից և Իմ Հավիտենական Հոր գոյությունից:

Հիմա Ես ձեզ կոչ եմ անում լսել Ինձ երբ Ես կանչում եմ ձեզ:

Ձեր սիրող Ուսուցիչ

Հիսուս Քրիստոս

Շատ հոգիներ են ոչնչանում հիմա դժոխքում պոռնոգրաֆիայի մեղքի պատճառով

Կիրակի, 28 օգոստոսի, 2011թ, ժ 17:00

Իմ սիրելի աղջիկ, լսիր Իմ Ամենասուրբ Խոսքը մինչ Ես նախազգուշացնում եմ մարդկությանը իրենց մեղքերի համար Իմ Հորից թողություն խնդրելու հրատապության մասին:

Հիմա ժամանակը կարճ է, քանի որ Նախազգուշացումը համարյա մեզ վրա է: Երբեք վաղվան մի թող այն, ինչ պետք է անես այսօր: **Ձեր մեղքերի համար զղջումը չափազանց կարևոր է,** նախքան թողություն կխնդրեք, որ ձեր մեղքերը ներվեն: Քանի որ առանց ճշմարիտ զղջման անիմաստ է թողություն խնդրել:

Այնքան շատ սևացած հոգիներ եմ Ես տեսնում ձեր աշխարհում աղջիկս: Շատ քիչ լույս կա, և եթե տեսնեիր թե որքան ներքև է մարդ ընկել, կցնցվեիր: Իմ զավակներից այնքան միլիոնավորներն են **ընկղմվում ամեն օր մեղսալից քայքայման անդունդի մեջ,** որի միջից նրանց համար անհնարին կդառնա դուրս գալ, եթե չաղոթեք նրանց համար: Նրանք կույր են ճշմարտության հանդեպ, և նույնիկս եթե նրանց ցույց տրվեր հիմա Իմ լույսը, նրանք կկծկվեին և կթաքնվեին Ինձնից: Աղոթեք նրանց համար:

Իմ զավակները, ովքեր մեղավոր են ատելի մեղքի մեջ, ուրախանում են այն փաստից, որ իրենց չար վարքագծի համար ծափահարում են որպես զվարճության արժեք ունեցող բան: **Պոռնոգրաֆիան հոսում է այնքան շատ տների մեջ** այսօր աշխարհում **հեռուստաալիքների միջոցով, որոնք ներկայացնում են այդ չար վայրագությունները որպես անվնաս հումորով զվարճանք:** Հենց այն նույն հեռուստաալիքների միջոցով, որոնք մերժում են տալ Իմ անունը: **Բռնությունը նույնպես շքեղորեն ցուցադրվում է** ոչ միայն հեռուստատեսությամբ, այլև խաղերի մեջ՝ դրանք դարձնելով այնքան ընդունելի, որ մարդիկ հիմա բռնության գործողությունը համարում են բնական բան:

Սատանայի դևերը, երբ նրանք մտնում են հոգիների մեջ, սկսում են ցուցադրել իրենց մարդկային մարմնի մեջ այնպես, որ նրանց արարքները դառնում են հստակորեն տեսանելի Իմ հետևորդներին, ովքեր սարսափից կծկվում են այն ամենից, ինչի ստիպված են ականատես լինել: **Մարդկային մարմինը, որի մեջ ներթափանցել են սատանայական դևերը, զավեշտական վարքագիծ է ցուցաբերում:** Նրանց ֆիզիկական շարժումներն աղավաղված են լինում և հետամուտ են Չարի կողմից պարտադրվող սատանայական պատգամներին, որպեսզի գայթակղեցնեն նմանատիպ մտածողություն ունեցող թույլ մարդկանց: Թույլ հոգիները, դատարկ Աստծո հանդեպ սիրուց, կձգվեն դեպի նրանք և վերջնականապես կհետևեն նրանց, մինչև որ իրենք

նույնպես կպատվեն Սատանային և այն ամենին, ինչին նա կողմնակից է, իրենց վարվեցողությամբ:

Զավակներս, չե՞ք կարողանում տեսնել, թե ինչպես է Սատանան աշխատում: Իմ հետևորդներ, դուք պետք է ասեք նրանց, ովքեր չեն հասկանում, թե ինչպես է նա աշխատում պոռնոգրաֆիկ բիզնեսում: Դա այն է, երբ Սատանան սկսում է ոչնչացնել հոգիներ և ներքաշել մասնակիցներին հավիտենական կրակի մեջ: Նրանք, ովքեր մեղավոր են սեռական շեղված վարքագծի մեջ և նրանք, ովքեր ցուցադրում են իրենց մարմինները անպարկեշտ անբարոյական ձևով, կտառապեն սարսափելի ցավերով հավիտենության մեջ:

Օգնեք փրկել նրանց հիմա, զավակներս, քանի որ նրանք գաղափար չունեն, թե ինչպես է **իրենց անբարոյական անմաքրությունը ատելի Ինձ համար:** Նրանք ծածկված են խավարի մեջ: Բերեք նրանց Ինձ մոտ, այնպես որ Իմ լույսը կարողանա գրկել նրանց և փրկել նրանց դժոխքի կրակներից:

Մարմնի մեղքերն ատելի են Ինձ համար: Այնքան շատ հոգիներ են ոչնչանում դժոխքում պոռնոգրաֆիայի մեղքի և սեռական շեղված արարքների պատճառով: Թող նրանք իմանան, թե ինչ ճակատագիր է սպասվում իրենց եթե չզղջան:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Նրանք, ովքեր հայտարարում են Իմ ճշմարիտ խոսքը տեսանողների միջոցով, կծաղրվեն

Կիրակի, 28 օգոստոսի, 2011թ, ժ 23:00

Իմ սիրելի աղջիկ, Սատանան և իր չարքերը փորձում են տանջել քեզ հիմա: Դու պետք է ընդունես այս փաստը, իսկ հետո շրջես մեջքդ: Մի պատասխանիր կամ ընդգրկվիր խոսակցության մեջ, քանի որ երբ պատասխանում ես, Չարին ավելի շատ իշխանություն ես տալիս քեզ վրա: Արհամարհիր նրա խայթոցները և բռնիր Իմ ձեռքը, քանի որ Ես կանգնած եմ քո կողքին, որ պաշտպանեմ քեզ այդպիսի վնասից:

Ասա Իմ հետևորդներին, որ մինչ վերցնում են Իմ Գավաթը և առաջ քայլում տարածելու համար երկիր Իմ վերադարձի մասին ճշմարտությունը, իրենք նույնպես կտառապեն: Նրանց կվիրավորեն, կծաղրեն և կստիպեն իրենց հիմարի պես զգալ, երբ խոսեն Իմ անվամբ: Ասա նրանց, որ երբ դա պատահի, այդ ժամանակ այս պատգամների հանդեպ նրանց ունեցած բոլոր կասկածները կանհետանան: Զավակներս, միշտ հասկացեք, որ **նրանք, ովքեր հայտարարում են Իմ անունը իսկական տեսանողների միջոցով, ծաղրի կարժանանան,** ճիշտ ինչպես այն ընտրյալ հոգուն են ծաղրում, ում դերը Իմ պատգամներն աշխարհին հաղորդելն է: Դուք, Իմ բանակ, տարբեր չեք լինի: Սա ձեզ համար դժվար դաս կլինի, որ հասկանաք: Իմացեք,

որ դուք **միշտ կտառապեք այս կյանքում, երբ քայլեք Ինձ հետ:** Իմացեք նաև, որ միայն այդ ժամանակ կհասկանաք, որ կրում եք Իմ խաչը: Քանի որ միայն այդ դեպքում դուք կկարողանաք խոսել Իմ խոսքը: Իմ ոչ մի մարգարեի, ոչ մի առաքյալի համար այս ճանապարհը հեշտ չի եղել: Դուք պետք է աղոթեք, որ ուժ ստանաք դիմանալու համար **այդ փորձություններին, որոնք ծայրահեղ չափով կփորձեն ձեր հավատը:**

Երբ դուք բռնում եք Իմ խաչը՝ Իմ բեռը թեթևացնելու համար, ձեր բեռը կավելանա: Եթե դուք վստահեք Ինձ ամբողջապես, փաթաթեք ձեր բազուկներն Իմ բազուկների մեջ, Ես կպահեմ ձեզ, որ տամ ձեզ այն ուժը որի կարիքն ունեք այս ճամփորդության համար: Մի ճամփորդություն՝ այնքան ծածկված փշերով, որ ձեր ոտքերը կարյունոտվեն, սակայն ձեր հավատքն այնքան ուժեղ կլինի, որ չեք կարողանա ապրել ձեր կյանքն առանց Իմ զուլալ սիրո:

Դուք, Իմ սիրելի զավակներս, Իմ թանկագին բանակն եք: Մի օր դուք կգծեք **Երկնքում արահետները փառապանծ զարմանքով, ուր հրեշտակները գովաբանություն կերգեն** այն աշխատանքի մասին, որը դուք կատարել եք երկրի վրա ձեր կյանքի ընթացքում Ինձ համար: Ես պարգևատրում եմ Իմ բոլոր նվիրյալ հետևորդներին Իմ հանդեպ ունեցած իրենց հավատարմության և անսասան սիրո համար: Օրհնյալ եք դուք, Իմ ընտրյալ հոգիներ, որ ձեզ տրվել է ճշմարտությունը տեսնելու ընծան, մինչ ուրիշները պարզապես իրենց մեջքն են շրջում:

Հիշեք, հիմա ձեզ տրվում է Սուրբ Հոգու ընծան, և որպես դրա արդյունք, դուք չեք կարողանա ժխտել Ինձ: Այս ուղին, այնուամենայնիվ, լի կլինի ժայռերով, որոնք կվնասեն ձեր ոտքերը, խոշոր ժայռաբեկորներով՝ ձեր ճանապարհը շեղելու համար, և հաստատուն ձևով կանգնած կլինեն, որ ստիպեն և սպառնան ձեզ ետ դառնալ այն ճանապարհից, որով գնում եք:

Վեր բարձրացրեք ձեր ձեռքը մեղմ հորդորանքով և ասեք.

Ես երբեք չեմ մերժի Տիրոջ ճանապարհը: Ոչ էլ երբևէ կմերժեմ Հիսուս Քրիստոսի գոյությունը, ում մարդկությունը փորձում է ոչնչացնել ոչ միայն խաչի վրա Իր տառապանքի ժամանակ, այլ նաև դրանից հետո: Ես մեկ եմ Հիսուս Քրիստոսի հետ: Ես խոսում եմ Նրա անվամբ: Նա ինձ վեր է բարձրացնում, որպեսզի ես նույնպես, իմ խոնարհ ձևով, օգնեմ բացելու ձեր սիրտը այն զուլալ սիրո հանդեպ, որը Նա ունի Իր սրտի մեջ միայն և միայն ձեզ համար:

Իմ թանկագին բանակ, բարձրացեք հիմա, երբ Ես ձեզ առաջնորդում եմ խորդուբորդ, բայց աստվածային ուղիով դեպի Երկրի վրա Նոր Դրախտը, որը սպասում է ձեզ: Խնդրում եմ, ապահովեք, որ ճանպարհին ձեզ հետ հավաքեք որքան հնարավոր է շատ թափառող զավակների, որպեսզի մենք կարողանանք միավորվել որպես մեկ ընտանիք:

Ձեր սիրող Հիսուս

Ազատարար և Առաջնորդ ողջ մարդկության

Հայր Աստված. <<Իմ ձեռքն ուժով կիջնի այն ազգերի վրա, որոնք օրինականացնում են աբորտը>>

Երկուշաբթի, 29 օգոստոսի, 2011թ

Ես գալիս ես Իմ Որդի Հիսուս Քրիստոսի անունով: Ես Ալֆան եմ և Օմեգան՝ Ամենաբարձրյալ Աստված: Ես ցանկանում եմ Իմ զավակներին խոսք տալ այս պատգամի մասին:

Իմ ձեռքը ետ է պահվում աղոթքի զորությամբ մարդկությանը պատժելուց այն մեղքերի համար, որոնք նա կատարում է: **Ես մի դաժան երկնային պատիժ կուղարկեմ,** եթե մարդիկ ետ չկանգնեն սպանության և աբորտի մեղքից: Դուք արդեն տեսել եք Իմ զայրույթը, զավակներս, երկրաշարժերի, ջրհեղեղների, ցունամիների և այլ էկոլոգիական ավերածությունների միջոցով: Ես պետք է պատժեմ ձեզ, զավակներս, **քանի որ դուք չեք կարող խուսափել պատժից** ձեր ընկեր մարդու հանդեպ կատարած ձեր վիրավորանքների համար:

Աբորտի մեղքը կպատժվի, երբ **Իմ ձեռքն ուժով իջնի այն ազգերի վրա, ովքեր կատարում են այդ պղծությունը:** Ձեզ թույլ չի տրվի սպանել Իմ անօգնական արարածներին, և եթե ձեր կառավարությունները շարունակեն ընդունել օրենքներ՝ խրախուսելով այդ ստոր գործը, ապա դուք կտեսնեք **Իմ զայրույթն իջած այնպիսի ուժով, որ կխնդրեք խնայել ձեր կյանքը:** Սակայն դուք երբեք չեք դադարում մտածել խլելու համար չծնվածների կյանքը:

Ես այլևս թույլ չեմ տա սպանություն: **Ձեզ կստիպեն կանգ առնել, և շուտով:** Աղոթեք այդ անօգնական արարածների հոգիների համար և թողություն խնդրեք: **Մի ընդունեք ձեր կառավարությունների կողմից անցկացված այդպիսի օրենքներ, որոնք ղեկավարվում են հեթանոսների կողմից, ովքեր հարգանք չունեն կյանքի հանդեպ:**

Իմ պատիժը այն երկրների հանդեպ, որոնք օրինականացնում են աբորտը, ազգեր կվերացնի: Ձեր երկրները կբաժանվեն փոքր կտորների և կընկնեն օվկիանոսի մեջ: Ձեր ստոր կլինիկաներն ու հիվանդանցոները, ուր դուք կատարում եք դա, կփակվեն և դուք, ձեր միջի մեղավորները, **կնետվեք դժոխքի կրակների մեջ ձեր գազանային ոճիրների համար:**

Ես գալիս եմ ձեզ տալու համար այս Նախազգուշացումը հիմա: Երբեք մի խրախուսեք աբորտը: Ամուր կանգնեք ձեր երկրներում և պայքարեք արգելելու համար շարունակվող գլոբալ ցեղասպանությունը: Եթե ձեր կառավարությունները շարունակեն պարտադրել իրենց սարսափի գործողությունը Իմ արարչության հանդեպ, ուժեղ նախատինքի կարժանանաք:

Ուշ դարձրեք հիմա սրան՝ մարդկային ռասային տրվող Իմ ամենահրատապ նախազգուշացումներից մեկին: **Խլեք Իմ չծնվածների կյանքը, և Ես կխլեմ ձերը:** Շատ աղոթեք զավակներս, բոլոր զավակների հավատի համար, քանի որ նրանք շարունակում են անտեսել ժամանկների սկզբից ի վեր ձեզ տրված ուսուցումները:

Հայր Աստված

Ընտրեք հոգիների, որոնց ճանաչում եք, և եկեք Իմ Հոր Գահի առաջ, որ փրկեք նրանց

Երեքշաբթի, 30 օգոստոսի, 2011թ, ժ 14:30

Իմ սիրելի աղջիկ, Իմ սիրտը ծանրացած է վշտից երբ Ես նայում եմ Իմ թանկագին զավակներին, ովքեր մոռացկոտ են այն փոփոխությունների հանդեպ, որ առջևում են:

Ես նրանց այնքան շատ եմ սիրում, որ լալիս եմ խորը տխրությամբ, երբ տեսնում եմ նրանց թափառելիս Ինձ փնտրելով, բայց չեն կարողանում այդ անել: **Նրանք գիտեն, որ իրենց կյանքում մի պակասող օղակ կա, սակայն չեն կարողանում գտնել, թե ինչն է դա:** Այդ օղակը սերն է: Ես սեր եմ: Ես այն եմ, ինչ նրանք փնտրում են, բայց նրանք չգիտեն, թե ուր նայեն: Չնայած դրան Ես կանգնած եմ այնտեղ՝ սպասելով ու սպասելով համբերատար ձևով, որ նրանք շրջվեն դեպի Ինձ:

Այնքան շատ ժամանակ է անտեղի վատնվում, աղջիկս: Իմ զավակները նայում են բոլոր սխալ տեղերում՝ փնտրելով այն բավարարվածությունը եւ խաղաղությունը, որին ձգտում են: Բայց նրանք չեն կարողանա գտնել դա մինչև չընդունեն, որ միայն խոնարհության միջոցով հնարավոր կլինի անել այդ:

Մինչև Իմ զավակները չհասկանան, **որ իրենք չեն կարող գոյություն ունենալ առանց Իմ Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո հանդեպ սիրո,** նրանք կմեռնեն դատարկ սիրուց ու խաղաղությունից իրենց սրտերի մեջ: **Ես հոգնած եմ, աղջիկս: Եթե միայն նրանք, ովքեր Ինձ դուրս են թողել, շրջվեին դեպի Ինձ:** Եթե միայն նրանք դադարեցնեին իշխանության, փողի և աշխարհիկ ունեցվածքի փառքի հանդեպ իրենց ձգտումը, այդ ժամանակ նրանք կճանաչեին ճշմարտությունը:

Ես կարիք ունեմ, որ Իմ բոլոր հետևորդները շարունակեն աղոթել կույր հոգիների համար, ովքեր կորած են: Երբեք տեղի չտաք, քանի որ ձեր աղոթքները կբերվեն Իմ Հոր գահի առաջ այս շաբաթ: Խնդրում եմ, ասեք հետևյալը.

Աստված Ամենաբարձրյալ, ես գալիս եմ Քո գահի առջև այս շաբաթ՝ խնդրելու իմ եղբայրների ու քույրերի հոգիների համար, ովքեր մերժում են ճանաչել Քո գոյությունը: Ես կոչ եմ անում Քեզ, որ լցնես նրանց Քո շնորհներով, որպեսզի նրանք բացեն իրենց սրտերը՝ լսելու համար Քո Ամենասուրբ Խոսքը:

Խնդրում եմ, ընտրեք այդ հոգիներին, ում դուք ճանաչում եք, և ովքեր չեն ցանկանում ճանաչել Հայր Աստծուն, և դրեք նրանց անունները Իմ Հոր առջև: Ձեր աղոթքի ընծան կպարգևատրվի նրանց փրկությամբ: Գնացեք հիմա, Իմ բանակ, և նախապատրաստվեք Չարի դեմ մղվող այս հոգևոր մարտի հաջորդ փուլին:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Իմ բանակը կաճի մինչև 20 միլիոն

Չորեքշաբթի, 31 օգոստոսի, 2011թ, ժ 21:00

Իմ սիրելի աղջիկ, այն սերը, որը Ես ունեմ քո և Իմ հետևորդների հանդեպ, անցնում է Իմ միջով և Ինձ մեծ ուրախություն է պատճառում: Որքան եմ Ես սիրում ձեզ բոլորիդ: Ձեր նվիրվածությունը, խոնարհությունը, վստահությունը և մաքուր սերն Իմ հանդեպ օր օրի ավելի է ուժեղանում: Կարողանու՞մ եք զգալ դա: Սա Իմ ընծան է ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ: Իմ մաքուր հոգիներ, որ պոկվել եք ձեր ամենօրյա կյանքից՝ Ինձ հետևելու համար դեպի Դրախտ տանող ճանապարհով:

Իմ զավակները՝ արթնացած ամբողջ աշխարհի վրա մայիսին հեղված Սուրբ Հոգուց, հիմա Իմ հանդեպ այնպիսի նվիրվածություն կզգան, որը նրանցից մեծ մասին հայտնի չի եղել նախկինում: Հիմա Ես արագորեն հավաքում եմ Իմ բանակը, և այն շուտով կաճի հասնելով մոտ 20 միլիոնի: Որքան մեծ լինի Իմ բանակը, այնքան ուժեղ կլինի Սուրբ Հոգին միավորելու Իմ զավակներին Խաբեբայի դեմ որպես մեկ պայքարելու համար: Հիմա Իմ աստվածային առաջնորդությունը հոսում է ձեր հոգիների մեջ անկախ նրանից, դուք դա հասկանում եք, թե ոչ: Դա նման է նրան, ասես դուք ունեք ներքին միացում: Երբ Իմ սերը կանչում է, դուք բնականաբար կպատասխանեք՝ դարձի բերելու համար ուրիշներին: Սա է Սուրբ Հոգու զորությունը, և այն հիմա զգացվում է աշխարհի յուրաքանչյուր անկյունում:

Բոլոր կրոնները, բոլոր հավատամքները և բոլոր ազգերը կարձագանքեն հիմա ճշմարտության լույսին: Նրանք բոլորն էլ այնքան թանկ են Իմ Հավիտենական Հոր համար: Հիմա Նա փնտրում է, որ յուրաքանչյուր մարդ, կին և երեխա լսի Իր կանչը: Սատանան չի դիմանա այն աղոթքներին, որոնք ասվում են Իմ նվիրյալ հետևորդների կողմից: Նրա ճանկը կթուլանա, և՝ շուտով: Իմ հետևորդների աղոթքն ու հավատը կատաղեցնում է նրան: Քանի որ նա անուժ է Իմ նվիրյալ հետևորդների մտքերի մեջ կասկածներ դնելու, ապա կշրջվի դեպի թույլ մեղավորները: Այս զավակներն արդեն իսկ այնքան շփոթված են և ավերված մահացու մեղքով, որ կհիվեն դեպի նա: Իրենց հոգիների խավարի պատճառով նրանք ի վիճակի չեն լինի պաշտպանել իրենք իրենց: Սրտանց աղոթեք, որ նրանց հոգինները կարողանան փրկվել:

Սա մի դար է, երբ Իմ եկեղեցին, չնայած կանգնած է արտառոց արգելքների առջև մեղքի պատճառով, հիմա կվերակառուցվի երկրի վրա Իմ հետևորդների կողմից: Սա ժամանակ կպահանջի, բայց երբ դա կատարվի, Իմ եկեղեցին կվերադառնա Իր նախկին փառքին և կնորանա հզորությամբ:

Այն, Իմ բոլոր ընտրյալ մարդկանց հետ, կմտնի Իմ Հոր փառահեղ Թագավորություն: Այս իրադարձության քաղցրությունը, երբ աշխարհը կազատվի Սատանայից և ամեն չարից, պետք է ողջունել, զավակներս: Սա է խաղաղության նոր դարաշրջանը, որին պետք է սպասեք երկրի վրա: Առջևում դժվար ժամանակներ են, զավակներս: Ինձ վրա

բեևեռեք ձեր ուշադրությունը, և դուք կգոյատևեք: Հետո կգա այն խաղաղությունը, որին սպասում եք:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Որքան դժվար է մագլցել Դրախտ տանող աստիճանով

Շաբաթ, 3 սեպտեմբերի, 2011թ, ժ 23:50

Իմ սիրելի աղջիկ, պատրանքներին մի ենթարկվիր: Վերջին մի քանի օրերին Խաբեբան շրջել է քո գլուխը Ինձնից: Դու դա բացատրում ես այն փաստով, որ զբաղված էիր, բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Այնքան խորամանկ է նա, որ դիտավորյալ կերպով խանգարում էր քո ժամանակի ամեն մի րոպե: Այդ ընթացքում դու գիտակցում էիր, որ Ինձ ժամանակ չես տրամադրում, այդպես չէ՞: Դու զգում էիր որ շեղվում ես և կորած ես, իսկ հետո հասկացար, որ քո ներսում դատարկություն է առանց Ինձ: Ողջ ժամանակ քեզ մոտիկ, Ես այնուամենայնիվ թույլ տվեցի, որ դու քեզ Իմ կողմից լքված զգաս: Քանի որ այժմ դու արդեն զգացել ես այն հուսահատությունը, որը զգում են հոգիները, որոնց Ես մերժում եմ մեղքի պատճառով: Այս ամենը կարևոր է քո հոգևոր զարգացման համար: Գուցե անիմաստ թվա, որ Ես թույլ եմ տալիս սա, դա դեպի սրբություն քո ուսուցման մի մասն է, որը պետք է և Ես պահանջում եմ քեզնից: Դու, Իմ թանկագին աղջիկ, ժամանակ առ ժամանակ կշարունակես լքվածության զգացողություն ունենալ, ինչպես շատ հոգիներ, ովքեր այս նույն ճանապարհի վրա են:

Հոգևոր կատարելության սանդուղքը բավականին երկար է: Հոգիները կատարում են մեկ, երկու և ավելի քայլեր դեպի ետ՝ դեպի Ինձ կատարած յուրքանչյուր քայլի համար: Ես խնդրում եմ քեզ, աղջիկս, որ ասես Իմ բոլոր հետևորդներին ուշադրությամբ նախապատրաստվել այս սանդուղքի համար, որն էական է նախքան կհասնեն վերին աստիճանին: 2010թ. Նոյեմբերի 24-ի Իմ պատգամում, երբ Ես առաջին անգամ ասացի քեզ այս սանդուղքի մասին, Ես բացատրեցի, թե ինչպես են որոշ մարդիկ շատ արագորեն մագլցում այդ աստիճանները: Բայց իմացիր, որ դա կարող է սխալ լինել: Իմացեք, որ այդ Ես եմ, որ ողջ ժամանակ առաջնորդում եմ ձեզ աստիճաններով:

Իմ զավակներ, դուք հիմա պետք է մագլցեք հոգևոր սանդուղքի յուրաքանչյուր աստիճանը, նախքան կհասնեք Դրախտի դռանը: Համբերատար եղեք: Մի հուսահատվեք, երբ ընկնում եք: Պարզապես նորից կանգնեք և սկսեք մագլցել ամբողջ ճանապարհը:

Զավակներս, Ես կբռնեմ ձեր ձեռքը և կտանեմ ձեզ մինչև ամենավերևի աստիճանը, եթե դուք Ինձ թույլ տաք:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ – ինքնահրաժարումը որպես զոհաբերվող հոգի

Կիրակի, 4 սեպտեմբերի, 2011թ, ժ 21:50-22:00

(Այս պատգամը ստացվել է, երբ տեսանողուհին աղոթել է Սուրբ Վարդարանը, և մի երևումից հետո, երբ Օրհնյալ Մայրը երևացել է մոտ 20 րոպե մի առանձին աղոթասենյակում)

Ես գալիս եմ Իմ Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով: Ես Աստծո Սուրբ Մայրն եմ:

Զավակս, դու տառապում ես Իմ Որդու համար և վերջին շաբաթը հեշտ չի եղել մինչ մարտնչում էիր չարի ուժի դեմ, որպեսզի հավատարիմ մնաս Իմ թանկագին Որդուն: Ես գալիս եմ քեզ մոտ այս երեկո, որպեսզի փորձեմ բացատրել, թե ինչ է տեղի ունենում: Որպես զոհաբերվող հոգի դու կունենաս լքվածության պահեր, երբ Իմ Որդու մասին մտքերը դուրս կմղվեն քո մտքից: Հետո, մինչ դու կփորձես ժամանակ հատկացնել աղոթելու համար, կհասկանաս, որ չես կարող այդ անել: Դրանից հետո դու շփոթության կմատնվես, իսկ հետո միայնությունը կտանջի քեզ Իմ Որդու ներկայության համար: Մի անհանգստացիր, որովհետև որքան էլ դա դժվար է, դա տառապանքի մի ձև է, որը դու պետք է զգաս որպես զոհաբերվող հոգի:

Խնդրում եմ աղոթիր արիության համար և այն շնորհների համար, որ ընդունես տառապանքի այս նոր ձևը, որը կշփոթեցնի քեզ: Շարունակիր ամենօրյա հաճախումները պատարագին և Ամենասուրբ Հաղորդությունը ստանալուն, անկախ ամեն ինչից: Խաբեբան քեզ կդրդի որ մեջքդ շրջես այս աշխատանքի հանդեպ: Շուտով դու մեկ անգամ ևս թույլ կտաս, որ կասկածները նվաճեն քո հոգին: Խնդրիր բոլորին, որ աղոթեն քեզ համար հիմա: Քանի որ Իմ Որդուն տված քո ընծան շարունակում է հոգիներ փրկել ամենուր: Երբեք չմոռանաս սա, անկախ նրանից, թե որքան դժվար կլինի քո տառապանքը:

Զավակս, Ես միշտ կհաղորդակցվեմ քեզ հետ, երբ կորցնես ուղղության զգացողությունը, քանի որ Ես քո սիրող Մայրն եմ: Ես միշտ այստեղ կլինեմ, որ պաշտպանեմ քեզ և ուղղություն տամ քեզ դեպի Իմ Որդին, որ ձգտես Նրա ցանկություններին: Գնա սիրով և խաղաղությամբ:

Քո սիրող Մայր

Խաղաղության Թագուհի

Ընկերոջդ քո անձի պես սիրելն ավելի դժվար է, քան կարծում եք

4 սեպտեմբերի, 2011թ, ժ 22:00

Աղջիկս, հիմա ժամանակն է լսելու Իմ ցուցումներին, որ զգոնացնենք Իմ զավակներին առջևում սպասվող ժամանակների համար՝ **նախապատրաստելու Իմ բոլոր հետևորդներին ամեն օր աղոթքի մեջ մնալու անհրաժեշտության համար:** Նրանք պետք է նաև ստանան Իմ Մարմինը Սուրբ Հաղորդության ձևով և աղոթեն հոգիների փրկության համար:

Իմ զավակներն ավելի շատ են ուշ դարձնում Իմ պատգամներին, մինչ միանում են՝ միասին աղոթելու Իմ բոլոր զավակների համար ամեն օր, նախքան Նախազգուշացումը տեղի կունենա:

Նայեք ձեր եղբայրներին ու քույրերին Իմ աչքերով, որոնք տեսնում են նրանց որպես հրաշք ստեղծագործություններ հեղված Իմ Հավիտենական Հոր կողմից որպես ընծա մարդկությանը: Յուրաքանչյուր հոգի սիրվում է հավասարապես: **Իմ Հոր աչքում ոչ մի տարբերություն չկա:**

Եթե դուք, Իմ հետևորդներ, **սիրում եք Ինձ, դուք կսիրեք Իմ Հորը:** Հետևաբար, եթե դուք ճշմարիտ եք Իմ Հոր հանդեպ ձեր սիրո մեջ, ապա դուք կսիրեք ձեր եղբայրներին և քույրերին: Դուք պետք է հատկապես սեր ցույց տաք նրանց հանդեպ, ովքեր վիրավորում են ձեզ իրենց վերաբերմունքով: Ոմանք կվիրավորեն ձեզ, կծաղրեն և կփչացնեն ձեր հեղինակությունը, որը կվնասի ձեզ և ձեր ընտանիքին: Նրանք անձնապես հայտնի կլինեն ձեզ կամ կվնասեն ձեզ իրենց գործողություններով, որոնք վատ կանդրադառնան ձեր ընտանիքին հագցնելու և սնելու ձեր կարողության վրա: **Անկախ նրանից, թե որքան շատ են մարդիկ վիրավորում ձեզ,** Ես ձեզ խնդրում եմ, հանուն Ինձ, հետևել Ինձ: Աղոթեք նրանց համար, հատկապես նրանց, ովքեր վնասում են ձեզ: Քանի որ երբ դուք աղոթում եք նրանց համար, դուք նվազեցնում եք այն ատելությունը, որը շաղ է տալիս Սատնան: Մի ատելություն, որը կարող է առաջ բերել վրեժխնդրության մտքեր:

Սա **Իմ ամենադժվարին ուսուցումներից մեկն է.** Սիրիր քո ընկերոջը քո անձի պես: Դա շատ ավելի դժվար է, քան կարծում եք: Երբ դուք կարողանաք հասնել այս մեծ առատաձեռնության գործողությանը, դուք կօգնեք Ինձ իրականացնելու Իմ պլանը՝ ավելի շատ հոգիներ փրկելու:

Ձեր սիրող Ուսուցիչ և Ընկեր

Հիսուս Քրիստոս

Աստվածային Գթասրտության Հսկումներ կատարեք հիմա – Նախազգուշացումը մոտ է

Երկուշաբթի, 5 սեպտեմբերի, 2011թ. ժ 21:00

(Նշում. Այս երեկո Հիսուս Քրիստոսից ստացվեց երկու պատգամ: Առաջին պատգամում, մասնավոր հայտնություն, տեսանողուհուն տրվեցին Նախազգուշացման տեղի ունենալու ժամանակի մասին մանրամասներ, որոնք տեսանողուհին որոշել է այս պահին չհրապարակել: Դրա փոխարեն այն տրվել է մի քահանայի, ապահովության համար: Այս պատգամը կհրապարակվի Նախազգուշացումը տեղի ունենալուց հետո: Երկրորդ պատգամը աշխարհի համար է հենց հիմա:)

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը մոտ է հիմա: Աղոթքն օգնել է Իմ սիրելի Երեց Բենեդիկտ Պապին դիմակայելու այն ներքին պայքարին, որը նա մղում է Չար ուժերի դեմ: Վատիկանում նրա գտնվելու ժամանակը երկարացվել է:

Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին աղոթաժողովներ անցկացնել և Աստվածային Գթասրտության Հսկումներ Իմ այն բոլոր զավակների համար, ովքեր հեռացել են Ինձնից և Իմ Հավիտենական Հորից: Նրանք շտապ ձեր աղոթքների կարիքն ունեն: Աղոթքը, շատ աղոթքը, հիմա անհրաժեշտ է նրանց փրկելու համար: Պատարագներ առաջարկեք նրանց համար, ովքեր Նախազգուշացման ժամանակ իրենց հոգիների վիճակի պատճառով չեն կարողանա ֆիզիկապես զոյատևել: Նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն: Միավորվեք: Բռնեք միմյանց ձեռքերը Ինձ հետ միասին:

Ձեր սրող Հիսուս Քրիստոս

Որքան Իմ հետևորդների հավատը հզորանում է, այնքան ավելանում են նրանց վրա հարձակումները

Երեքշաբթի, 6 սեպտեմբերի, 2011թ, ժ 20:30

Իմ սիրելի աղջիկ, որքան ես դու տառապում Ինձ համար և որքան ուժեղ ես դու դարձել դրա արդյունքում:

Իմ պաշտպանությունն ամենուր է քո շուրջը: Մի վախեցիր: Մինչ այս աշխատանքը շարունակում է հոգիներ փրկել, նույնպես կշարունակվեն Սատանայի հարձակումները: Ընդունիր դա: Թույլ մի տուր որ դա անհանգստացնի քեզ: Վեր բարձրացիր մարտահրավերներից և պահիր աչքերդ Ինձ վրա միշտ: Քանի որ երբ այդպես անես, մնացած ամեն ինչ նշանակություն չի ունենա:

Նույն տառապանքը կզգան Իմ բոլոր մյուս հետևորդները, մինչ Սուրբ Հոգին շարունակում է աճել գրավելով Իմ բոլոր զավակների հոգիները ամենուր: Մինչ նրանց հավատն Իմ հանդեպ դառնում է ավելի ուժեղ, նույնկերպ կավելանան ուրիշների կողմից նրանց վրա կատարվող հարձակումները: Նրանք, Իմ հետևորդները, կնկատեն, որ ստիպված են դիմակայել վիճաբանությունների, գործ ունենալ անսովոր և մեղադրական դիտողությունների և ռեակցիայի հետ՝ տրված չհավատացողների կողմից, որոնք դժվար կլինեն նրանց համար: Խնդրում եմ ասա նրանց, որ սպասեն այս բաները հիմա, մինչ Նախազգուշացման ժամանակը մոտենում է:

Սատանան և իր չարքերը, որոնք անտեսանելի են մարդկային մերկ աչքերի համար, փորձում են ոչնչացնել Իմ զավակների հոգիներում եղած սերը: Նա ոգեշնչում է անվստահություն մեկը մյուսի հանդեպ: Նա պատճառ է ստեղծում վեճերի համար և սերմանում է կասկածներ: Նա լի է մարդկության հանդեպ ատելությամբ: Նա պատերազմներ կստեղծի երկրների միջև, միևնույն երկրի բնակիչների միջև և բաժանումներ՝ ընտանիքների ներսում: Սրանք բոլորը նրա սիրելի տակտիկաներն են և միշտ նրա չար գործի նշաններն են:

Ճանաչեք դրանք այնպես, ինչպիսիք են՝դա Սատնան է աշխատում: Կռվեք նրա հետ զավակներս, ուժեղ լինելով: Խնդրեք Իմ Սիրելի Մորը, որ պաշտպանի ձեզ, քանի որ Նա Սատանայի ամենամեծ հակառակորդն է: Սատանայի ուժը կթուլանա, եթե դուք Իմ Մորը օգնության կանչեք:

Այս ժամանակները մարտահրավեր են նետում Իմ բոլոր հետևորդներին ամենուր: Յուրաքանչյուր փորձ, ցանկացած տեսակի աղբյուրից՝ընկերներից, ընտանիքից և կոլեգաներից կարվի Խաբեբայի աշխատանքի միջոցով, որպեսզի խրախուսեն ձեզ, զավակներս,որ շրջեք ձեր մեքն Իմ հանդեպ:

Կանգնեցրեք նրան, ինչպես Ես ասել եմ ձեզ: Աղոթքը և Իմ Օրհնյալ Մոր հանդեպ պաշտամունքը կլինեն ձեր սպառազինությունը:

Ուժեղ եղեք հիմա: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեր Սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Միշտ լսիր քո սրտին

Երեքշաբթի, 6 սեպտեմբերի, 2011թ, ժ 20:20

Ես գալիս եմ Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անունով: Ես ձեր Օրհնյալ Մայրն են

Քեզ, զավակս, հետապնդում են: Ամեն փորձ արվում է Խաբեբայի կողմից քեզ խաբելու համար: Դու, ավակս, պետք է ենթարկվես միայն մեկ ձայնի, և դա Իմ թանկագին Որդի Հիսուս Քրիստոսի ձայնն է:

Զինվիր հիմա, զավակս, քանի որ քեզ վրա կատարվող հարձակումները կավելանան, ինչպես նաև քո տառապանքները: Դու կդիմանաս դրան այն շնորհների միջոցով, որոնք Ես կհեղեմ քեզ վրա: Դադարեցրու վախով լի մտքերը և մի կողմ դիր բոլոր կասկածները:

Թույլ մի տուր, որ ուշադրությունդ շեղվի, քանի որ դրանք գալիս են Խաբեբայի աշխատանքից: Դրանք Իմ Որդուց չեն գալիս:

Միշտ լսիր քո սրտին: Այդ դեպքում կիմանաս ճշմարտությունը: Ես, քո սիրելի Մայրը, սիրում եմ քեզ, ուստի խնդրում եմ թույլ տուր Ինձ առաջարակել քեզ Իմ ամբողջ պաշտպանությունը չարի դեմ:

Գնա խաղաղությամբ և սիրով

ՁԵՐ ՍԻՐՈՂ Մայր

Խաղաղության Թագուհի

Մի վախեցեք նախազգուշացումից, ուրախությամբ սպասեք դրան

Չորեքշաբթի, 7 սեպտեմբերի, 2011թ, ժ 23:45

Իմ սիրելի աղջիկ, ասա Իմ թանկագին զավակներին, որ իրենք չպետք է վախենան Նախազգուշացումից: Շատերը կվախենան, և դա հասկանալի է: Բայց նրանք պետք է ուշադրությամբ լսեն Ինձ: Ես կգամ ձեզանից յուրաքանչյուրի մոտ: Դուք կտեսնեք Ինձ և կզգաք Ինձ ձեր սրտում և ձեր հոգու մեջ: Իմ ներկայությունը կողողի ձեր հոգին ամենամաքուր սիրով և կարեկցանքով, ուստի դուք պետք է ուրախ լինեք: Վերջապես դուք կտեսնեք Ինձ, և ձեր հոգին կպարուրվի սիրով և հուզմունքով:

Մեղավորների ու անհավատների մեծ մասը պարզապես թեթևություն կզգան նրանից, որ Ես գոյություն ունեմ: Քանի որ Իմ Սուրբ Ներկայության ապացույցը կլինի այն արյունը, որն անհրաժեշտ է հեղելու համար իրենց հոգիները այն սնունդով, որն այսքան երկար ժամանակ բացակայում էր: Շատերը կզգան այն տառապանքը, որը Ես կրում եմ, երբ տեսնեն իրենց մեղքերը բացված իրենց առջև:

Բանական տարիքի երեխաները նույնպես կտեսնեն, թե ինչպես են իրենք նույնպես վիրավորում Ինձ մեղքի միջոցով: Մեծ մասամբ, այն երեխաները, ովքեր մերժում են Իմ գոյությունը, չնայած իրենք գիտեն ճշմարտությունը, կվազեն Ինձ մոտ: Նրանք Ինձ կխնդրեն, որ գրկեմ իրենց և թույլ չեն տա, որ Ես բաց թողնեմ իրենց:

Նույնիսկ ամենակարծրացած մեղավորների վրա կազդի այս գերբնական իրադարձությունը: Զավակներս, դուք պետք է անտեսեք շշուկները: Անտեսեք այն պատմությունները, որոնք սենսացիոն են: Վախենալու ոչինչ չկա: Նախազգուշացմանը պետք սպասել ձեր սրտերում մաքուր ուրախությամբ:

Ես սպասում եմ այդ ժամանակին այնպիսի մեծ սիրով Իմ սրտի մեջ, երբ Ես դուրս կհեղեմ Իմ Աստվածային Գթասրտությունը ձեզանից յուրաքանչյուրի վրա ամենուր աշխարհում: Սա այն պահն է, երբ դրանից հետո, դուք կհասկանաք թե որքան երջանիկ է ձեր սերունդը: Ինչպե՞ս կարող եք չճանաչել այն գթասրտությունը, որը ցույց կտրվի մարդկությանը: Անցյալում այնքան շատ հոգիներ են մահացել ծանր մեղքի մեջ: Հիմա, բոլոր մեղավորները վերջնականապես կհասկանան ճշմարտությունը:

Իմ զավակների համար հեշտ չէ ընդունել Իմ կամ Իմ Հավիտենական Հոր գոյությունը: Առանց նյութական ապացույցի շատերը չեն ցանկանում ճանաչել Ինձ: Շատերը հետաքրքրություն կամ հավատ չունեն աստվածային թագավորության մասին: Այս իրադարձությունը կբացի նրանց աչքերը այն պարզ փաստի հանդեպ, որ կյանքը չի վերջանում երկրի վրա: Այն շարունակվում է հավիտենության մեջ: Դա է պատճառը, որ նրանք պետք է նախապատրաստեն իրենց հոգիները:

Նախազգուշացումը ցույց կտա նրանց, թե իրենք ինչ պետք է անեն դա ուղղելու համար: Հիշեք, զավակներս, Ես ձեր Փրկիչն եմ: Ես ձեզ բոլորիդ սիրում եմ այնպիսի ձևով, որը ձեր ընկալումից վեր է: Սիրով և հանդարտությամբ սպասեք Իմ ժամանելուն: Չվախենաք երկնքում երևացող դրամատիկ ցուցադրումից և ճառագայթների գույնից, որոնք կտարածվեն ամենուրեք, ազդարարելու Իմ ժամանումը: Սա կնախապատրաստի ձեզ այդ պահի համար:

Խնդրում եմ աղոթեք, որ ողջ մարդկությունը ուրախություն զգա իրենց սրտում, քանի որ այս իրադարձությունը կնշանակի փրկություն մարդկության համար այնպիսի մեծ չափերով, որ կփրկի այնքան շատ հոգիների և հնարավորություն կտա նրանց մտնել երկրի վրա նոր դրախտ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Երբեք մի վախեցրեք ուրիշներին Իմ Անունով

Շաբաթ, 10 սեպտեմբերի, 2011թ, ժ 15:30

Ես այսօր խոսում եմ քեզ հետ, Իմ սիրելի աղջիկ, ամեն ինչում Ինձ ենթարկվելու անհրաժեշտության մասին: Աղջիկս, Իմ բոլոր հետևորդները, որպեսզի արժանի լինեն Իմ սիրուն և նվիրվածությանը, պետք է պատվեն Իմ Հոր պատվիրանները: Չնայած նրանք ժամանակ առ ժամանակ հնարավոր է որ շեղվեն, նրանք միշտ պետք է ձգտեն

հետևելու սիրո կանոնին: Սիրեք մեկդ մյուսին և դրեք ձեր ընկերոջը ձեր սեփական կարիքներից առաջ: Դրանից հետո ամեն ինչ կընկնի իր տեղը:

Նրանք, ովքեր իրենք իրենց անվանում են Իմ հետևորդներ, պետք է չափազանց զգույշ լինեն, թե ինչպես են տարածում Իմ Ամենասուրբ Խոսքը: Եթե նրանք ընկնում են ամբարտավանության, սեփական ճշմարտացիության թակարդը, կամ երբ արհամարհում են ուրիշներին Իմ անվամբ, ապա նրանք մեծապես վիրավորում են Ինձ: Երբեք մի վախեցրեք ուրիշներին այն պատիժներով, որոնք նրանք կարող են սպասել Ինձնից: Երբեք ոչ մեկին մի ասեք, որ Ես կպատժեմ իրենց, որովհետև դուք բարկացած եք նրանց վրա ինչ-ինչ պատճառներով: Քանի որ երբ դուք դա անեք, դուք մեղավոր կլինեք Ինձ մերժելու մեջ, որովհետև այդ դեպքում դուք շրջում եք ճշմարտությունը՝ հարմարեցնելու համար այն ձեր սեփական պլաններին: Երբեք ձեզ ուրիշներից վեր մի դասեք այն պատճառով, որ ձեզ առավելություն է տրվել ճշմարտությամբ:

Զավակներս, Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին նույնիսկ երբ նրանք սխալվում կամ մոլորվում են: Միշտ աղոթեք նրանց համար, եթե հայտարարում եք, թե Իմ ճշմարիտ հետևորդներն եք: Ամեն դեպքում քարոզեք ճշմարտությունը: Միշտ ասացեք նրանց Իմ զավակների հանդեպ Իմ խորը սիրո մասին: Սակայն դուք երբեք չպետք է դատեք նրանց: Երբեք ուրիշներին մի ասեք, թե իրենց մեղքերը, կամ նրանք ինչը դուք մեղք եք համարում, թե դրանք կպատժվեն Իմ կողմից ինչ-որ ձևով, որովհետև դուք իրավունք չունեք այդ անելու:

Այսօր Իմ պատգամը պարզ է: Երբ դուք սիրում եք Ինձ և խոսում Իմ անվամբ, դուք երբեք չպետք է ձեզ վեր բարձրացնեք այդ պատճառով: Դուք երբեք չպետք է սպառնաք ձեր եղբայրներին և քույրերին կամ զրպարտեք Իմ անվամբ:

Հիշեք, քանի որ դուք Իմ հետևորդներն եք, ապա դուք կդառնաք Խաբեբայի թիրախը հենց ձեր հավատի պատճառով: Ուստի դուք պետք է զգույշ լինեք, որ նա չխաբի ձեզ՝ ձեզ ստիպելով մեղք գործել ձեր եղբայրների և քույրերի հանդեպ:

Դուք պետք է ուժեղ մնաք, զավակներս: Ես տալիս եմ ձեզ այս պատգամը, որ առաջնորդեմ ձեզ և պահեմ ձեզ դեպի Ինձ բերող ճիշտ ուղու վրա:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Թագավոր

Անկախ նրանից թե ինչ կրոնի եք պատկանում , միայն մեկ Աստված կա

Կիրակի, 11 սեպտեմբերի, 2011թ, ժ 19:15

Իմ սիրելի աղջիկ, երբ Իմ զավակները հուսահատված, վախեցած կամ միայնակ են զգում, ասա նրանց, որ նրանք պետք է շրջվեն դեպի Ինձ: Նախկինում երբեք Իմ զավակներն այնքան մեծ դատարկություն չեն զգացել ամբողջ աշխարհում, որքան հիմա: Առանց ուղղության, նրանք ավելի են հեռանում, երբ սնվում են թափոններով: Ամեն օր լրատվությունը սնում է նրանց պատմություններով, որոնք ցույց են տալիս աշխարհում գտնվող չարիքը բազմաթիվ երկրների խառնաշփոթության մեջ: Հետո **կա նաև հոգևոր սննդի պակասը, իսկ դրա փոխարեն՝ ստերի դիետա,** երբ ձեզ ասում են աշխարհիկ նկրտումների հրաշքների մասին: Դրանք բոլորն էլ, եթե հետևեք այդպիսի բաների, հիասթափություն կպատճառեն: Հետո, մինչ ձգտում եք այդպիսի նպատակների հասնելուն, դուք կցանկանա հասնել այդ բարձունքներին, և կրկին կհիասթափվեք:

Հիշեք, Ես ձեր սնունդն եմ, զավակներս: Միայն Իմ միջոցով դուք կգտնեք ճշմարիտ խաղաղություն, բավարարվածություն և մաքուր սեր ձեր սրտերի մեջ: Հնարավոր չէ ստանալ այս տեսակի խաղաղություն որևէ այլ տեղ:

Շրջվեք հիմա դեպի Ինձ, դուք բոլորդ ովքեր վշտից տառապում եք ձեր սրտերի մեջ: Թույլ տվեք Ինձ բռնել և հանգստացնել ձեզ: Քանի որ դուք, զավակներս, Իմ կորած, բայց թանկարժեք հոգիներն եք: Ձեզնից շատերը մոլորվել են և չեն ճանաչում դեպի Իմ փարախը բերող ճանապարհը: Ձեզանից ոմանք ընտրել են այլ փարախ, մի փարախ, որն Իմը չէ:

Լսեք Իմ կանչը, քանի որ երբ լսեք Իմ ձայնը ձեր հոգիների մեջ, դուք կիմանաք ճշմարտությունը: Ես ձեր ուղին եմ դեպի Իմ Հավիտենական Հայրը: Հիշեք, որ **ձեզնից շատերը, ովքեր տարբեր անուններ են տալիս Աստծուն՝ Ամենակարող Հորը, պաշտում եք նույն Աստծուն – միայն մեկ Աստված կա:** Հիմա մոտ է այն ժամանակը, երբ Նրա փառքը կբացահայտվի աշխարհին: Անկախ նրանից, թե ինչ բացատրություն եք տալիս, Հայր Աստված Սեր է: Նրա գթասրտությունը գրկում է ամեն ինչ: Եկեք, դարձեք դեպի Նա, ուր որ էլ որ լինեք աշխարհում: Նա սպասում է ձեր կանչին:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Երկնային պատիժը կարելի է մեղմել աղոթքի միջոցով

Երկուշաբթի, 12 սեպտեմբերի, 2011թ, ժ կեսօրվա 12:00

Իմ սիրելի աղջիկ, շատ շուտով հիմա աշխարհը կանգ կառնի, և Նախազգուշացումից հետո եկող ժամանակահատվածը կփոխի աշխարհի հանդեպ մարդու տեսակետը: Նյութական բարիքներն ու հաճույքներն այլև հուզմունք չեն պատճառի: Այլևս մարդիկ հանրաճանաչ մարդկանցից ու հարստությունից աստվածներ չեն պատրաստի: Այլևս նրանք այդքան արագորեն չեն դատապարտի կամ դաժանորեն չեն վարվի իրենց եղբայրների հետ:

Նոր աշխարհը, Նախազգուշացումից հետո, կլինի մի վայր ուր Իմ և Հայր Աստծո հանդեպ սերը հարգանքով կմեծարվի: Շատ երկրների առաջնորդներ ոչ քրիստոնեական երկրներից հարգանք կմատուցեն Իմ Հորը: Իշխանություն ունեցողներից նրանք, ովքեր վերահսկում են ժողովուրդների ֆինանսները, կապաշխարեն իրենց ամբոխների համար: Շատ շատերը ետ կտան իրենց իշխանության ծածկոցները և կկիսեն իրենց եղբայրների և քույրերի հետ այն հացը, որը գալիս է Հայր Աստծուց: Քանի որ այդ հացը բոլորի համար է և նախատեսված է, որ հավասարապես բաժանվի:

Շատ բարի գործեր կծավալվեն Նախազգուշացման արդյունքում: Այնուամենայնիվ, շատ հոգիներ այնքան էլ ուժեղ չեն լինի իրենց հավատի մեջ: Նրանք, տխուր է, բայց ետ կդառնան իրենց հին ուղիներին: Գայթակղված իշխանության, հարստության, վերահսկման և սեփական անձի հանդեպ սիրուց, նրանք կմերժեն Հայր Աստծուն: Նրանք կիմանան ճշմարտությունը, սակայն դա դեռևս բավական չի լինի նրանց համար: Այդ խեղճ թույլ մեղավորները կլինեն ինչպես փուշ ձեր կողի մեջ, զավակներս: Առանց ձեր աղոթքների նրանց մեղքերը ավերածություն կառաջացնեն աշխարհում, որը հաջողության մեջ էր իր նոր մաքրգործման ժամանակ:

Աղոթքը, զավակներս, կարևոր է: Դուք պետք է խնդրեք Հայր Աստծուն ընդունել ձեր խնդրանքը՝ ճնշել այն հալածանքը, որը պլանավորվում է այդ մարդկանց կողմից: Բավարար չափով աղոթքը կարող է նվազեցնել և կնվազեցնի այն սարսափի մեծ մասը, որն այդ մեղավորները կփորձեն պարտադրել աշխարհին: Ձեզնից այնքան շատերն են կույր այն պլանի հանդեպ, որը նյութվում է ձեր մեջքի ետևում: Նշանները շարունակաբար բացահայտվում են, բայց դուք չեք կարողանում ճանաչել դրանք:

Զավակներս, մինչ ձեր հավատն աճում է, աղոթեք, որ Սուրբ Հոգին կարողանա տարածվել դեպի այդ մեղավորները և ողողի նրանց հոգիները: Ես՝ ձեր Թանկագին Հիսուսը, պաշտպանում եմ ձեզ, Իմ նվիրյալ հետևորդներ: Իմ հրամանով Ես ձեզ կոչ եմ անում աղոթել ոչ միայն այդ ընկած հոգիների համար, այլև նրա համար, որ հալածանքը հասարակ մարդկանց, կանանց և երեխաների հանդեպ հալածանքը վերացվի: Եթե այդ հանցագործները, ովքեր կարհամարհեն Իմ Հորը, շարունակեն սարսափի մատնել անմեղ մարդկանց աշխարհի վրա նոր վերահսկողություններ սանձազերծելու միջոցով, ապա նրանք կպատժվեն:

Այդ մեղավորներին հիմա տրվում է ամենամեծ գթասրտությունը Իմ խաչելության ժամանակից ի վեր: Նրանք պետք է գրկեն Նախազգուշացումը, քանի որ նրանց վերջին անգամ է ազատագրման (թողության) հնարավորություն առաջարկվում: Հակառակ դեպքում նրանք կկանգնեն սարսափելի պատժի առաջ: Այդ պատիժը, որը կիջնի աստվածային արդարադատության ձեռքով Իմ Հավիտենական Հոր միջոցով, ցանկալի չէ: Չնայած այդ մեծ երկնային պատիժը կանխասացվել է, այն կարելի է մեղմացնել աղոթքի օգնությամբ:

Ձեր սիրող Փրկիչ

Գթասրտության Թագավոր

Հիսուս Քրիստոս

Եկեղեցում կներմուծվեն փոփոխություններ, որոնք կհակասեն Աստծո Խոսքին

Երեքշաբթի, 13 սեպտեմբերի, 2011թ, ժ 15:15

Իմ սիրելի աղջիկ, Ես Հիսուս Քրիստոսն եմ, ով եկավ մարմնով:

Իմ Ամենասուրբ Խոսքը հիմա պետք է լսվի Իմ սրբազան սպասավորների կողմից ամեն տեղ: Իմ բոլոր հետևորդները պետք է կիսեն այս պատգամները **բոլոր քրիստոնեական հարանվանությունների Իմ սրբազաբ սպասավորների հետ:** Կենսական է, որ նրանք խրախուսվեն՝ լսելու Իմ խոսքը այս վճռական պահին, նախքան **կպառակտվեն և կբաժանվեն երկու ճամբարների:**

Խաբեբայի աշխատանքը ներթափանցել է Իմ եկեղեցու մեջ՝ բոլոր մակարդակներում: Շատ շուտով հիմա, դանդաղորեն բայց հաստատապես, դուք կտեսնեք թե ինչպես են քչացվում Սուրբ Պատարագները: Դուք կտեսնեք, թե ինչպես կհեռացվեն որոշ աղոթքներ և **խորհուրդներ, որոնցից նաև խոստովանության խորհուրդը, որը կսկսի թուլացվել:** Ես կոչ եմ անում Իմ սրբազան սպասավորներին, որ լսեն Ինձ հիմա և աղոթեն զանազանության համար: Այդ Ես եմ, որ կանչում եմ ձեզ հիմա, որ կարողանամ փրկել ձեր հոտը:Այդ Ես եմ, որ ցանկանում եմ բացել ձեր սրտերը, **որ կարողանաք պլանավորել այս ժամանակների վերջի համար, որոնք կազդարարեն մի ամբողջապես նոր սկիզբ աշխարհի համար:**

Շատ շուտով ձեզ կխնդրեն հավատարմություն ցույց տալ Կեղծ Մարգարեն: Տեսեք նրան այնպես, ինչպիսին է և դատեք նրա գործերը, որպեսզի տեսնեք, արդյոք նրանք պտուղ տալի՞ս են: Քանի որ **այն պտուղը, որը նա և իր ստրկաբարո նվիրյալները կհավաքեն՝ փթած կլինի մինչև ծուծը:** Մի անգամ կծելը (այդ պտուղից) կոչնչացնի Իմ հանդեպ ձեր հավատարմությունը: Եթե կծեք երկու կամ ավելի անգամ, այն կստեղծի մի այնպիսի պարիսպ ձեր և Իմ Սրբազան Սրտի միջև, որ ձեզ համար արդեն անհնարին կլինի ներս մտնել Իմ Հոր Թագավորություն:

Ուշադարությամբ դիտեք հիմա **այն փոփոխությունները, որոնք կտեսնեք, թե ինչպես են սողոսկում ձեր ծառայության մեջ:** Սկզբում այս ճշգրտումների մի մասը խնդիր չի թվա: Բայց մինչ ժամանակը կանցնի, որոշակի փոփոխություններ կպարտադրվեն ձեզ, և ձեզ **կստիպեն ստեր կուլ տալ:** Այդ ստերը կգան Սատանայից և հագցված կլինեն ոչխարի մորթով:

Նրանք, ովքեր մաքուր են սրտով, անմիջապես կիմանան և կճանաչեն չար խաբեությունը այն տեղում, որը ծրագրավորվում է ոչնչացնելու համար Իմ եկեղեցին երկրի վրա հենց նրա սեփական միջանքներից:

Ճշմարտությունը կառաջացնի արհամարհական հևոց աշխրհով մեկ, երբ Իմ քահանաներն ասեն վստահորեն, որ այդ մարգարեությունը սուտ է : Միակ սուտը, որին նրանք ստիպված կլինեն ականատես լինել, կլինի այն, ինչին կստիպեն նրանց հավանություն տալ, որը ուղղակիորեն կհակասի Իմ Արբազան Գրվածքներին, տրված մարդկությանը ամենասկզբից ի վեր: Երբեք թույլ չտաք ինքներդ ձեզ ընդունելու որևէ այլ ճշմարտություն, բացի նրանից, ինչ պարունակվում է Սուրբ Աստվածաշնչի մեջ:

Շատ փոփոխություններ կներմուծվեն, որոնք կհակասեն Իմ Հավիտենական Հոր Խոսքին: Այդ փոփոխությունները, Իմ սրբազան սպասավորներ, չեն լինի աստվածային ծագման, և դուք պետք է մերժեք այդ ստերը (ոչ ճշմարտությունները), եթե ցանկանում եք Ինձ հավատարիմ մնալ:

Արթնացեք: Դեմ կանգնեք այդ ստերին, որոնց ստիպված կլինեք դիմակայել: Երբեք չընդունեք դրանք: Իմ Հավիտենական Հոր խոսքը երբեք չի փոխվի: Այն երբեք չի կարող հարմարեցվել մարդկության կողմից: Ձեզնից շատերն այնքան խելագարված կլինեն, որ կզգաք, որ եմուսացվել եք ձեր ընկեր սպասավորներից: Չվախենաք, քանի որ միայն մեկ կողմը կարող եք ընտրել: Դա կլինի այն կողմը, ուր Ես եմ կանգնած: Ուրիշ կողմ չկա:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Խնդրեք տառապանքի ընծան

Չորեքշաբթի, 14 սեպտեմբերի, 2011թ,

Իմ սիրելի աղջիկ, քո տառապանքը թեթևացել է, և Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել քեզ այդ ընծայի համար: Այն կվերադառնա, բայց դու կկարողանաս ընդունել այն ավելի շատ ուրախությամբ քո սրտի մեջ: Ես քո տառապանքի կարիքն ունեմ, որովհետև այն փրկում է մեղավորների հոգիները, ովքեր առանց դրա, կվերջացնեին դժոխքում: Մի օր դու կնայես նրանց հոգիների մեջ և կողողվես սիրով և ուրախությամբ երբ տեսնես նրանց Ինձ մոտ նստած՝ Իմ Հավիտենական Հոր գահի կողքին:

Մեղավորները միշտ առաջինը կգրկվեն, երբ ապաշխարեն: Նրանք միշտ կլինեն առջևի գծում՝ ի մեծ զարմանս Իմ հետևորդների: Այդ հոգիներն Ինձ մոտ են բերվել Իմ հետևորդների և ընտրյալ հոգիների աղոթքների և տառապանքների միջոցով: Իմ հետևորդները կհասկանան դա, որովհետև նրանք, Ինձ հետ իրենց միության միջոցով, կուրախանան այդպիսի հոգիների փրկությամբ:

Հիմա Ես կարիք ունեմ, որ շատ ավելի հոգիներ փրկվեն, աղջիկս: Խնդրում եմ աղոթիր, որ դու և այլ ընտրյալ հոգիները իմանան, թե **ինչպես կարող է տառապանքը ավելացնել Իմ Հոր Թագավորություն մտնողների թիվը:** Ես խնդրում եմ նրանց, որ

խնդրեն պահանջվող շնարհները՝ տառապելու ընծան ստանալու համար: Հիշեք, երբ Ես հեղում եմ տառապանք, դա մի յուրահատուկ շնորհ է, և այնպիսին, որ կբերի ավելի շատ հոգիների Իմ սրտի մեջ:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Փրկիչ

Սովորաբար ճշմարտության հանդեպ վերաբերվում են ծայրահեղ զգուշությամբ և բացահայտ հեռացմամբ

Հինգշաբթի, 15 սեպտեմբերի, 2011թ, 23:50

Իմ սիրելի աղջիկ, հիմա դու ականատես ես լինում ավելի մանրամասնությամբ այն ցավին, որը Ես կրեցի Իմ խաչելության ընթացքում: Լքվածություն, Մերժում, Մեկուսացում, Հեռացում իշխանության ձեռքերի ծաղրող ալիքի կողմից և հատկապես Իմ նվիրյալ հետևորդների կողմից: Նույնիսկ Իմ սեփական առաքյալները մերժեցին Ինձ Իմ կարիքի ժամանակ: Ուստի դու չպետք է զարմանաս, որ սա նաև քեզ հետ է պատահում:

Այսօր քեզ ցույց տրվեց նաև մի տեսիլք՝ Ես կանգնած Իմ դահիճների դիմաց, որոնց Ես ստիպված էի լսել, երբ նրանց չար ստերը արհամարհում էին Ինձ և Իմ ուսուցումների ճշմարտությունը: Նույն կերպ կվարվեն քեզ հետ և Իմ հետևորդների հետ նրանք, ովքեր չեն կարողանում ընդունել ճշմարտությունը, կամ այն համարում են նողկալի:

Ճշմարտության հանդեպ, աղջիկս, սովորաբար վերաբերվում են ծայրահեղ զգուշավորությամբ, բացահայատ հեռացմամբ, կամ էլ երբեմն համարում են հայոհյանք: Երբեք չվախենաս: Քանի որ այն խոսքերը, որոնք Ես տալիս եմ քեզ, միայն ճշմարտություն են: Դու երբեք չպետք է վախենաս հրապարակել այն, ինչ Ես տալիս եմ քեզ: Ինչու՞ պետք է Ես տամ քեզ ոչ ճշմարտություններ: Ինչու՞ պետք է Ես փորձեմ ականապատել այս պատգամները՝ թույլ տալով որ ինչ-որ ժամանակ նրա մեջ մտնի ոչ ճշմարտություն: Քանի որ դա կհակասի Իմ Հոր կամքին: Նույնիսկ Սատանային թույլ չի տրվի միջամտել այս պատգամներին, որքան էլ որ նա ջանա այդ անել:

Մինչ այս պատգամները դառնում են ավելի ինտենսիվ, նրանք կդառնան բավականին շատ բանավեճերի և ծաղրի առարկա: Սակայն շատերը կմոտենան դրանց, որովհետև այդ ամենի տակ նրանք կկարողանան ազդվել Սուրբ Հոգու կողմից, որը հուզում է նրանց հոգիները:

Ժամանակի ընթացքում, նրանք՝ Իմ զավակները, Ինձ շնորհակալություն կհայտնեն իրենց օգնելու համար, որ հերկեն փշոտ մացառների անհարթությունները, որոնք կխանգարեն նրանց հասնելու Դրախտի դարպասին, որովհետև հիմա առանց Իմ առաջնորդության, այս պահին, նրանք կորած կլինեին: Նրանք չէինի գտնի այն ուժը,

որ ապահով կերպով անցկացվեն նոր Դրախտի դարպասներով՝ խաղաղության նոր Դարաշրջանը երկրի վրա, որը սպասվում է բոլոր նրանց, ովքեր ենթարկվում են Ինձ և Իմ ուսուցումներին:

Ձեր սիրող Փրկիչ և Ուսուցիչ

Հիսուս Քրիստոս

Խաղաղության և փառքի ժամանակը համարյա հասել է

Շաբաթ, 17 սեպտեմբերի, 2011թ, ժ 18:50

Իմ սիրելի աղջիկ, դու վերջապես հասկանում ես, որ երբ քեզ մերժված ես զգում, ապա դա պարզապես Իմ սեփական հոգևարքի հայելին է: Երբ դու Ինձ հետ միության մեջ ես, ինչպես որ է, սա կդառնա քո կյանքի մի մասը այժմվանից սկսած: Երբ մարդիկ մերժում են այն պատգամները, որոնք դու հրապարակում ես, նրանք մերժում են Իմ Ամենասուրբ Խոսքը: Երբ նրանք մարտահրավեր են նետում դրանց և թերություններ փնտրում, նրանք քննադատում են Ինձ: Երբ նրանք վերևից են նայում քեզ վրա, նրանք ծաղրում են Ինձ: Երբ նրանք ծիծաղում են այս պատգամների վրա, նրանք Իմձ խաչն են հանում:

Այն, ինչ դու զգում ես, Իմ տառապանքի մի փոքր մասնիկն է միայն, մինչ Ես վշտով նայում եմ մարդկանց կուրությանը Իմ Հավիտենական Հոր գոյության ճշմարտության հանդեպ: Ցավը և վիշտը, որ Ես զգում եմ, երբ ստիպված եմ լինում ականատես լինել մարդու մեղքին, ներառյալ՝ հավատացողների, ամենաուժեղն է: Այս տառապանքը հազիվ է դադարում, սակայն թեթևացվում է զոհաբերվող հոգիների տառապանքի միջոցով: Այն նաև թեթևանում է այն սիրուց, որն Իմ հետևորդները ցուցաբերում են Իմ հանդեպ՝ իրենց նվիրվածությամբ:

Աղջիկս, չնայած Ես կարիք ունեմ տառապանքի, որ փրկեմ այլ դժբախտ հոգիների, սակայն դա Ինձ հաճույք չի պատճառում: Ինձ համար ցավալի է դիտել դա, բայց Ես սփոփվում եմ դրանից: Այնքան շատ բան պետք է դու սովորես, աղջիկս, որը քեզ համար դժվար է հասկանալ: Աստվածային Թագավորության ուղիները չեն կարող հասկացվել մարդկության կողմից: Մի օր նրանք կհասկանան:

Իմացեք սա զավակներս, որ այն դժվարին ժամանակները, որը մարդը ստիպված է եղել կրել դարեր ի վեր, իրենց ավարտին են մոտենում: Սա բարի լուր է այն մարդկանց համար, ովքեր սեր են ցույց տալիս իրենց հարևանի հանդեպ, և որպես այդպիսիք, սիրում են Ինձ: Դա նաև վերջ կտա, վերջապես, Իմ տառապանքին, որը Ես կրում եմ, որովհետև Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Այս սերը հզոր է և միշտ զիջող և այն կլինի ձեր վերջնական փրկության պատճառը:

Գնա հիմա, աղջիկս, և ընդունիր տառապանքն ավելի շատ հասկանալով քո սրտի մեջ: Ուրախացիր, քանի որ Խաղաղությանն Փառքի ժամանակն արդեն գրեթե հասել է:

Ձեր սիրող Ընկեր և Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Մարդկության Թագավոր

Այն դասական սխալը, որը կատարում են, երբ փորձում են Ինձ ավելի մոտենալ

Կիրակի, 18 սեպտեմբերի, 2011թ, ժ 18:15

Ես գալիս եմ Հիսուս Քրիստոսի՝ Ամենաբարձրյալի անունով, Ես Նա եմ

Իմ սիրելի աղջիկ, ինչու՞ է մարդը շարունակում իր գոյության պատասխանները գտնել գիտության միջոցով: Նրանք փնտրում և փնտրում են, բայց պատասխանները, որոնց նրանք հանգում են, ճշմարիտ չեն և այնքան հեռու են Իմ Հոր Թագավորության հոգևոր ոլորտների գոյությունից, որ պետք է աղոթես այս հոգիների համար:

Ես գիտեմ, որ Իմ և Իմ սիրելի Հոր գոյությունն ընդունելը չափազանց դժվար է, զավակներս: Քանի որ ամեն անգամ, երբ ձեր աչքերը մի ակնթարթ նայում են ճշմարտությանը, Սատանան շրջում է ձեր գլուխը հակառակ կողմ: Մեծ մասամբ նա օգտագործում է բանականությունը, համոզելու համար Իմ զավակներին, որ Իմ Հոր Թագավորությունը պարզապես մարդկային երևակայության հնարածն է: Հետո նա օգտագործում է նյութական աշխարհի հարմարավետությունները՝ համոզելու համար ձեզ, որ դրանք պետք է առաջնահերթ լինեն ձեզ համար:

Կան նաև հոգիներ, ովքեր հասկանում են ճշմարտությունը: Նրանք մի դասական սխալ են թույլ տալիս, երբ փորձում են ավելի մոտենալ Ինձ: Նրանց համար հեշտ է վստահանալ, որ երբ իրենց նյութական բարիքներն ապահովված են, ուրեմն իրենք կարող են առաջ շարժվել հոգևոր ուղևորության մեջ: Բայց դա այդպես չի լինում: Դուք պետք է անպայման պաշտպանեք ձեր ընտանիքները և ձեր տները: Դուք պետք է կերակրեք նրանց, ովքեր ձեզնից կախում ունեն: Դրանից հետո դուք պետք է Ինձ երկրային բոլոր աստվածներից առաջ դնեք: **Դա կլինեի Երկինք տանող ձեր անձնագիրը:** Մարդը ոչինչ է առանց Աստծո: Ոչ մի նյութական ճոխություն չի կարող փոխարինել և չի փոխարինի Աստծո սիրուն: Ոչ էլ կարող են նրանք մնայուն լինել կամ նույն արժեքով գնահատվել, եթե դուք իսկապես ցանկանում եք գրկել Ինձ ձեր սրտում:

Վստահեք Ինձ, և մնացածի համար հոգ կտարվի: Եթե դուք փորձեք ամեն ինչ ինքնուրույն անել և **կառչել հարստությունից, որպեսզի կարողանաք երկու աշխարհից էլ լավագույնը ունենալ, ապա կհիասթափվեք:**

Հիշեք, ձեր հանդեպ Իմ սերը կսնի ձեր հոգիները: Նյութական հարստությունը կսնի ձեր մարմնական ցանկությունները, սակայն դրանք ժամանակի ընթացքում կոչնչանան և ձեզ ոչինչ չի մնա:

Խնդրում եմ, զավակներս, անկախ նրանից թե որքան դժվար է դա, թույլ տվեք Ինձ ուղղել ձեզ դեպի հավիտեանական երջանկություն տանող ճշմարտության ճանապարհը: Պարզապես խնդրեք Իմ օգնությունը, և Ես կպատասխանեմ:

Ձեր սիրող Ուսուցիչ և Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ամենակարևոր իրադարձությունը Իմ Խաչելությունից ի վեր

Երկուշաբթի, 19 սեպտեմբերի, 2011թ, ժ 20:15

Իմ սիրելի աղջիկ, Իմ նպատակն է բերել երկրի վրա գտնվող յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի դեպի Երկրի վրա Իմ նոր Դրախտը: Քանի որ եթե նույնիսկ մեկ հոգի չհասնի դրան, դա կկոտրի Իմ սիրտը: Ահա թե ինչու **այն պատգամների քանակը, որոնք Ես հիմա ուղարկում եմ աշխարհ, ավելացել է:** Դա այդպես է, որ կարողանան տարածել Իմ Սուրբ Խոսքը՝ խրախուսելու համար ապաշխարությունը:

Ես չեմ ուղարկում պատգամատարների, որպեսզի վախեցնեմ Իմ զավակներին: Դրա փոխարեն, **Իմ պատգամատարների դերն այն է, որ նախապատրաստեն յուրաքանչյուր հոգու** այս երկրի վրա, որպեսզի նրանք պատրաստ և արժանի լինեն ապրելու այդ Նոր Դրախտում:

Զավակներս, դուք հիմա ապրում եք ոչ հաճելի ժամանակներում: Օրենքն ու կարգը խորտակվել են: Ագահությունը հասել է նրան, որ **ձեր ֆինանսական կայունությունը խլվել է ձեզնից:** Սեփական անձի հանդեպ փառքը և համակվածությունը նկրտումներով նշանակում է, որ ձեր հավատը նույնպես խլվել է ձեզնից:

Ինչպես մի ընտանիք, ուր ծնողական վերահսկողություն չկա

Դուք, զավակներս, **նման եք նրան, որ գտնվում եք մի ընտանիքում, ուր չկա ծնողական վերահսկողություն:** Երես առած երեխաների պես, դուք ապահովված եք բոլոր նյութական բարիքներով, որոնց հասնում եք առանց ստիպված լինելու վաստակել դրանք: Դուք ապահովված եք սննդով, որի համար ստիպված չեք

աշխատել: Ամեն ինչ, որ դժգոհություն է պատճառում ձեզ, փոխարինվում է մեկ այն նորարարությամբ, մեկ այլ խթանիչով: Սակայն ոչ մի բան ձեզ երկար չի գոհացնում: Հետո Իմ զավակների միջև վեճեր են տեղի ունենում, յուրաքանչյուրը փորձում է վերահսկել մյուսին, իր ճանապարհով գնալու համար: Դրանից կարող է ֆիզիկական կռիվ առջանալ: Բայց ոչ մեկը պատասխանատվություն չի կրում, և ուստի նրանք վիրավորում են մեկը մյուսին երբեմն ծանր հետևանքներով:

Ահա թե ինչպես եմ Ես տեսնում աշխարհը: Իմ զավակները դժբախտ են, չունեն հոգևոր հանգստություն (հարմարավետություն), սակայն մերժում են առաջնորդվել Իմ Եկեղեցու կողմից: **Այսօր Իմ Եկեղեցին չի կարողանում վերահսկել այսպիսի մի անօրեն բնակչության,** ովքեր չեն գտնում, որ Իմ հանդեպ տածած պաշտամունքը նույնքան խթանիչ է, որքան մարմնի համար ստեղծված հարմարավետությունները:

Պատերազմը ոչնչացնում է մարդկությանը, իսկ հոգևոր մերժումը աշխարհում ստեղծել է մի վակուում (դատարկություն), որը ձեզնից շատերն արդեն իրենց սրտերի մեջ զգում են դրա ազդեցությունները: Ոչ մի բան այնպես չէ, ինչպես թվում է: Նյութական փառքը փայլում է արտաքինից՝ ցույց տալով իր լույսը նրանց, ովքեր ձգտում են հարմարավետության, որի ետևում միայն խավար է:

Ես այն լույսն եմ, որ պակասում է ձեր միայնակ շփոթեցուցիչ և ինչ-որ ձևով վախեցող կյանքերի մեջ: Ահա թե ինչու մոտ է ժամանակը, որ ներս մտնեմ և վերցնեմ պատասխանատվությունը: Դուք, զավակներս, պետք է ողջունեք դա և նախապատրաստվեք Իմ Մեծ Գթասրտության համար:

Դուք պետք է աղոթեք ձեր եղբայրների և քույրերի համար և բաց բազուկներով սպասեք՝ ողջունելու համար Իմ միջամտությունը: Դրական եղեք: Հուսով լի եղեք: Վստահ եղեք, որ նույնիսկ ամենակոշտացած մեղավորները կթեթևանան գալուստով **այդ մեծ իրադարձության՝ ամենակարևորը Իմ Խաչելությունից ի վեր:**

Ձեր սիրող փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կասկածները քեզ ավելի ուժեղ են դարձնում Իմ հանդեպ ունեցած քո սիրո մեջ

Չորեքշաբթի, 21 սեպտեմբերի, 2011թ, ժ 22:00

Ես գալիս եմ Հիսուսի անունով, ով եկավ մարմնով և դարձավ մարդ

Իմ թանկագին աղջիկ, դու հիմա այնքան մոտիկ ես Իմ սրտին, չնայած դրան՝ կարող ես այնքան հեռու զգալ: Երբեմն դու մտածում ես, թե անջատված են Ինձնից, այնինչ փաստորեն դու ավելի ես մոտեցել Ինձ միասնության մեջ:

Հիմա դու այնքան ուժեղ ես, աղջիկս, Ես կառուցում եմ քո վստահությունը, որպեսզի կարողանաս շարունակել հայտնել Իմ խոսքը մարդկությանը: Սա չափազանց կարևոր առաքելություն է: Քանի որ այս ժամանակներում միլիոնավոր դևեր են բաց թողնվել Սատանայի կողմից, նրանք գրոհում են քեզ վրա յուրաքանչյուր անկյունից: Առաջին մարդիկ, որոնց դևերը կօգտագործեն, կլինեն հավատացողները, ովքեր հերթ կկանգնեն, որ քեզ վրա քարեր նետեն:

Մինչ մարդկության հանդեպ Իմ Գթասրտության մեծ գործողությունն ավելի է մոտենում, նույնկերպ դևերը կփորձեն փակել ճշմարտության ճանապարհը և արգելել մարդկանց, լավ մարդկանց ներդնելու իրենց ժամանակը, որը պետք է Ինձ փրկելու համար Իմ այն զավակների կյանքը, ովքեր ընդհանրապես հավատ չունեն: Թույլ չտաս, որ դաժան զրպարտությունը, որն ավելի է ուժեղանում, հեռացնի քեզ Իմ աշխատանքից:

Ուշ դարձրու հիմա Իմ մարգարեությանը: Քանի որ յուրաքանչյուր մարդ, ով ապաշխարում է այս ժամանակ՝ յուրաքանչյուր մարդու համար երեք հոգի էլ կարող են փրկվել: Մտածիր դրա մասին այս կերպ: Օրհնությունները՝ հեղված այն մարդու վրա, ով թողություն է փնտրում, կտրվեն այդ մարդկանց ընտանիքներին: Յուրաքանչյուր հոգի, ով աղոթում է Ինձ հիմա և խնդրում Ինձ, որ փրկեմ իր ամենամոտ ընտանիքի անդամներին և ընկերներին, կստանա Իմ գթասրտությունը առատությամբ:

Աղոթքը ձեր փրկությունն է, զավակներս: Որքան շատ աղոթեք, այնքան Ես կբացեմ ձեր սրտերը և կբացահայտեմ Իմ ճշմարտությունը: Իմ ողորմությունը հիմա ձգվել է այնպես, ինչպես երբեք չի եղել նախկինում երկրի վրա: Այնուամենայնիվ, Ես չեմ կարող հեղել այդ հզոր շնորհները, մինչև դուք դրանք չխնդրեք Ինձնից:

Աղջիկս, իմացիր, որ մի չարություն, որը կսարսափեցնի քեզ, հիմա կերևա բարձրացող գրոհով այս աստվածային պատգամների վրա: Անտեսիր նրանց: Փակիր աչքերդ: Փակիր ականջներդ: Փոխարենը աղոթիր, որ այդպիսի հոգիները լուսավորություն տեսնեն:

Կասկածները, աղջիկս, փորձություններ են, որոնք զգում ես ոչ միայն դու, այլև Իմ սիրելի հետևորդները: Չնայած դրանք կարող են լինել անլուծելի, Ես թույլ եմ տալիս այդ կասկածները, որ դուք բոլորդ ավելի ուժեղանաք Իմ հանդեպ ունեցած ձեր սիրո մեջ:

Հանգստացեք հիմա, զավակներս: Ընդունեք Իմ խոսքը: Ապրեք ձեր կյանքն այնպես, ինչպես Ես սպասում եմ ձեզնից: Դրեք ձեր ընտանիքներն առաջին տեղում ամեն ինչից առաջ: Նրանց երբեք չպետք է մերժեք Իմ անունով: Աղոթեք հիմա ամբողջական վստահությամբ, և վստահ եղեք, որ Իմ մարգարեությունները կկատարվեն Իմ Հավիտենական Հոր հրամանով: Դրանք կկատարվեն Իմ Հոր կողմից նշանակված ճիշտ ժամանակին:

Երբեք մի մոռացեք, զավակներս, որ ապագայի համար կանխասացված բազմաթիվ գաղտնիքներ, որոնք տրվել եմ Իմ տեսանողներին. Մեղմացվել են աղոթքի միջոցով:

Շատ ու շատ էկոլոգիական աղետներից խուսափել եք Իմ Օրհնյալ Մորը ցույց տրված պաշտամունքի պատճառով: Նրա նվիրյալները կասեցրել են բազմաթիվ երկրաշարժեր, ջրհեղեղներ, ցունամիներ իրենց աղոթքների պատճառով: Աղոթքը կարող է չափազանց զորեղ լինել: Մի հոգու աղոթքն ու տառապանքը կարող է փրկել մի ազգ: Հիշեք սա:

Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին: Միմյանց փրկելու զորությունը ձեր ձեռքերում է, զավակներս: Մի մոռացեք, թե Ես նախկինում ինչ եմ ասել: Աղոթքը ձեր սպառազինությունն է աշխարհում չարի դեմ: Աղոթքը կարող է մեղմացնել գլոբալ աղետները: Շարունակեք աղոթել խաղաղության համար ձեր աշխարհում: Աղոթեք, նաև, որ հեշտ անցում կատարվի դեպի Նոր Դրախտ երկիրի վրա, որը սպասում է Իմ բոլոր զավակներին, ովքեր (թողություն) ազատագրում են փնտրում:

Ձեր սիրող Հիսուս

Բախտագուշակությունն Ինձնից չի գալիս

21 դեկտեմբերի, 2011թ, ժ. 23:30

Աղջիկս, այս ճամփորդությունը վեր է բարձրանում քեզ համար: Դու ավելի քան պատրաստ ես, քան կարծում ես: Մի վախեցիր, քանի որ քո առաքելությունը կօգնի փրկել մարդկության մեծ մասին: Քո դերը կանխասացվել է, և հարմարեցվում է Երկնքում: Դու մի գործիք ես: Ես քո Տերն եմ:

Դու հաջողությամբ կկատարես այս ամենասուրբ առաջադրանքը, քանի որ այն չի կարող ձախողվել և չի ձախողվի: Երբեմն դու չափազանց հուսալքված կզգաս, միայնակ ու արիությունից զուրկ: Ընդունիր դա: Քո տառապանքը փրկում է թանկագին հոգիների Ինձ համար իրենց մահվան պահին: Այդ հոգիները հիմա աղոթում են քեզ համար: Ուրախացիր, քանի որ եթե տեսնեիր այն սերը , որը հոսում է նրանցից, դու ուրախությունից լաց կլինեիր:

Երկնքում Իմ սրբերը առաջնորդում և պահպանում են քեզ չարից, այդ պատճառով քեզ շատ օգնություն (ժամանակավոր թեթևացում) է շնորհվում, որոնք զարմացնում և ուրախացնում են քեզ: Երբեք մի տատանվիր այս աշխատանքում: Սա երկրի վրա Իմ աշխատանքի ամենամեծ առաքելություններից մեկն է: Եղիր ուժեղ, քաջ և վստահ, բայց պահպանիր խոնարհությունը ամեն գնով: Բեմը պատրաստ է հիմա: Այն իրադարձությունները, որոնց մասին Ես խոսեցի, հիմա կծավալվեն: Երբ դրանք տեղի ունենան, քո վստահությունը նույնպես կվերահաստատվի: Քանի որ դու կունենաս անհրաժեշտ բոլոր ապացույցները: Այո, Սատանան միջամտել է այս աշխատանքին մի քանի անգամ: Ես դա թույլ եմ տվել , որովհետև այն վստահեցնում է, որ դու խոնարհ ես մնում ամբողջ ժամանակ:

Մի հրատարակիր ամսաթվերը: Մի հարցրու, թե ապագան ինչպիսին կլինի այն մարդկանց համար, ովքեր պահանջներ են ներկայացնում քեզ:

Բախտագուշակությունն Ինձնից չի գալիս: Միակ ապագան, որ Ես բացահայտում եմ, կապված է Իմ զավակների հոգևոր բարեկեցության հետ: Շնորհակալ եղիր, որ քեզ տրվել է այս ամենայուրահատուկ ընծան: Չնայած դու երբեք այն չես ցանկացել կամովին, դու ձուլվել ես այս աշխատանքի համար քո ամենաառաջին շնչի պահից և դու կավարտես Իմ ամենասուրբ խոսքը քո վերջին շնչում:

Գնա առաջ Իմ անվամբ և սիրով և ուրախությամբ քո սրտի մեջ օգնիր Ինձ փրկել ողջ մարդկության հոգիները:

Ես սիրում եմ քեզ, Իմ թանկագին աղջիկ: Ես ուրախանում եմ Իմ և Իմ Սիրելի Մոր հանդեպ ունեցած քո սրտանց սիրուց:

Քո Հիսուս

Կույս Մարիամ. Աղոթեք Իմ պաշտպանության համար աշխարհով մեկ

Հինգշբաթի 22 սեպտեմբերի, 2011թ, ժ 21:00

Զավակնս, դու պետք է խնդրես Իմ զավակկներին, որ աղոթեն Ինձ, որպեսզի Ես կարողանամ ծածկել նրանց Իմ ամենասուրբ թիկնոցով այս ժամանակներում: Խաբեբայի աշխատանքը ավելանում է և տարածվում ինչպես հրդեհ: Չար վերահսկողությունը, որ ամենուր տեսնում եք ձեր շուրջը, ղեկավարվում է նրա և նրա դևերի բանակի կողմից: Նրանք շատ տառապանք ու ցավ են առաջացնում աշխարհում: Իմ Ամենասուրբ Վարդարանն աղոթելը կկանգնեցնի նրան այն վնասը պատճառելուց, որը նա մտադիր է հասցնել աշխարհին:

Աղոթեք, զավակներս, որտեղ էլ որ լինեք, Իմ հատուկ պաշտպանության համար չարի դեմ:

Աղոթեք, թեթևացնելու համար Իմ Սիրելի Որդու տառապանքը, ով շատ է զգում ձեր սփոփանքի կարիքը: Նա ձեր աղոթքների կարիքն ունի, զավակներս, մինչ նորից սկսում է փրկել մարդկությանը իրենց մեղսալի և խոտորված կյանքից:

Աղոթեք հիմա ինչպես երբեք չեք աղոթել

Ձեր Օրհնյալ Մայր

Խաղաղության Թագուհի

Վիշտ Իմ այն զավակների կորստյան համար, ովքեր ոչինչ չեն ուզում ունենալ Ինձ հետ

Հինգշաբթի, 22 սեպտեմբերի, 2011թ, ժ 21:30

Իմ սիրելի աղջիկ, նախապատրաստիր քո ընտանիքը Նախազգուշացման համար: Խնդրիր ամենուր Իմ զավակներին, որ թողություն փնտրեն իրենց մեղքերի համար: Նրանց խնդրանքը պետք է լինի իրենց սրտից: Եթե ոչ, ապա նրանք կտառապեն **Քավարանի այրող ցավով** Իմ Աստվածային Գթասրտության Լուսավորման ընթացքում, երբ Ես երևամ ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ:

Սպասվող մաքրագործումը կթողնի այնպիսի մի հարատև և անմոռանալի ազդեցություն ձեր հոգիների վրա, որ դուք կմնաք Իմ կրծքի վրա հավիտյան:

Ձեզնից նրանք ովքեր գիտեն և սիրում են Ինձ, խնդրում եմ, նախապատրաստվեք հիմա Իմ ամենամեծ ընծայի համար: **Ունեցեք օրհնված մոմեր և Սուրբ Ջուր** և պատարաստ եղեք, որպեսզի կարողանաք միանալ Երկնքի սրբերի աղոթքներին՝ օգնելու համար ազատագրել Իմ բոլոր զավակների հոգիները աշխարհով մեկ:

Առաջին անգամ ձեր կյանքի ընթացքում **դուք իսկապես միայնակ կլինեք Իմ ընկերակցության մեջ:** Առանց որևէ ձայնի դուք ականատես կլինեք իմ Խաչելությանը, իսկ չհավատացողները վերջապես կհասկանան մարդկության համար Իմ տառապանքի ճշմարտությունը:

Թույլ տվեք Ինձ նախապես գրկել ձեզ, զավակներս: Թույլ տվեք Ինձ տալ ձեզ արիությունն ու զորությունը, որ Ինձ ավելի շատ հոգիներ բերեք: Ես ձեր սիրո կարիքն ունեմ: **Իմ վերքերը թարմ են (բաց են):** Իմ վիշտը իր գագաթնակետին է հասել այն բազմաթիվ հոգիների կորստյան ցավից, ովեք չեն ցանկանում ոչինչ ունենալ Ինձ հետ:

Ես լքված և միայնակ եմ զգում: Օգնեք Ինձ, զավակներս, փրկել նրանց ժամանակին: Չնայած Իմ Գթասրտության մեծ գործողությունը աստվածային լույս կբերի աշխարհին մի այնպիսի ուժգնությամբ որ ձեր շունչը կկտրվի, այն կլինի նաև վշտի ժամանակ նրանց համար, ովքեր չեն կարողանա դիմանալ այդ շոկին:

Խնդրում եմ մի անհանգստացեք : Ես գալիս եմ մեծ սիրով և կարեկցանքով ձեր բոլորիդ հանդեպ: Ես ձեզ սիրում եմ, և այդ պատճառով է, **որ հիմա Ես առաջ եմ գալիս, փրկելու համար ձեզ այն չար գործողություններից,** որոնք կատարվում են գլոբալ իշխանությունների կողմից, ովքեր ցանկանում են նվազեցնել աշխարհի բնակչությունը: Նրանք ցանկանում են անել դա վերահսկման միջոցով: Ես նրանց թույլ չեմ տա անել այդ: Իմ Հայրը սպասում է: Եթե մարդն ընդունի այն մեղքերը, որոնցում նա մեղավոր է, ապա աշխարհը կդառնա խաղաղության և սիրո մի վայր: Եթե նա դաս չքաղի Նախազգուշացումից, նա չի խնայվի: Այդ ժամանակ է, որ Իմ Հոր ձեռքը կիջնի:

Ես Հիսուս Քրիստոսն եմ

Ողջ մարդկության Թագավորն ու Փրկիչը

Հայր Աստված. Հակաքրիստոսը և նոր համաշխարհային արժույթը (դրամական համակարգը)

Ուրբաթ, 23 սեպտեմբերի, 2011թ, ժ 21:30

Աղջիկս, չնայած աշխարհը վախենում է նախազգուշացումից, նրանք պետք է ընդունեն, որ Հայտնության Գրքում պարունակվող մարգարեությունների ժամանակը հասել է: Հիմա Սուրբ Եկեղեցու վիճակը վտանգի տակ է, ինչպես Իսրայելի պետության վիճակը: Մարգարեությունները կսկեն կատարվել ե ըբաշխարհը կվերահսկվի Հակաքրիստոսի կողմից, ով կփորձի վերահսկել ձեզ նոր համաշխարհային արժույթի միջոցով: Երբ և եթե դուք վերահսկվեք այս ձևով, ապա դուք կվերահսկվեք նաև բոլոր մյուս ձևերով:

Նախազգուշացումը կկանգնեցնի դա և այլ չարագործություններ, ոնք պլանավորված են գլոբալ ուժերի կողմից և վեր են Իմ զավակների հասկացողությունից ամբողջ աշխարհով մեկ, ովքեր անմեղ զոհեր են որսախաղում: Բայց դա ձեր պատրաստածը չէ, Ես կպաշտպանեմ ձեզ Իմ արդարադատության ձեռքով:

Ելեք զավակներս, և կռվեք աղոթքի միջոցով այս չար հաջորդականության դեմ: Հենց այս պահին նյութվողղ համաշխարհային վերահսկողությունն ու հալածանքը կարող է կասեցվել աղոթքի միջոցով: Ձեզնից ոչ բոլորը կարող են փրկվել, կամ կփրկվեն, այսպիսին է այն մամլիչը, որը Հակաքրիստոսը կդնի ձեզ վրա:

Զավակներս, Սատանան երբեք չի հաղթի: Նա չունի այդ զորությունը, և մինչ հիմա նրա սեղմումը սկսում է թուլանալ, նա իր հետ քարշ կտա որքան կարող է շատ հոգիներ դեպի դժոխքի փոսերը: Ես խորը վշտով ողբում եմ Իմ գեղեցիկ արարչության և Իմ այդ թանկագին հոգիների համար: Ոհ, եթե միայն նրանք լսեն ճշմարտությունը:

Գիտական գնահատումը ոչնչություն է, քանի որ ոչ մի գիտություն չի փոխարինի Իմ Աստվածային Թագավորության իրականությանը: Երկրի վրա ոչ մի մարդ երբեք չի կարող պատկերացնել այն գեղեցկությունը և հրաշքը, որը սպասում է ձեզ բոլորիդ, քանի որ այն աննկարարգելի է մարդկային տերմիններով:

Շուտով դուք կհասկանաք այն պլանները, որոնք Ես ունեմ աշխարհը Խաբեբայի ձեռքերից փրկելու համար:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և պաշտպանում եմ Իմ հետևորդներին բոլոր էտապներում ցանկացած պլանավորված հետապնդման ընթացքում:

Ինձ նայեք: Բացեք ձեր բազուկները և թույլ տվեք Ինձ պահել և պաշտպանել ձեզ բոլորիդ:

Իմ զավակները, ովքեր հավատում են Ինձ, վախենալու ոչինչ չունեն:

Ձեր սիրող Արարիչ

Ամենաբարձրյալ Աստված

Հայր Աստված

Բացատրեք դժոխքի սարսափը նրանց, ովքեր կույր են Սատանայի գոյության հանդեպ

Շաբաթ, 24 սեպտեմբերի, 2011թ, ժ 22:15

Իմ սիրելի աղջիկ, ինչու՞ է մարդը համառում մերժել դժոխքի գոյությունը:

Իմ զավակներից շատերը, ովքեր իրենց համարում են ժամանակակից հայացքների տեր, հրապարակայնորեն մերժում են դժոխքի գոյությունը, դրա հետ մեկտեղ հայտարարելով Աստծո՝ Հավիտենական Հոր հանդեպ հավատը: Նրանք սխալ ուղու վրա են տանում Իմ զավակներին, երբ օգտագործում են այն պատճառաբանությունը, թե Աստված ամենագթառատն է: Համոզելով Իմ զավակներին, թե բոլորն էլ գնալու են երկինք, նրանք ակամա պատասխանատու են դառնում նրանց համար, ովքեր հետևում են իրենց սխալ ուսմունքին:

Սատանան գոյություն ունի, և հետևաբար գոյություն ունի նաև դժոխքը: Դժոխքը մի վայր է, ուր Սատանան տանում է այն հոգիներին, ովքեր հավատարմություն են ցույց տալիս նրան երկրի վրա: Սրանք այն հոգիներն են, ովքեր մի կողմ են հրում Աստծո մասին բոլոր մտքերը և քարոզում են չար գործողությունների տարածումն աշխարհում: Որոշ դեպքերում մարդիկ կարող են նույնիսկ վաճառել իրենց հոգիները Սատանային հարուստ, հանրահայտ և իշխանություն ունեցող կյանքի փոխարեն: Երաժշտության արդյունաբերության մեջ շատերն են այդ բանն արել տարիներ շարունակ: Շատ քիչ են մտածում այն մասին, թե հաճախ ինչպիսի խմբային հանդիսություններով է նրանց հավատարմությունը տրվում՝ կատարվելով գաղտնի պաշտամունքի միջոցով:

Մյուս կողմում կան այնպիս մարդիկ, ովքեր ապրում են իրենց կարծիքով հոգսերից ազատ զվարճությամբ լի կյանքով, ուր նրանք հարատև ձգտում են ինքնաբավարարման: Նրանք մի քանիսն են այն հոգիներից, ովքեր, երբ հայտնվում են դժոխքի դարպասների մոտ, ցնցվում են և չհավատալով թափահարում գլուխները այն ճակատագրի հանդեպ, որն սպասվում է իրենց: Նրանք չեն կարողանում ընդունել, որ այդ սարսափը, որի դեմ կանգնել են, իրենց սեփական ստեղծածն է: Երկրի վրա նրանց տրված ազատությունը չարաշահվել է հանուն ամեն ինչի, որ վիրավորում է Աստծուն:

Զավակներս, խնդրում եմ բացատրեք դժոխքի սարսափը նրանց, ովքեր կույր են ղՍատանայի գոյության հանդեպ: Ոչինչ որ նրանք ծիծազում են կամ մեղադրանք

նետում ձեզ վրա: Ձեր պարտականությունն է նախազգուշացնել նրանց այն սարսափելի ճակատագրի մասին, որը սպասում է ցանկացած խեղճ հոգու, ով այնտեղ է վերջացնում իր կյանքը:

Աթեիստներ, ովքեր մահվան մահճում հավատում են, թե իրենց տառապանքը կավարտվի վերջին շնչի հետ, լսեք Ինձ հիմա: Ձեզնից նրանք, ովքեր այս երկրի վրա մերժում են Աստծո գոյությունը, չնայած այն բանին, որ ձեզ բացահայտվել է ճշմարտությունը ձեր կյանքի ընթացքում, դժոխքի կրակների մեջ ձեր տառապանքը կլինի միայն հավիտենական դատապարտության սկիզբը: Դուք, Իմ խեղճ հոգիներ, որ ծանր մեղք եք գործում ձեր սեփական ազատ կամքի միջոցով, մերժում եք Ինձ: Դրա փոխարեն դուք ընտրում եք Սատանային: Նա սպասում է ձեզ մահվանից հետո: Ինձ ոչ մի տեղ չեք գտնի: Քանի որ այդ ժամանակն արդեն չափազանց ուշ կլինի ձեզ Իմ գթասրտությունը ցույց տալու համար:

Աղոթեք, աղոթեք բոլորդ, որպեսզի միասին մենք կարողանանք փրկել այդ հոգիներին: Սատանային չպետք է թույլ տրվի գողանալ նրանց հոգիները: Օգնեք Ինձ փրկել նրանց, քանի դեռ նրանք ապրում են երկրի վրա:

Ձեր սիրող Հիսուս

Հիմա Ես մարգարեներ եմ ուղարկել աշխարհ

Շաբաթ, 25 սեպտեմբերի, 2011թ, ժ 11:45

Իմ սիրելի աղջիկ, թե ինչպես համոզել երիտասարդներին և նրանց, ովքեր ընկղմված են զբաղված անիմաստ կենսակերպով, այն մարտահրավերն է, որը Ես ներկայացնում եմ քեզ:

Քո գործը պետք է լինի ժամանակակից հաղորդակցության միջոցների բոլոր տեսակ հնարավորությունների օգտագործումը, որ համոզես ժամանակակից երիտասարդ հասարակությանը Իմ գոյության ճշմարտությունը: Ես խոստանում եմ, որ այն բոլոր երիտասարդները, ում տրվում է ճշմարտությունը այդպիսի միջոցներով, կզգան Իմ ներկայությունը, հենց որ կարդան Իմ պատգամները: Տարածիր և դարձի բեր հիմա, աղջիկս, աշխարհի յուրաքանչյուր անկյունում: Սա է այն դերը, որի համար դու ընտրվել ես: Իմ խոսքն այս ձևով տարածելով (էլեկտրոնային տարբերակ), ավելի շատ մարդկանց կարելի է հասնել: Օգտագործիր ինտերնետը և մասսայական լրատվամիջոցները: Իմ հետևորդները, ովքեր ներգրավված են, ժամանակին կտարածեն ճշմարտությունն ամենուրեք:

Այս առաքելությունը նոր է սկսվել: Հիմքերը դրվել են: Հիմա, Իմ Հոր հաստատած կատարյալ ժամանակին աշխարհն արդեն ուշադրություն կդարձնի այս աստվածային պատգամներին:

Ես խոստացել էի, որ կվերադառնամ: Ճանապարհը հարթելու համար Ես հիմա աշխարհ եմ ուղարկել Իմ մարգարեներին, ներառյալ քեզ՝ աղջիկս: Շատերն են հիմա արձագանքում Իմ կոչին աշխարհի յուրաքանչյուր երկրում: Չնայած նրանց ձայնը ցածր է: Ժամանակի ընթացքում նրանց նույնպես կլսեն, ուստի նրանք կկարողանան հոչակել Իմ Փառքը՝ ազդարարելու համար Իմ վերադարձը:

Առջևում որոշ ժամանակ կա, նախքան այդ փառապանծ վերդարձը տեղի կունենա: Մինչ այդ նախապատրաստիր Իմ զավակներին: Նախազգուշացումը դարձի կբերի միլիոնավոր մարդկանց, սակայն դա միայն սկիզբն է: Դրանից հետո ընկած ժամանակահատվածը անց կկացվի և պետք է անցկացվի հոգիներ սնուցելով, վստահեցնելու համար, որ նրանք ինչպես հարկն է նախապատրաստված լինեն, այնպես որ հարմար լինեն մտնելու Երկրի վրա Իմ Հոր Նոր Դրախտը:

Դուք շատ բանի պետք է դիմանաք, զավակներս, բայց, ոհ, այնքան շատ բան կա ակնկալելու, երբ ձեզ հասանելի լինի երկրի վրա խաղաղության, ուրախության և երջանկության այդ նոր դարաշրջանը: Հիմա կոչ է արվում տոկունության: Արիություն և կորով կտրվի նրանց, ովքեր կանչում են Իմ Սուրբ Հոգուն: Այդ ժամանակ դուք, Իմ բանակ, վեր կբարձրացնեք նրանց հոգիները, ովքեր թափառում են Ինձնից հեռու: Թույլ չտաք այդ հոգիներից ոչ մեկին շեղվել՝ կորչելու անապատի մեջ: Աղոթեք նրանց համար: Նրանց սեր և հասկացողություն ցույց տվեք: Երբեք նրանց մի ասեք, թե իրենք դատապարտված են, ոչ էլ մեղադրեք մեղքի մեջ, որովհետև դա մի մեծ վիրավորանք է Իմ աչքին: Դրա փոխարեն եղեք հաստատուն, բայց բարի: Պարզապես ասեք նրանց ճշմարտությունը: Դրանից հետո արդեն իրենց գործը կլինի (ընդունել կամ չընդունել):

Դուք չեք կարող հաղթել բոլոր հոգիներին, զավակներս: Դուք կարող եք անել միայն ձեր լավագույնքը: Ձեր սիրող Հիսուս

Ներըմբռնում Իմ Խաչելության մասին

Երկուշաբթի, 25 սեպտեմբերի, 2011թ, ժ 23:45

Իմ սիրելի աղջիկ, այս գիշեր, առաջին անգամ, Ես տվեցի քեզ ներըմբռնում Իմ Խաչելության վերաբերյալ, որը զարմացրեց քեզ; Չնայած այն, ինչ Ես բացահայտեցի քեզ, կարևոր է:

Շատ գաղջ հավատացողներ կարծում են, թե երբ Ես խաչվեցի, ինչ-որ ձևով, քանի որ Ես Իմ Հոր Որդին եմ, Ես չտառապեցի այն ֆիզիկական ցավերով, որը մարդիկ են զգում: Նրանք նաև կարծում են, որ Իմ աստվածային կարգավիճակի պատճառով Ես չէի վախենում, ոչ էլ կարող էի վախենալ, այն զորության պատճառով, որը ստացել էի Իմ Հորից:

Ճշմարտությունը բոլորվին այլ է: Ես չափազանց միայնակ և վախեցած էի զգում: Պարտեզում անցկացրած Իմ ժամանակը սարսափեցուցիչ էր Իմ մարդկային բնության

պատճառով: Հիշիր, որ Ես եկա մարմնով: Ես ունեի ցավի և վշտի այն նույն զգացողությունները, ինչպես ցանկացած մարդ: Իմ ժողովուրդը չի հասկանում սա:

Ես լքված էի զգում Իմ Հավիտենական Հոր կողմից, իսկ Իմ առաքյալները չէին հասկանում դա, և ոչինչ չարեցին Ինձ հանգստացնելու համար այդ սարսափելի ժամերի ընթացքում:

Երբ Ես կանկգնեցի Ինձ մահապատժի ենթարկողների առջև, Ես վախից դողում էի և հազիվ էի կարողանում պատասխանել նրանց մեղադրանքներին: Ես զգում էի այնպես, ինչպես կզգար ցանկացած մարդկային արարած, երբ կանգնում է վայրագ մահապատժի առջև: Իմ արժանապատվությունը մնաց անապական, այն զոհաբերության պատճառով, որը Ես գիտեի, որ պետք է կատարեմ մարդկության համար: Պարադոքս է, գիտեմ, բայց Ես զգում էի նաև սեր և ուրախություն Իմ սրտի մեջ այդ տառապանքի ընթացքում: Քանի որ գիտեի, որ Իմ մահը փրկելու էր ձեզ, զավակներս, հավիտենության համար: Սակայն Ես հիմա ցանկանում եք որ դուք ինքներդ ձեզ հարցնեք. **Քանի՞սը կարող են փրկվել խաչի վրա Իմ մահվան շնորհիվ:** Ո՞վ է ցանկանում փրկվել, և արդյո՞ք նրանք իսկապես հասկանում են դրա կարևորությունը:

Իմ մահվան պատճառով նրանք կարող են հիմա դրախտ մտնել: Նրանք գիտե՞ն արդյոք, որ դա կլինի նաև իրենց սեփական ընտրության միջոցով և այն իրենց տրված ազատ կամքի միջոցով: Հավատքը Հայր Աստծո հանդեպ պետք է առաջնահերթ լինի ձեզ համար: Եկեք Ինձ մոտ առաջին հերթին, և Ես ձեզ կառաջնորդեմ Նրա մոտ: Ապրեք Սուրբ Աստվածաշնչի միջոցով ձեզ տրված Իմ ուսուցումներով: Սիրեք ձեր հարևանին: Պարզ պահեք ձեր հավատը: Պահեք ձեր հավատի հավասարակշռված տեսակետ: Սիրեք Ինձ: Աղոթեք Ինձ: Պաշտեք Ինձ: Թույլ տվեք Ինձ սիրել ձեզ Իմ քնքուշ սրտով, որպեսզի Իմ Աստվածային Ներկայությունը կարողանա լցնել ձեր փոքրիկ թանկագին հոգիները: Ես ձերն եմ: Դուք Իմ զավակներն եք: Դա այնքան պարզ է:

Որքան շատ աղոթեք, այնքան կմոտենաք: Այնքան ավելի կմիահյուսվի ձեր սիրը Իմ Սրտին:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ

Հայր Աստված. Սատանայի օրերն արդեն հաշված են այդ երկրի վրա

Հինգշաբթի, 29 սեպտեմբերի, 2011թ, ժ 20:15

Ես Ալֆան եմ և Օմեգան: Ես Հայր Աստվածն եմ:

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը մոտենում է որ աշխարհն ականատես լինի Իմ թանկագին Որդի Հիսուս Քրիստոսի կողմից մարդկությանը ցույց տրվելիք գթասրտությանը:

Չարի շատ ուժեր են վխտում այն կորած հոգիների կողմից, ովքեր հավատարմության երդում են տալիս Խաբեբային՝ Սատանային: Նրանք նույնպես նախապատրաստված են Նախազգուշացմանը և մեծամտորեն հավատացած են, թե Սատանայի կողմից իրենց խոստացած զորությունը կվարի նրանց դեպի իրենց կողմից պատրաստված մի նոր աշխարհիկ դրախտ: Սա Սատանայի կողմից իրագործված ամենամեծ սուտն է, որով նրանք գայթակղվել են: Նրանց հոգու խավարը նշանակում է, որ իրենց սրտերը գթասրտություն ցույց չեն տա նրանց հանդեպ, ովքեր հավատում են Ինձ՝ Աստծուն, ամեն բանի արաչին: Այնուամենայնիվ, նրանց ձեռքում եղած ուժը հիմա ավելի թույլ է:

Սատանայի օրերը համարյա ավարտված են այս երկրի վրա: Սակայն նա՝ Սատանան, չի հանգստանա, մինչև ծուղակի մեջ չգցի սխալ ճանապարհով գնացող և մոլորված միլիոնավոր հոգիների: Աղոթիր նրանց համար, աղջիկս, քանի որ նրանք աննպատակ են: Նրանք մասնատված են և իրենց խուճապի միջոցով կփորձեն ամեն ինչ, որ կարող են, որ վերահսկեն Իմ զավակներին իրենց երկրային կարողությունների միջոցով:

Ուշ դարձրու հիմա Իմ խոսքին: **Մարդկությունը զորություն չունի:** Միակ զորությունը կլինի աղոթքի միջոցով, որը միակ զենքն է այդ չար մարդկանց դեմ: Նրանք մահացու մեղքով վիրավորել են Ինձ և Իմ թանկագին արարչությունը, և դրա համար նրանք կտառապեն: Հիմա այնքան շատ իրադարձություններ կծավալվեն չհավատացող աշխարհի աչքերի առջև: Այնքան շատերն Իմ զավակներից ապշած կմնան և շոկի մեջ, երբ **զգան Քավարանի և Դժոխքի տառապանքները:**

Նախազգուշացման ընթացքում և դրանից հետո բոլոր մեղավորները կունենան այն փորձառությունը, թե իրենք ինչ կզգային, եթե կորցնեին իրենց կյանքը: Մեղքի մեջ գտնվողները կտառապեն այն նույն **այրող մաքրագործումը,** որով տառապում են քավարանում գտնվող հոգիները, ովքեր սպասում են Իմ Փառահեղ Թագավորություն մտնելուն: Մահացու մեղքի մեջ գտնվողները կզգան **Դժոխքի խորը հուսահատությունն ու խավարը:** Այս տառապանքը շատ երկար չի տևի, և նրանք նորից կզգան այն աշխարհը, որի փորձառությունն ունեցել են Նախազգուշացումից առաջ: Այդ աշխարհը չափազանց տարբեր կլինի նախորդից: Քանի որ վերջապես նրանց աչքերը կբացվեն **Դրախտի, Դժոխքի և Քավարանի ճշմարտության հանդեպ:** Դրանից հետո նրանք ստիպված կլինեն ընտրել, թե որ ճանապարհով են գնալու: Դու կարծում ես, աղջիկս, թե նրանք կհետևեն դեպի Իմ Աստվածային սերը և կարեկցանքը տանող ճանապարհին, բայց այնքան շատ կարծրացած մեղավորներ այդպես չեն վարվի: Այնքան թունավորված կլինեն նրանք Խաբեբայի կողմից տրված կեղծ դատարկ խոստումներով, որ ետ կդառնան՝ հետևելով այդ ուղղությանը: Նրանք կկռվեն, կմարտնչեն և **գժոխքի խորքերից արձակված՝ Սատանայի կողմից**

սանձազերծված դևեի ազդեցության միջոցով, թույլ կտան որ իրենց հոգիները սուզվեն գլոբալ տիրապետության չար պլանի մեջ:

Սա մի հրատապ կոչ է ուղղված ձեզ բոլորիդ՝ սրտանց թողություն փնտրելու ձեր գահավեժ կյանքերի համար: Դուք դա անելու համար ժամանակ ունեք, բայց շուտով արեք դա:

Նախապատրաստվեք գթասրտություն խնդրելու համար: Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին: Այդ մեծ իրադարձությունը Իմ բոլոր զավակների բարօրության համար է: Ուստի, **վախենալու փոխարեն թույլ տվեք, որ Իմ սերը պարուրի ձեզ,** ձեզ հզորացնելու համար: Այս ձևով դուք կդիմանաք այն տառապանքին, որը սպասվում է:

Ձեր սիրող Հավիտենական Հայր

Աստված Ամենաբարձրյալ

Նախազգուշացման հետևանքները

ՀԻնգշաբթի, 29 սեպտեմբերի, 2011թ, ժ 20:45

Իմ սիրելի աղջիկ, մինչ Նախազգուշացումը մոտենում է, խնդրում եմ ասա Իմ սիրելի հետևորդներին, որ աղոթեն և ուրախանան շնորհակալությամբ այն մեծ գթասրտության համար, որն Իմ Հավիտոնական Հայրը շնորհել է մարդկությանը:

Մաքուր սիրո այդ փառահեղ գործողության միջոցով է, որ մարդկության ավելի շատ մասը կարող է փրկվել, որպեսզի վայելի երկրի վրա խաղաղության ժամանակաշրջանը: Շնորհակալ եղեք, որ ապրում եք այս ժամանակներում, քանի որ միլիոնավոր մարդիկ ձեզնից կփրկվեն, ովքեր այլապես երբեք չէին մտնի Դրախտի դարպասներից ներս:

Նախապատրաստություններն ավարտված են: Նախապատրաստեք ձեր տները օրհնված մոմորով և ջրի ու սննդի պաշարով, որ բավարարի մի երկու շաբաթվա համար: Հետևանքները դժվարին կլինեն, բայց դուք չպետք է վախենաք: Դրա փոխարեն թեթևություն զգացեք, քանի որ այդ տառապանքները կառաջարկվեն որպես շնորհակալություն հավիտենական կյանքի համար, որը հիմա տրվում է Իմ թանկագին հոգիներին, ովքեր գրկում են այս մեծ ընծան:

Խաղաղության մեջ եղեք: Վստահեք Ինձ, քանի որ հիշեք, Ես ձեր Փրկիչն եմ և ամեն պահի պաշտպանություն եմ առաջարում այդ թանկագին հոգիներին: Ես քայլում եմ ձեզ հետ:Ես ուղղություն եմ տալիս ձեզ: Ես բռնում եմ ձեր ձեռքերը քնքուշ սիրով: Դուք Իմն եք, և Ես երբեք չեմ հեռացնի ձեզ Իմ Սուրբ Սրտից: Դուք, Իմ հետևորդներ, շրջապատված են այն շնորհներով, որոնց կարիքն ունեք Նախազգուշացման ընթացքում գոյատևելու համար:

Ձեր սիրող Հիսուս

Փրկիչ և Ազատարար ողջ մարդկության

Կարծրացած հոգիների համար հեշտ չի լինի Նախազգուշացումը

Ուրբաթ, 30 սեպտեմբերի, 2011թ, ժ 21:15

Իմ սիրելի աղջիկ, հոգիներ փրկելու Իմ առաջադրանքը հիմա ինտենսիվորեն աճում է:

Խնդրում եմ նախազգուշացրեք որքան հնարավոր է շատերին, որ նախապատրաստեն իրենց հոգիները մինչև Նախազգուշացումը:

Տեղեկացրեք բոլոր այն **քահանաներին, մինանձնուհիներին, եպիսկոպոսներին** և մյուս հոգևոր կենտրոններին/հարանվանություններին, ովքեր հավատում են Իմ Հավիտենական Հորը, որ լսեն Իմ խոսքը: Իմ զավակներից այնքան շատերն են այնպիսի խավարի մեջ, որ Իմ աստվածային փառքի լույսը կվիրավորի նրանց հոգիները: Նրանք իրական ցավ կզգան, քանի որ ի վիճակի չեն լինի դիմանալ գթասրտության այս մեծ գործողությանը:

Ոմանք զարմանքով ժպտում են այս Սուրբ պատգամների վրա: Սա Ինձ տխրեցնում է: Ոչ թե նրա համար որ նրանք չեն հավատում, որ այդ Ես եմ խոսում իրենց հետ այս ձևով, այլ որովհետև նրանք չեն ցանկանում հավատալ Ինձ: Քանի որ դուք բոլորդ, ովքեր անհանգստացած եք ձեր սիրելիների կյանքի համար, խնդրում եմ աղոթեք, որ Նախազգուշացման ընթացքում սպասվող մաքրագործումը նրանց վերջապես բերի Իմ սրտի մեջ:

Ես խնդրում եմ, որ հիմա Իմ բոլոր հետևորդները պաշտպանեն իրենց Սատանայից: Նրանք պետք է իրենց տան յուրաքանչյուր անկյունում Սուրբ Ջուր ցանեն, կրեն Բենեդիկտյան խաչ և իրենցից մոտիկ պահեն Վարդարանի հատիկները: Աղոթեք նաև սուրբ **Միքայել հրեշտակապետին:** Սատանան և նրան հետևող բանակը ամեն ինչ կանեն ձեզ համոզելու համար, թե այդ Ես չեմ խոսում: Սատանան և նրա դևերը կսկեն տանջել ձեզ **և սարսափելի կասկածներ դնել ձեր մտքերի մեջ:** Դուք, զավակներս, կարող եք կանգնեցնել նրան, հետևով Իմ հրահանգներին: Տխուր է, սակայն նա կշրջի թույլ հոգիների մտքերը, որ ամբողջապես մերժեն Ինձ:

Կարծրացած հոգիների համար Նախազգուշացումը հեշտ չի լինի: Նրանք կհամաձայնվեն, թե ինչ ձևով են վիրավորել Ինձ: Նույնիսկ դժոխքի այրող կրակները, որոնք նրանք կզգան Նախազգուշացման ժամանակ, ամբողջապես չեն սրբի Իմ գոյության հանդեպ նրանց ունեցած կասկածները:

Շատերը ստեր կտարածեն Նախազգուշացման մասին դրա տեղի ունենալուց հետո: Նրանք՝ հեթանոսները, ովքեր Սատանայի ստրուկներն են, կստեղծեն մի սուտ, որը

կտարածեն ամենուր: Գիտական մեկնաբանություններ առաջ կքաշվեն այդ իրադարձությունը բացատրելու համար: Նրանք չեն ցանկանում լսել ճշմարտությունը: Նրանց համար պետք է աղոթել: Սատանան այնքան ամուր է բռնել աշխարհը, որը Իմ Անունը նույնիսկ ցածրաձայն չի ասվի հրապարակայնորեն: Երկրի վրա Իմ գոյության մասին քննարկումը կթվա խոսակցության ծանր թեմա:

Այսօր Իմ անունը հիմանկանում օգտագործվում է վատ խոսքի միջոցով, կամ էլ ավելի վատ կերպով՝ հայհոյանքի ժամանակ: Բայց լսեք Ինձ հիմա: Իմ անունը կլսվի և մեկ անգամ ևս կընդունվի Նախազգուշացումից հետո նրանց կողմից, ովքեր դարձի կգան: Հետո Իմ անունը կօգտագործվի, երբ նրանք՝ Իմ զավակները, աղոթեն Ինձ:

Ձեր սիրող Հիսուս